Ուսուցչի ձեռնարկ

1

Ինչպե՞ս կարող եմ իմանալ, որ ճշմարիտ քրիստոնյա եմ:

Անձնական փոխհարաբերություն զարգացնել Աստծո հետ

Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար

Ինչպե՞ս կարող եմ իմանալ, որ ճշմարիտ քրիստոնյա եմ

Անձնական փոխհարաբերություն զարգացնել Աստծո հետ:

Հեղինակ՝ Դեյվիդ Բեթթի և Սալլի Գիրգիս

Ուսուցչի ձեռնարկ

5-րդ խմբագրում

ԽՈՒՆՔՀ
Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար

Ինչպե՞ս կարող եմ իմանալ, որ ճշմարիտ քրիստոնյա եմ

Անձնական փոխհարաբերություն զարգացնել Աստծո հետ:

Ուսուցչի ձեռնարկ

5-րդ խմբագրում

Հեղինակ՝ Դեյվիդ Բեթթի և Սալլի Գիրգիս

Եթե այլ կերպ նշված չէ, աստվածաշնչյան բոլոր մեջբերումներն արված են Trinitarian Bible Society (Tyndale House, Dorset Road, London, SW19 3NN, England)-ի կողմից կատարված ժամանակակից թարգմանությունից:

Բոլոր իրավունքները, ներառյալ ներկայացնելու կամ որևէ ձևով՝ ամբողջական կամ մասնակի, վերատպելու, պաշտպանված է Համաշխարհային հեղինակային իրավունքի կոնվենցիայով և մյուս կոնվենցիաներով, պայմանագրերով ու հռչակագրերով:

Այս դասընթացը սկզբում լույս է տեսել անգլերեն, *How Can I Know I am a Christian?* 5th edition վերնագրով:

Այս նյութը կարող է վերատպվել և բաժանվել, որպեսզի օգտագործվի Թին Չելենջի, նմանատիպ ծրագրերի, տեղական եկեղեցիների, դպրոցների, այլ կազմակերպությունների և անհատների համար: Այս նյութերը նաև կարող են ներբեռնվել հետևյալ կայքից՝ www.iTeenChallenge.org: Նրանք, ովքեր կցանկանան վաճառել այս նյութերը, պետք է գրավոր թույլտվություն ստանան Գլոբալ Թին Չելենջից:

Այս դասընթացը *Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար* դասընթացի մի մասն է, որը մշակվել է, որպեսզի օգտագործվի եկեղեցիներում, բանտային ծառայություններում, Թին Չելենջում և նմանատիպ ծառայություններում, որտեղ աշխատում են նորադարձ քրիստոնյաների հետ: Դասընթացի մեջ մտնում են՝ Ուսուցչի ձեռնարկը, Ուսանողի ձեռնարկը, Ուսուցման ուղեցույցը, Ստուգարքը և Վկայականը: Դրանց մասին առավել տեղեկություններ ստանալու համար դիմել.

Global Teen Challenge
PO Box 511
Columbus, GA, 31902 USA
Email: gtc@globaltc.org
Web: www.globaltc.org
www.iTeenChallenge.org

ԽՈՒՆՔՅ
Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար

Վերջին անգամ վերանայվել է. 02-2019

Ինչպե՞ս կարող եմ իմանալ, որ ճշմարիտ քրիստոնյա եմ

Այս դասընթացը տալիս է ընդհանուր պատկերացում, թե ինչ է նշանակում լինել ճշմարիտ քրիստոնյա, և ինչպես կարելի է վստահ լինել, որ Աստծո զավակ ես: Ահա այս դասընթացի համառոտ ներածությունը:

1

Գլուխ 1. Ինչպե՞ս է մարդը ճշմարիտ քրիստոնյա դառնում:

Դասընթացի այս բաժնում մենք ուսումնասիրում ենք, թե ինչ ձևով են միտքը, կամքը և զգացմունքները ներգրավված ճշմարիտ քրիստոնյա դառնալու գործընթացի մեջ:

2

Գլուխ 2. Որտեղի՞ց կարող ես փաստարկներ վերցնել, որ դու ճշմարիտ քրիստոնյա ես:

Այս գլխում մենք հետազոտում ենք, թե որտեղ դու կարող ես գտնել փաստարկներ, որոնք որոշում են ճշմարիտ քրիստոնյա լինելը: Աստվածաշունչը, Սուրբ Հոգին և կյանքի փոփոխությունները հիմնական քննարկվող ասպարեզներն են:

3

Գլուխ 3. Ի՞նչ է նշանակում անձնական փոխհարաբերություն ունենալ Հիսուսի հետ:

Հիսուսի հետ անձնական փոխհարաբերություն զարգացնելը շատ նորադարձ քրիստոնյաների համար աճի դժվարին ասպարեզ է: Մենք հետազոտում ենք մի քանի գործնական ձևեր, թե ինչպես կառուցել մտերիմ փոխհարաբերություն Հիսուսի հետ:

4

Գլուխ 4. Ի՞նչ կարող եմ անել ճշմարիտ քրիստոնյա լինելու իմ կասկածների հետ:

Նորադարձ քրիստոնյաներից շատերն են կասկածներ ունենում, թե արդյո՞ք իրենք ճշմարիտ քրիստոնյա են: Մենք այստեղ քննարկում ենք, թե որտեղից են գալիս կասկածները, և որոնք են դրանց պատճառները: Մենք նաև հետազոտում ենք, թե ինչպես կարող է մարդն ազատվել այդ կասկածներից:

Ինչպե՞ս կարող եմ իմանալ, որ ճշմարիտ քրիստոնյա եմ դասընթացը կարող է օգտագործվել որպես ներածական դասընթաց ***Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար*** շարքի մյուս բոլոր դասընթացների համար: Մենք ուրախ կլինենք ձեզ լրացուցիչ տեղեկություններ ուղարկել՝ դասընթացներն այս ձևով դասավորելու համար: Գրե՛ք այս գրքի սկզբում նշված հասցեով

Ինչ է ներառված Ուսուցչի ձեռնարկում

Ուսուցչի ձեռնարկն ունի չորս բաժին: Յուրաքանչյուր բաժին առանձնացված է հիմնական վերնագրով:

1. Դասի ծրագրեր ուսուցչի համար,
2. Ուսանողի ձեռնարկ,
3. Ուսուցման ուղեցույց,
4. Ուսանողի ստուգարք, պատասխաններ և դասընթացի վկայական:

Բացատրությունը, թե ինչպես օգտագործել յուրաքանչյուր բաժինը, տրվում է անմիջապես տվյալ էջը ներկայացնելուց հետո:

Նախաբան

Այս դասընթացը մեկն է այն դասընթացներից, որոնք նախատեսված են նորադարձ քրիստոնյաների համար: Մենք հավատում ենք, որ այսօր մեծ կարիք կա օգնելու նորադարձ քրիստոնյաներին Քրիստոսի ուսմունքը գործնականորեն կիրառելու իրենց կյանքում: Դասընթացները կարող են օգտակար լինել նաև եկեղեցու երիտասարդների և մեծահասակների ծառայության մեջ, ովքեր ուզում են քրիստոնեությունն իրենց ամենօրյա կյանքի առավել գործնական մասը դարձնել:

Այս դասընթացի և ամբողջ՝ *Խմբային ուսուցումներ նոր քրիստոնյաների համար*-ի հիմնական նպատակն է՝ նորադարձ քրիստոնյաներին ներկայացնել նշանակալի, կյանքին վերաբերող հարցեր: Մենք չենք փորձում ներկայացնել այդ թեմաների սպառիչ ուսումնասիրությունները:

Թին Չելենջի՝ ԱՄՆ-ի ուսումնական ծրագրի կոմիտեն ծրագրավորում է շարունակել վերանայել այս դասերը: Մենք պատրաստ ենք ընդունել այս նյութերի զարգացման վերաբերյալ ձեր ունեցած ցանկացած քննադատություն կամ միտք:

Ինչպես օգտագործել Ուսուցչի ձեռնարկը

1. Դասերի ծրագրեր ուսուցչի համար

Այս բաժնի առաջին էջն ընդհանուր պատկերացում է տալիս ողջ դասընթացի վերաբերյալ:

Հաջորդ էջը *Դասարանական Հանձնարարության Ցուցակ -ի* մի օրինակ է: Այն ցույց է տալիս, թե երբ պետք է Ուսուցման ուղեցույցի յուրաքանչյուր նախագիծ լրացվի և երբ յուրաքանչյուր հարցաշար և ստուգարք տրվի: Ուսուցման ուղեցույցներն արդեն ունեն այս ձևի չլրացված բլանկները հետևի կազմի ներսի կողմում:

Հաջորդը կլինի դասերի ծրագրերը յուրաքանչյուր դասի համար: Այս բոլոր դասերի ծրագրերն ունեն Աստվածաշնչյան Բանալի ճշմարտություն և Բանալի համար: Դրանք կարող են տրվել դասի սկզբում: Դրանք նաև օգնում են քննարկումը պահել հիմնական թեմայի վրա ողջ դասի ընթացքում:

Ներքևում կան Աստվածաշնչյան Բանալի ճշմարտության և Բանալի համարի մի քանի մեկնաբանություններ՝ թե ինչպես սովորեցնել դասը: Շատ դեպքերում հղումներ են արվում Ուսանողի ձեռնարկին կամ Ուսուցման ուղեցույցի նախագծերին:

Յուրաքանչյուր դաս ամփոփվում է «անձնական կիրառություն» քայլով: Սրա կարևորությունը չի կարող գերագնահատվել: Նորադարձ քրիստոնյաները կարիք ունեն հստակ առաջնորդություն ստանալու, թե ինչպես այս աստվածաշնչյան ուսուցումները կիրառեն իրենց ամենօրյա կյանքում: Համոզվա՛ծ եղեք, որ բավականաչափ ժամանակ եք տալիս ձեր ուսանողներին, որպեսզի սկսեն այս անձնական կիրառման ընթացքը:

Յուրաքանչյուր դասի ծրագրի վերջում ուսանողի համար կա հանձնարարությունների ցուցակ:

Այս դասընթացներից շատերը նախատեսված են հինգ դասերի համար՝ յուրաքանչյուրը մեկ ժամ տևողությամբ: Այս բոլոր 14 դասընթացները կարելի է ավարտել

3-4 ամիսների ընթացքում, եթե դուք շաբաթական հինգ օր դասեր ունենաք: Եթե դուք ունենաք շաբաթական մեկ ժամ, ապա մեկ դասընթացը կարող եք ավարտել մեկ ամսում, իսկ ամբողջ շարքը՝ մոտ մեկ տարում: Այս դասերից շատերը հեշտությամբ կարելի է անցկացնել ավելի երկար ժամանակահատվածում կամ վերածել ավելի շատ դասերի:

2. Ուսանողի ձեռնարկ

Ուսանողի ձեռնարկը կարող է ծառայել երկու նպատակների: Դուք կարող եք հանձնարարել ուսանողներին՝ կարդալ համապատասխան էջերը՝ տրված դասին նախապատրաստվելու համար: Կամ էլ կարող եք հանձնարարել նրանց՝ այն կարդալ դասը անցկացնելուց հետո՝ վերանայելու և ամրացնելու այն, ինչ ուսուցանվեց դասարանում:

Մենք քաջալերում ենք, որ դուք ուսանողներին հանձնարարեք նշումներ անել դասարանում, չնայած այն բանին, որ նրանց տալիս եք Ուսանողի ձեռնարկը: Նրանց անձնական նշումները և դասարանական քննարկումները կօգնեն պարզաբանել Ուսանողի ձեռնարկի որոշ թեմաներ:

3. Ուսուցման ուղեցույց

Ուսուցման ուղեցույցի նախագծերը նախատեսված են ուսանողներին դասասենյակից դուրս աշխատանքով ապահովելու համար: Որոշ նախագծեր կօգնեն ուսանողներին նախապատրաստվել հաջորդ քննարկմանը:

Նախագծերից շատերը նախատեսված են օգնելու ուսանողներին՝ ավելի խորը նայել դասարանում քննարկված որոշ թեմաներ: Այս հանձնարարությունների հիմնական նպատակն է՝ օգնել ուսանողներին բացահայտել, թե ինչպես աստվածաշնչյան ճշմարտությունները կիրառեն իրենց ամենօրյա կյանքում:

4. Ուսանողի ստուգարք և Ստուգարքի պատասխաններ

Ստուգարքները նախատեսված են պարզ կերպով գնահատելու յուրաքանչյուր ուսանողի առաջընթացը՝ դասընթացի ընթացքում անցած աստվածաշնչյան ճշմարտությունները հասկանալու հարցում: Ստուգարքի պատասխանները գտնվում են այս Ուսուցման ձեռնարկի՝ ուսանողի ստուգարքի նմուշի վերջին էջից անմիջապես հետո:

5. Դասընթացի վկայական

Դասընթացի վկայականը որպես գնահատանք պետք է տրվի նրանց, ովքեր կավարտեն դասընթացի համար պահանջվելիք ամբողջ աշխատանքը և բարեհաջող կհանձնեն ստուգարքը: Դասընթացի վկայականը գտնվում է Ուսուցչի ձեռնարկի վերջին էջում: Ավարտական վկայական կարող է տրվել նաև այն ուսանողներին, ովքեր կավարտեն *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար*-ի բոլոր 14 դասընթացների շարքը: Նմուշը ներառված է «Ուսուցիչներին ներկայացնել խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար» գրքում:

Դասընթացների ակունքները

Սողոմոնն ասաց, որ արևի տակ նոր բան չկա: Նույնը կարելի է ասել նաև այս դասերի մասին: Այս մտքերից շատերը նոր չեն: Մենք ուզում ենք արտահայտել մեր հատուկ գնահատականը *Կյանքի հիմքային սկզբունքների ինստիտուտին* այն ազդեցության համար, որ նրանք ունեցել են այս նյութերը մշակող մարդկանց վրա: Այս դասերից շատերը կրում են *Կյանքի հիմքային սկզբունքների ինստիտուտի* հետքերը:

Ես նաև ուզում եմ արտահայտել իմ խորին երախտագիտությունն այն բազմաթիվ ուսուցիչներին ու հազարավոր նորադարձ քրիստոնյաներին, ովքեր օգտագործել են այս նյութերը վերջին մի քանի տարիների ընթացքում: Նրանց տված գաղափարները մեծ դեր են խաղացել այս դասընթացների մշակման մեջ:
Ես նաև շատ երախտապարտ եմ Դոն Վիլկերսոնին, որն ինձ հնարավորություն տվեց աշխատել Բրուկլինում (Նյու Յորք) 1971-1975թթ.-ին: Այդ տարիներին էր, որ *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար*-ի մշակումն առաջին անգամ սկսվեց:

Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար դասընթացների հինգերորդ խմբագրումը մշակվել է Թին Չելենջի՝ ԱՄՆ-ի Ուսումնական ծրագրի կոմիտեի օգնությամբ: Հատուկ շնորհակալություն բոլոր նրանց, ովքեր աջակցել են այդ վերանայման գործընթացին:

Այս նյութերը վերատպելու վերաբերյալ մոտեցումը

Ուսուցչի ձեռնարկը, ինչպես նաև ուսանողական մյուս բոլոր նյութերը, որոնք վերաբերում են *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար* դասընթացներին, պաշտպանված են հեղինակային իրավունքով: Այս նյութերը կարող են վերատպվել և բաժանվել օգտագործելու նպատակով Թին Չելենջում, նմանատիպ ծրագրերում, տեղական եկեղեցիներում, դպրոցներում և այլ կազմակերպություններում, ինչպես նաև անհատների համար: Այս նյութերը նաև կարող են ներբեռնվել համացանցում հետևյալ կայքից՝ www.iTeenChallenge.org: Սակայն այս նյութերը չեն կարող վաճառվել, այլ միայն՝ անվճար բաժանվել: Նրանք, ովքեր ուզում են տպագրել և վաճառել դրանք, պետք է գրավոր թույլտվություն ձեռք բերեն Գլոբալ Թին Չելենջից:

Խորհուրդ է տրվում ուսուցման հետևյալ հերթականությունը

Այս դասընթացը *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար* շարքի 14 ուսուցումներից մեկն է: Բոլոր 14 դասընթացները այստեղ ներկայացված են ուսուցման՝ խորհուրդ տրված հերթականությամբ: Հերթականության ցանկը մշակվել է դասընթացների շարունակական ուսուցման համար: Ավելի լավ կլինի այն ձևել 14 ճաղեր ունեցող անիվի նման: Այս դասընթացները կառուցված չեն մեկը մյուսի վրա: Ամեն մեկն առանձին է: Այնպես որ, ուսանողները կարող են միանալ դասերին ցանկացած կետում և շատ հեշտությամբ հարմարվել:

1. Ինչպե՞ս կարող եմ վստահ լինել, որ ես ճշմարիտ քրիստոնյա եմ
2. Թռուցիկ հայացք Աստվածաշնչին
3. Վերաբերմունքներ
4. Փորձություններ
5. Հաջողակ քրիստոնեական կենսակերպ (ներառում է դասեր Սուրբ Հոգու ծառայության վերաբերյալ)
6. Աճել ձախողումների միջոցով
7. Քրիստոնեական պրակտիկա (շփում Տեղական եկեղեցու հետ)
8. Հնազանդություն Աստծուն
9. Հնազանդություն մարդուն
10. Բարկություն և անձնական իրավունքներ
11. Ինչպես ուսումնասիրել Աստվածաշունչը
12. Սեր և ինքնաընդունելություն
13. Անձնական փոխհարաբերություններ մարդկանց հետ
14. Հոգևոր զորություն և գերբնականը

Այս դասընթացների ուսուցման նպատակով լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «*Ուսուցիչներին ներկայացնել խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար*» գիրքը:

Դասի ծրագրեր
ուսուցիչների համար

Տե՛ս սույն Ուսուցչի ձեռնարկի 4-րդ էջը՝ այս դասերի ծրագրերի օգտագործման վերաբերյալ ավելի շատ տեղեկություններ ստանալու համար:

Դասընթացի ընդհանուր նկարագրություն

1. Առաջին դասաժամից մեկ կամ երկու օր առաջ դու կարող ես այս դասընթացը ներկայացնել ուսանողներին և տալ առաջին հանձնարարությունները: Եթե հնարավոր է՝ բաժանի՛ր Ուսուցման ուղեցույցն այս դասընթացն ուսուցանելուց մեկ կամ երկու օր առաջ: Դու հիմա կարող ես բաժանել Ուսանողի ձեռնարկը: Կարող ես խնդրել ուսանողներին, որ կարդան այն էջերը, որոնք քննարկվելու են առաջին դասաժամին:

2. 11-րդ էջում կա ***Դասարանական հանձնարարության ցուցակի*** մի օրինակ, որտեղ կան ամսաթվեր առ այն, թե երբ պետք է յուրաքանչյուր հանձնարարություն կատարվի: Թող նրանք լրացնեն համապատասխան ամսաթվերը՝ օգտագործելով Ուսուցման ուղեցույցի վերջում գտնվող՝ ***Դասարանական հանձնարարության ցուցակի*** դատարկ օրինակը:

3. Ուսանողներին տեղյա՛կ պահիր, որ նրանք պետք է Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 1-ինը լրացրած լինեն նախքան առաջին դասաժամը:

4. Յուրաքանչյուր դասի ծրագիր տալիս է մեկ կամ ավելի ***Դասի ջերմացման գործողություն***՝ դասի սկզբում օգտագործելու համար: Այս գործողությունների հիմնական նպատակն ուսանողներին օգնելն է՝ նրանց ուշադրությունը տվյալ դասի հիմնական թեմայի վրա կենտրոնացնելու համար: Մենք ուզում ենք ստեղծել ջերմության և անկեղծության մթնոլորտ, որտեղ բոլոր ուսանողներն իրենց ազատ կզգան դասաժամին մասնակցելիս:

5. Դու կարող ես մի քանի մտքեր նշել, թե ինչպես են քո ուսանողները հասկանում «քրիստոնյա» բառը: Այս դասընթացի հեղինակները լավատեղյակ են, որ աշխարհում այն ամենուր նույն կերպ չի ընկալվում: Բայց և այնպես, դա աստվածաշնչյան բառ է, և դու կարող ես այնպես սահմանել այն, որ քո ուսանողները հստակ ընկալեն, թե ինչ նկատի ունես դու:

   Այս գրքի հեղինակները միանշանակ ցանկություն ունեն ձեռնպահ մնալ այն բառերից, որոնք հասկանալի են միայն երկար տարիների քրիստոնյաների համար: Այս դասընթացը հիմնականում նախատեսված է նորադարձ և ապագա քրիստոնյաների համար, ովքեր, հնարավոր է, ծանոթ չլինեն այն տերմիններին, որոնք հին հավատացյալներն են օգտագործում:

   Երբ սույն դասընթացում մենք օգտագործում ենք «քրիստոնյա» կամ «ճշմարիտ քրիստոնյա» արտահայտությունները, մենք նկատի ունենք Հիսուսի հետ անձնական փոխհարաբերություն ունեցող մարդկանց, ովքեր Հիսուսին ընդունել են որպես իրենց անձնական Տեր ու Փրկիչ:

6. Դու պետք է կողմնորոշվես, թե քանի դասաժամով ես ուզում անցկացնել այս դասընթացը: Հետագա էջերում կան դասի ծրագրեր տասը դասաժամի համար: Բայց և այնպես, այս դասընթացը հեշտությամբ կարելի է ընդարձակել մինչև 14 դասաժամ: Տասը դասաժամերի վերնագրերն այս Ուսուցչի ձեռնարկի հաջորդ էջում են:

Քանի՞ դասաժամ ես դու օգտագործելու այս դասընթացն ուսուցանելու համար:

Դու կարիք կունենաս որոշելու, թե քանի դասաժամ ես օգտագործելու այս դասընթացն ուսուցանելու համար: Հետագա էջերում կան դասի ծրագրեր տասը դասաժամերի համար: Բայց և այնպես, այս դասընթացը հեշտությամբ կարելի է ընդարձակել մինչև 14 դասաժամ: Տասը դասաժամերի վերնագրերը նշված են ներքևում: Այն դասերը, որոնք նշված են աստղանիշով (*), կարող են բաժանվել երկու դասաժամի: Տվյալ դասերի ծրագրում կան խորհուրդներ, թե ինչպես կարելի է դա անել:

Գլուխ 1. Ինչպե՞ս է մարդը ճշմարիտ քրիստոնյա դառնում

*Դաս 1. Մտքի և կամքի որոշում:

*Դաս 2. Զգացմունքների որոշում:

Գլուխ 2. Որտեղի՞ց կարող ես փաստարկներ վերցնել, որ դու ճշմարիտ քրիստոնյա ես

*Դաս 3. Աստվածաշունչը և Սուրբ Հոգին:

Դաս 4. Քո կյանքի փոփոխությունները:

Գլուխ 3. Ի՞նչ է նշանակում անձնական փոխհարաբերություն ունենալ Հիսուսի հետ

*Դաս 5. Իմ անձնական փոխհարաբերությունը Հիսուս Քրիստոսի հետ, մաս 1-ին:

Դաս 6. Ընկերանալ Հիսուսի հետ:

Գլուխ 4. Ի՞նչ կարող եմ անել ճշմարիտ քրիստոնյա լինելու իմ կասկածների հետ

Դաս 7. Կասկածների պատճառները:

Դաս 8. Ազատագրվել կասկածներից, մաս 1-ին:

Դաս 9. Ազատագրվել կասկածներից, մաս 2-րդ:

Դաս 10. Ստուգարք:

Դասարանական հանձնարարության ցուցակ

Դասընթացի վերնագիրը Ինչպե՞ս կարող եմ իմանալ, որ ճշմարիտ քրիստոնյա եմ

Հարցաշարեր Անգիր համարներ Ամսաթիվ

1. 8 փաստեր Ուսանողի ձեռնարկի 5-րդ էջից Դաս 2.
2. Հռոմեացիներին 8:16 Դաս 3.
3. Հովհաննես 1:12 Դաս 4.
4. Հակոբոս 1:5-6 Դաս 7.

Նախագիծ Ամսաթիվ

1. Դաս 1.
2. Դաս 2.
3. Դաս 3.
4. Դաս 3. կամ 4.
5. Դաս 8.
6. Դաս 4.
7. Դաս 4. կամ 5.
8. Դաս 5. կամ 6.
9. Դաս 7. կամ 8.
10. Դաս 7. կամ 8.
11. Դաս 7.
12. Դաս 9.

Ստուգարք Ամսաթիվ Դաս 10.

1

Դասի ծրագիր 1.
Մտքի որոշում
Կամքի որոշում

1. **Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն:**

Եթե ես հասկացել եմ ճշմարիտ քրիստոնյա դառնալու վերաբերյալ աստվածաշնչյան փաստարկները, արդեն անհրաժեշտ է, որ քայլեր ձեռնարկեմ ճշմարիտ քրիստոնյա դառնալու համար:

2. **Բանալի համար. Հովհաննես 1:12.**

«Բայց ովքեր ընդունեցին Իրեն, նրանց Նա Աստծո որդիներ դառնալու զորություն տվեց, նրանց, որ կհավատան Իր անվանը»:

3. **Հղում ուսանողական նյութերին:**

Ուսանողի ձեռնարկի 4-9-րդ էջերը համընթաց են այս դասի հետ: Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 1-ինը՝ «Դառնալ ճշմարիտ քրիստոնյա», նույնպես համընթաց է այս դասին:

4. **Ուսուցչի նախապատրաստություն:**

ա. **Հարցազրույց մի ճշմարիտ քրիստոնյայի հետ:**

Այս դասի ծրագրի 17-րդ կետի գործողության համար դու պետք է հարցազրույց անցկացնես մի ճշմարիտ քրիստոնյայի հետ: Դու կարող ես այդ անձնավորությանը տալ Ուսանողի ձեռնարկի 1-ին գլուխը, որ կարդա՝ նախքան հարցազրույցը սկսելը: Եթե հնարավոր է, թող այդ անձնավորությունը գա դասարան կենդանի հարցազրույցի համար: Եթե դա հնարավոր չէ, տեսաձայնագրի՛ր հարցազրույցը: Համոզվի՛ր, որ խոսափողը հստակորեն վերցնում է թե՛ հարցերը, թե՛ պատասխանները: Փորձի՛ր հարցազրույցը սահմանափակել մինչև 10-15 րոպե: Եթե դա հնարավոր չէ, ապա կարող ես ընտրել ձայնագրությունից այն հատվածները, որոնք կցանկանաս ներկայացնել դասարանին:

Դու կարող ես 17-րդ կետի գործողության հարցերի օրինակները տալ քո ուսանողներին: Թող նրանք համեմատեն իրենց փորձառությունը հարցազրույցի պատմության հետ:

բ. **Ութ փաստերի աղյուսակը:**

Ութ փաստերը, որոնք մարդը պետք է իմանա և հավատա ճշմարիտ քրիստոնյա դառնալու համար, այն հիմնական կետերն են, որոնք մենք ուզում

1

ենք անցնել այս առաջին դասաժամին: Դու կարող ես, ըստ օգտակարության, արտագրել այդ ութ փաստերը մեծ ստվարաթղթի վրա՝ դասասենյակում ցուցադրելու նպատակով: Սա հատկապես օգտակար կլինի, եթե կենդանի հարցազրույց անցկացնեք 17-րդ կետի գործողության համար: Ութ փաստերը թվարկված են Ուսանողի ձեռնարկի 6-րդ էջում:

5. **Դասի ջերմացում** (5-10 րոպե):

Ընտրի՛ր հետևյալ գործողություններից մեկն այսօրվա դասաժամը սկսելու համար:

ա. Երբ ինչ-որ մեկն առաջին անգամ հարցնում է քեզ, թե արդյո՞ք դու ճշմարիտ քրիստոնյա (հավատացյալ) ես:

Խնդրի՛ր մի քանի ուսանողների՝ պատմել, թե ինչ տեղի ունեցավ, երբ ինչ-որ մեկն առաջին անգամ նրանց հարցրեց, թե արդյո՞ք իրենք ճշմարիտ քրիստոնյա (հավատացյալ) են: Ի՞նչ պատասխանեցին նրանք: Եթե քո ուսանողներից շատերը մեծացել են հավատացյալ ընտանիքում, հնարավոր է՝ չհիշեն այդ առաջին անգամը: Դու կարող ես խոսել ինչ-որ մեկի հետ, ով շատ է վկայում և տարբեր օրինակներ գիտի, թե ինչպես են մարդիկ պատասխանել այս հարցին:

բ. Ի՞նչն է, քո կարծիքով, մարդուն ճշմարիտ քրիստոնյա դարձնում:

Թող ուսանողները կիսվեն իրենց պատասխաններով, որոնք տվել են Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 1-ինի 1-ին հարցին, որն է՝ «**Քո կարծիքով ի՞նչն է մարդուն դարձնում ճշմարիտ քրիստոնյա**»: Դու կարող ես կարճ ժամանակ հատկացնել՝ քննարկելու համար նրանց պատասխանները, սակայն այս պահին խորը քննարկումների մեջ մի՛ մտիր: Չափազանց քննադատող մի՛ եղիր նրանց պատասխանների հանդեպ: Դու կարող ես սխալ պատասխանները ուղղել հետո՝ դասի ընթացքում:

6. **Ինչպե՞ս է մարդը ճշմարիտ քրիստոնյա դառնում** (3-5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 5-6-րդ էջեր:

Ուսանողների հոգևոր հասունությունից է կախված, թե դու ինչպես կուսուցանես այս դասը: Եթե քո ուսանողներից շատերը դեռ որոշում չեն կայացրել՝ դառնալ ճշմարիտ քրիստոնյա, դու պետք է ուշադիր լինես, որպեսզի ժամանակ հատկացնես՝ նրանց անհանգստացնող հարցերին պարզաբանում տալու համար: Մի՛ համարիր, որ քո դասարանի բոլոր ուսանողները ճշմարիտ քրիստոնյա են:

Եթե դու վստահ ես, որ քո դասարանի մեծ մասն արդեն ճշմարիտ քրիստոնյա դառնալու որոշում կայացրել է, քաջալերի՛ր նրանց՝ ուսումնասիրելու համար դասի այս հատվածը, որպեսզի պատրաստվեն

վկայել: Այս կետերին անդրադառնալիս նրանք կարող են մտածել ուղիներ ու մեթոդներ, թե ինչպես դրանք գործածեն ոչ հավատացյալների հետ զրուցելիս:

Դու կարող ես քննարկումը սկսել՝ խնդրելով մի քանի ուսանողների՝ կիսվել իրենց պատասխաններով, որոնք տվել են Ուսուցման ուղեցույց, **Նախագիծ 1-ինի 3-րդ հարցին**, որն ասում է. «**Ո՞վ է Հիսուս Քրիստոսը**»: Սա կարող է քեզ խորաթափանցություն տալ, որպեսզի հասկանաս, թե որքան մեծ է կարիքը, որ մանրակրկիտ քննարկես աստվածաշնչյան փաստերի վերաբերյալ դասի այս հատվածը: Այս պահին այս հարցի վերաբերյալ խորը քննարկումների մեջ մի՛ մտիր: Եթե ուսանողներից մեկը կամ երկուսը սրա հետ կապված լուրջ հարցեր ունենան, պայմանավորվի՛ր նրանց հետ դա ավելի մանրամասն քննարկել դասից հետո:

Մենք խորհուրդ ենք տալիս, չհարցնել ուսանողներին, թե ինչ են նրանք պատասխանել Ուսուցման ուղեցույց, **Նախագիծ 1-ինի 2-րդ հարցին**, որն է՝ «**Դու ճշմարիտ քրիստոնյա՞ ես**»: Սա անձնական հարց է, կարող է անհարմար վիճակի մեջ դնել ուսանողին: Մենք ուզում ենք, որ նրանք դասի այս թեմային անդրադառնալիս իրենց ազատ զգան՝ առանց ճնշվածության զգացողության, որ վատ վիճակում են, քանի որ ճշմարիտ քրիստոնյա չեն:

Շեշտի՛ր Ուսանողի ձեռնարկի 1-ին գլխի սկզբում գտնվող պարբերության հիմնական կետերը, որոնք զետեղված են 5-րդ էջում: Աստված ոչ մեկին իր կամքից անկախ չի դարձնի ճշմարիտ քրիստոնյա: Մատնանշի՛ր, որ կան որոշման երեք հատվածներ, որոնցով մարդը պետք է անցնի ճշմարիտ քրիստոնյա դառնալու համար:

> Նախքան համոզված լինելը, որ ճշմարիտ քրիստոնյա ես, դու պետք է իմանաս, թե ինչպես են ճշմարիտ քրիստոնյա դառնում: Աստված երբեք մարդուն իր կամքին հակառակ քրիստոնյա չի դարձնում: Եթե դու ուզում ես ճշմարիտ քրիստոնյա դառնալ, ապա պետք է որոշում ընդունես՝ նվիրվել Քրիստոսին: Այս քայլը ներառում է հետևյալ երեք մասերը.
>
> Մտքի որոշում
> Կամքի որոշում
> Զգացմունքների որոշում
>
> *Ինչպե՞ս իմանամ, որ ճշմարիտ քրիստոնյա եմ: Ուսանողի ձեռնարկ, էջ 5-րդ:*

7. Ի՞նչ է նվիրվելու որոշումը (3-5 րոպե):

Այս դասընթացի առաջին երկու դասերին մենք խոսելու ենք ճշմարիտ քրիստոնյա դառնալու մասին՝ որպես հետևանքի՝ Քրիստոսին նվիրվելու քո մտքի, կամքի և զգացմունքների կատարած որոշման: Ժամանա՛կ հատկացրու, որպեսզի խոսես նվիրվելու որոշման մասին: Որոշ մարդիկ շատ

1

մակերեսային են նայում այս հարցին: Նրանք մտածում են, որ խոստումը դրժելը մի մեծ բան չէ, եթե հայտնվում ես դժվարին իրադրության մեջ: Համառոտ բացատրի՛ր, թե ինչ է ուզում Աստված մեզնից, երբ խոսում ենք մեր կյանքը Նրան նվիրելու որոշում կայացնելու մասին:

Որոշ ուսանողներ, հնարավոր է, հարց բարձրացնեն, թե ինչպե՛ս են մեր զգացմունքները ներառված ճշմարիտ քրիստոնյա դառնալու մեջ: Բացատրի՛ր, որ մենք այս մասին կխոսենք հաջորդ դասաժամին:

8. Ութ փաստարկներ, որոնք վերաբերում են քո մտքի որոշմանը (10-15 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 6-րդ:

Անցի՛ր ութ փաստարկներով, որոնք գրված են Ուսանողի ձեռնարկի 6-րդ էջում: Թող ուսանողները գտնեն և կարդան յուրաքանչյուր քայլի հետ գրված համարը: Համոզվի՛ր, որ նրանք հասկանում են այս մտքերից յուրաքանչյուրի հիմնական իմաստը՝ ճշմարտությունը:

Ահա այն փաստարկները, որոնք դու պետք է իմանաս և հավատաս՝ ճշմարիտ քրիստոնյա դառնալու համար:

1. Աստված կա: Եբրայեցիներին 11:6
2. Աստվածաշունչը ճշմարիտ է: Բ Տիմոթեոս 3:16
3. Ես մեղավոր եմ և խախտել եմ Աստծո օրենքները: Հռոմեացիներին 3:23
4. Աստված սիրում է ինձ և ուղարկել է Իր Միածին Որդուն՝ ապրելու և մահանալու ինձ համար: Հովհաննես 3:16
5. Միայն Հիսուսը կարող է ներել իմ մեղքերը: Գործք, 4:12
6. Մեղքի պատիժը մահն է: Հռոմեացիներին 6:23
7. Ես կարող եմ փրկվել մեղքի պատժից՝ իմ մեղքերը Հիսուսին խոստովանելով և Նրանից ներում խնդրելով: Ա Հովհաննես 1:9
8. Ես կարող եմ դառնալ ճշմարիտ քրիստոնյա, եթե հիմա թույլ տամ, որ Հիսուսը դառնա իմ կյանքի Առաջնորդը: Հռոմեացիներին 10:9-10

Մեջբերումն արված է Ուսանողի ձեռնարկի 6-րդ էջից:

Ահա մի քանի լրացուցիչ հարցեր, որոնք դու կարող ես օգտագործել դասի այս հատվածի քննարկման ժամանակ:

1. Ի՞նչ է նշանակում՝ մտքի որոշում կայացնել:
2. Քո կարծիքով, այս ութ փաստարկների մեջ կա՞ն կետեր, որոնք հարկավոր չեն ճշմարիտ քրիստոնյա դառնալու համար: Եթե այո, որո՞նք են: Բացատրի՛ր քո պատասխանը:
3. Ի՞նչ է նշանակում՝ «հավատի կույր ցատկ» կատարել:
4. Ինչո՞վ է ճշմարիտ քրիստոնյա դառնալու աստվածաշնչյան պատկերը տարբերվում «հավատի կույր ցատկից»:

9. Աստվածաշունչը ճշմարի՞տ է (3-5 րոպե):

Որոշ ուսանողներ, հնարավոր է, դժվարանան համաձայնել այս ութ փաստարկների հետ՝ կախված Աստվածաշնչի հանդեպ իրենց հավատալիքներից: Թող ուսանողները կարդան իրենց պատասխանները, որոնք տվել են Ուսուցման ուղեցույց, Նախագիծ առաջինի 4-րդ հարցին. «**Դու դժվարացե՞լ ես, կամ դժվարանո՞ւմ ես հավատալ, որ Աստվածաշունչը ճշմարիտ է: Խնդրում եմ՝ բացատրի՛ր քո պատասխանը**»: Եթե ուսանողներից ոմանք կարևոր հարցեր ունեն այս թեմայի շուրջ, դու կարող ես որոշ ժամանակ հատկացնել՝ քննարկելու համար, թե ինչպես կարող ենք իմանալ, որ Աստվածաշունչը ճշմարիտ է:

Այս թեման մանրամասնորեն քննարկվում է հաջորդ՝ ***Թռուցիկ հայացք Աստվածաշնչին*** դասընթացում, դա նկատելի է, եթե դու հետևում ես ուսուցման մեր առաջարկած հերթականությանը: Եթե այս հարցը լուրջ խնդիր է հանդիսանում, որի պատճառով քո ուսանողները վարանում են ճշմարիտ քրիստոնյա դառնալ, ուրեմն հիմա ժամանա՛կ հատկացրու՝ քննարկելու համար այս հարցը, եթե նույնիսկ դու ստիպված լինես լրացուցիչ դասաժամ տրամադրել դրա համար:

Եթե ուսանողները կարծում են, որ Աստվածաշունչը ճշմարիտ չէ, հնարավորությո՛ւն տուր նրանց բացատրելու, թե ինչու են այդպես կարծում: Երբեմն խնդրի առարկան Աստվածաշնչի տարբեր թարգմանություններն են լինում: Արագ մատնանշի՛ր, որ «կատարյալ» թարգմանություններ չկան: Մեր ունեցած թարգմանություններից շատերը գերազանց են, սակայն դրանք բոլորն էլ թույլ կետեր ունեն: Մենք չպետք է վախենանք, որ փրկության ծրագիրը կարող է աղավաղված լինել Աստվածաշնչի թարգմանությունների մեջ: Ես միշտ նրանց քաջալերում եմ, որ մտածեն, թե որքան մեծ է Աստված: Եթե Նա ի վիճակի չէ պահպանել Սուրբ Գիրքը, որ այն չխեղաթյուրվի թարգմանիչների պատճառով, ուրեմն մենք գործ ունենք թույլ և փոքրիկ մի Աստծու հետ:

1

Սա մի հատված է, որտեղ դու կարող ես խոսել հավատի և Աստծուն վստահելու մասին: Մենք պետք է զգուշորեն ուսումնասիրենք փաստարկները և օգտագործենք մեր միտքը: Սակայն կա հատված, որտեղ մարդկային տրամաբանությունն ու մտածելակերպը չեն կարողանում մեզ հասցնել փրկության կետին: Մենք պետք է պատրաստակամ լինենք հավատի քայլ անելու համար՝ առանց ամբողջությամբ ամեն բան հասկանալու: Սա «հավատի կույր ցատկ» չէ, այլ աստվածաշնչյան ուսուցումների վրա հիմնված հավատի քայլ:

Եթե ոմանք դժվարանում են հավատալ Աստվածաշնչին, քաջալերի՛ր նրանց, որ այդ մասին խոսեն Աստծո հետ և Նրանից օգնություն խնդրեն:

10. Ինչքանի՞ կարիք կա իմանալ՝ ճշմարիտ քրիստոնյա դառնալու համար
(3-5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 6-7-րդ էջեր:

Մենք այս կետում պետք է զգույշ լինենք, որպեսզի «օրինապաշտ» չդառնանք, թե հատկապես որքան մարդ պետք է իմանա փրկության ծրագրի մասին՝ նախքան կկարողանան դառնալ ճշմարիտ քրիստոնյա: Այս ութ փաստարկներն ընդհանուր ուղեցույցներ են: Մարդը, հնարավոր է, չհասկանա այս կետերից մեկը կամ ավելին՝ նախքան ճշմարիտ քրիստոնյա դառնալը: Աստված ազատ է փրկելու ցանկացած մեկին, եթե նա անկեղծ սրտով է գալիս Աստծո մոտ:

Սակայն որոշ մարդիկ, երբ «կրոնական ապրում» են ունենում, երբ նրանք «զգում» են, որ ինչ-որ բան տեղի ունեցավ իրենց ներսում, համարում են, որ սա ապացույցն է այն բանի, որ իրենք այդ պահին դարձել են ճշմարիտ քրիստոնյա: Ճշմարիտ փրկությունը տեղի է ունենում, երբ Աստված ներում է մարդու մեղքերը և գալիս է ապրելու նրա հոգու մեջ: Այս հարցը քննարկվում է նաև Ուսանողի ձեռնարկի 6-7-րդ էջերում:

11. Ներկայացրո՛ւ կամքի որոշում ընդունելը
(3-5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 7-9-րդ էջեր:

Ուսանողներին բացատրի՛ր, թե ինչ նկատի ունենք մենք, երբ խոսում ենք «կամքի» մասին: Կամքը մեր ինքնության որոշում ընդունող մասն է: Դու կարող ես օգտագործել երեխայի ծնվելու օրինակը՝ համեմատելու համար «նորից ծնվելու» իրականության հետ, բայց որն այս անգամ արդեն Աստծո ընտանիքի մեջ: Տե՛ս Ուսանողի ձեռնարկի 7-րդ էջի վերջում՝ այս օրինակի վերաբերյալ ավելի շատ տեղեկություն ստանալու համար:

12. **Դու պետք է իմանաս, թե ինչ ես անում՝ նախքան կկարողանաս որոշում ընդունել** (3-5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 7-8-րդ էջեր:

Համառոտ ներկայացրո՛ւ այն նյութը, որը բերված է Ուսանողի ձեռնարկի 7-8-րդ էջերում՝ ենթակետ 1-ինում. «**Դու պետք է հասկանաս, թե ինչ է նշանակում դառնալ ճշմարիտ քրիստոնյա**»: Սա համընթաց է առաջին դասաժամի սկզբում մեր քննարկածին, որը վերաբերում է մտքի որոշում կայացնելուն: Այստեղ պետք է ընդգծել, որ Աստված չի հարգի մի որոշում, որն ընդունվում է բացարձակ չիմացության պայմաններում:

13. **Ինչպե՞ս ես դու կարևոր որոշումներ կայացնում** (5 րոպե):

Ուսուցման ուղեցույցի 5-րդ հարցն ուսանողներին օգնում է կողմնորոշվել, թե ինչ մեթոդ են նրանք օգտագործում կարևոր որոշումներ կայացնելիս: Թող ուսանողները կիսվեն այդ հարցին տված իրենց պատասխաններով: Նշի՛ր, որ կարևոր է հասկանալ, թե որոշ մարդկանց համար որքան հեշտ կամ դժվար է որոշում կայացնելը, և ինչ կապ ունի սա Քրիստոսին նվիրվելու որոշում կայացնելու հետ:

Որպես ուսուցիչ՝ դու պետք է պատրաստ լինես ընդունելու, որ քո ուսանողներից շատերը նույն ձևով չեն որոշումներ կայացնում, ինչպես դու: Մտածի՛ր, թե ինչ հետևանքներ կարող են ունենալ որոշում կայացնելու տարբեր մոտեցումները՝ մասնավորապես Քրիստոսին նվիրվելու որոշում կայացնելու հարցում: Քննարկի՛ր դրանցից յուրաքանչյուրի թե՛ դրական, թե՛ բացասական կողմերը:

Օրինակ, արագ որոշումներ կայացնող մարդը կարող է արագ համոզվել և կայացնել Քրիստոսին նվիրվելու որոշումը: Սակայն որքա՞ն երկար կտևի այս որոշումը: Արդյո՞ք նրանք շատ արագ չեն սկսի լուրջ կասկածներ ունենալ իրենց կայացրած որոշման վերաբերյալ: Իսկ բծախնդիր մարդն իր մանրակրկիտ հարցերով կարող է քեզ հուսահատության հասցնել: Եթե դու այդպիսի ուսանող ունես, հո՛ւյս ունեցիր, որ մի օր նա դրական որոշում կկայացնի: Շատ հավանական է, որ այդպիսի անձնավորությունը արագ չի թողնի իր կայացրած որոշումը:

Եթե դասաժամի վերջում ժամանակ ունենաս, ապա քննարկի՛ր այս թեման ավելի մանրամասն: Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 1-ինի 7-րդ և 8-րդ հարցերն այս թեման ավելի անձնական մակարդակի վրա են քննարկում: Անպայման անցի՛ր այս հարցերը՝ Նախագիծ 1-ինի համար գնահատական դնելիս, որպեսզի կողմնորոշվես, թե ուսանողներից ովքեր կարիք ունեն անձնական ուշադրության՝ հաջորդ պահին հարցը նրանց հետ պարզաբանելու համար:

1

14. Դու պետք է որոշում կայացնես (3-5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 8-9-րդ էջեր:

Ընդգծի՛ր, որ նրանք չեն կարող պարզապես ուսումնասիրել Աստվածաշնչի փաստերը և համարել, որ ճշմարտության գիտությունը միակ բանն է, ինչի կարիքը նրանք ունեն: Նրանք պետք է որոշում կայացնեն, թե ո՛վ է լինելու նրանց կյանքի առաջնորդը՝ Աստվա՞ծ, թե՞ սատանան: Այս թեման քննարկվում է Ուսանողի ձեռնարկի 8-9-րդ էջերում 2-րդ ենթակետում. «**Ճշմարիտ քրիստոնյա դառնալու համար դու պետք է որոշում կայացնես**»:

15. Հետևողակա՛ն եղիր քո որոշման մեջ
(3-5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 9-րդ:

Այս թեման քննարկվում է Ուսանողի ձեռնարկի 9-րդ էջում զետեղված 3-րդ ենթակետում. «**Աստծո օգնությամբ դու պետք է մինչև վերջ հետևողական լինես և անես այն, ինչ որոշել ես**»: Դու կարող ես պատկերավոր օրինակ բերել, թե որքան հեշտ է խոստանալը և որքան դժվար է, երբեմն, խոստումը պահելը՝ անելը այն, ինչ խոստացել ես: Երբ մի անձնավորություն ասում է. «Ես ուզում եմ դառնալ ճշմարիտ քրիստոնյա», դա՝ ասելը, բավականին հեշտ է լինում, ընդամենը՝ մի քանի բառ: Իրականացնելն ավելի դժվար է:
Ի՛նչ-խոսք, մեզնից ամեն մեկը պետք է հետևողական լինի և անի այն, ինչ որոշել է:

Բացատրի՛ր, թե ինչ է նշանակում հետևել ճշմարիտ քրիստոնյա դառնալու քո որոշմանը:

1. Դու պետք է խոստովանես քո մեղքերն Աստծո առաջ և ներում խնդրես Նրանից:

2. Դու պետք է հրավիրես Հիսուսին՝ դառնալ քո կյանքի Առաջնորդը: Սա նշանակում է ամբողջ կյանքը Նրան հանձնել:

3. Դու պետք է մեջքով շրջվես դեպի քո մեղսալից ճանապարհները և սկսես հնազանդվել Աստծո օրենքին և ուսուցումներին:

Քննարկի՛ր Հակոբոս 2:24-ի այն միտքը, որ փրկությունն ավելին է պահանջում, քան պարզապես բառեր ասելը, այն պահանջում է նաև գործողություններ:

Դու կարող ես օգտագործել երիտասարդ հարուստի օրինակն Աստվածաշնչից, ով եկել էր Հիսուսի մոտ հարցնելու, թե ինչպես կարող էր հավիտենական կյանք ստանալ: Տե՛ս Ղուկաս 18:23-30, Մատթեոս 19:16-30 և Մարկոս 10:17-31 հատվածները: Մատնանշի՛ր, որ Հիսուսը նրան չասաց, որ մի պարզ աղոթք պիտի անի: Հիսուսը նրան քայլ անելու կոչ արեց. «Թո՛ղ քո հարստությունը և հետևի՛ր Ինձ»: Այդ մարդը պատրաստ չէր կատարելու հարկ եղած գործողությունները, որպեսզի ապացուցեր կյանքը Քրիստոսին նվիրելու իր որոշման լրջությունը:

16. Իսկ ի՞նչ կլինի, եթե սխալվես ու մեղք գործես (3-5 րոպե):

Նշի՛ր, որ Քրիստոսին նվիրվելու քո որոշումը քեզ չի տալիս ազատություն՝ գնալ և խախտել Աստծո օրենքը՝ երբ ցանկանաս: Մյուս կողմից, մարդը ամեն անգամ նորից փրկվելու կարիք չունի, երբ հերթական անգամ մեղք գործի: Քննարկի՛ր Քրիստոսին նվիրվելու որոշման հարցում քո հնարավորությունների առավելագույնն անելու կարևորությունը: Աստված մեզ խոստացել է տալ զորություն, որպեսզի դեմ կանգնենք գայթակղություններին ու ապրենք Նրա համար: Այնուամենայնիվ, մատնանշի՛ր, որ ճշմարիտ քրիստոնյա դառնալու որոշումը մեզ ակնթարթորեն կատարյալ չի դարձնում: Մենք բոլորս էլ սխալվում ենք, սակայն ունենք նաև հնարավորություն, այն է՝ սովորել մեր սխալներից և ավելի մոտենալ Աստծուն:

17. Հարցազրույց ճշմարիտ քրիստոնյայի հետ (10-15 րոպե):

Մենք ուզում ենք սույն դասաժամին այս ամբողջ տեղեկությունը հասցնել գործնական մակարդակի: Որևէ ճշմարիտ քրիստոնյայի հետ հարցազրույց վարելը կարող է լինել լավագույն տարբերակը՝ օգնելու համար ուսանողներին, որպեսզի հասկանան, թե ինչպես է մտքի և կամքի որոշումը գործում մարդու կյանքում: Այս դասի ծրագրի սկզբում կա նշում, որը քեզ խորհուրդ է տալիս նախապես պայմանավորվել, թե ում հետ ես դու հարցազրույց անցկացնելու:

Եթե հնարավոր է, հարցազրույցն անցկացրո՛ւ դասարանում՝ ուսանողների առաջ: Այս ձևով դու կկարողանաս կառավարել հարցազրույցի տևողությունը՝ կախված այն բանից, թե որքան ժամանակ ես ուզում հատկացնել այդ գործողությանը: Հետևի՛ր, որ հարցազրույցը դուրս չգա քո վերահսկողությունից: Ասա՛ այդ անձնավորությանը, որ կարճ պատասխան տա. մոտ 2-3 րոպե՝ յուրաքանչյուր հարցի համար: Եթե դու ցանկանաս մանրամասնել, միշտ կարող ես հարցնել. «Կարո՞ղ էիք դա մի փոքր ավելի մանրամասն բացատրել»:

Հարցեր հարցազրույցի համար:

1. Ինչպե՞ս Դուք առաջին անգամ լսեցիք ճշմարիտ քրիստոնյա դառնալու վերաբերյալ հիմնական փաստարկների մասին:
2. Ութ փաստարկներից (Ուսանողի ձեռնարկ, էջ 6-րդ) որո՞նք հստակ բացատրվեցին Ձեզ՝ *նախքան* ճշմարիտ քրիստոնյա դառնալը:
3. Այս ութ փաստարկներից որո՞նք հստակ չբացատրվեցին Ձեզ՝ նախքան ճշմարիտ քրիստոնյա դառնալը:
4. Որքանո՞վ էր դժվար Ձեզ՝ հավատալ, որ Դուք մեղավոր էիք և Աստծո օգնության կարիքն ունեիք ճշմարիտ քրիստոնյա դառնալու համար:

1

5. Ձեզ համար դժվա՞ր էր ընդունել, որ Աստվածաշունչը ճշմարիտ է: Բացատրե՛ք՝ ինչո՞ւ այո, և ինչո՞ւ ոչ:

6. Երբ Դուք իմացաք, որ մեղավոր եք, և նաև իմացաք, թե ինչպես դառնալ ճշմարիտ քրիստոնյա, որքա՞ն ժամանակ պահանջվեց՝ նախքան այն կետին հասնելը, երբ ասացիք. «Այո՛, ես *ուզում եմ* ճշմարիտ քրիստոնյա դառնալ»:

7. Երբ Դուք ասացիք՝ «Այո՛, ես ուզում եմ ճշմարիտ քրիստոնյա դառնալ», արդյո՞ք միանգամից աղոթեցիք Աստծուն և խնդրեցիք Նրան՝ փրկել Ձեզ: Եթե ոչ, ապա որքա՞ն ժամանակ հետո Դուք արեցիք այդ աղոթքը:

8. Այդ աղոթքն անելուց հետո Դուք ունենո՞ւմ էիք հարցեր և կասկածներ առ այն, թե արդյո՞ք Դուք ճշմարիտ քրիստոնյա դարձաք:

9. Այդ աղոթքն անելուց հետո Դուք դժվարին ժամանակներ ունեցա՞ք ճշմարիտ քրիստոնյա լինելու Ձեր որոշումը պահելու հարցում:

10. Դուք որևէ տարբերություն զգացի՞ք, երբ աղոթեցիք և խնդրեցիք Հիսուսին՝ դառնալ Ձեր կյանքի Առաջնորդը: Եթե Դուք Ձեզ շատ ավելի լավ զգացիք, որքա՞ն տևեցին այդ լավ զգացողությունները:

Դու կարող ես առաջարկել, որ ուսանողները համեմատեն իրենց փորձառությունն այդ անձնավորության հետ, ում հետ դու հարցազրույց ես անցկացնում: Դու ազատ ես նույն հարցերի օրինակները քո ուսանողներին տալու հարցում, եթե ցանկանաս:

Եթե ժամանակ ունենաս, թո՛ւյլ տուր ուսանողներին՝ հարցեր տալ հարցազրույց անցնող անձնավորությանը: Այնպե՛ս արա, որ հարցազրույցն ավարտես ժամանակին՝ դասն ավարտելով անձնական կիրառության գործողությամբ:

Քննարկման արդյունքում պետք է պարզ դառնա, որ ճշմարիտ քրիստոնյա դառնալու գործընթացում մենք բոլորս տարբեր փորձառություններ ենք ունենում: Մեզնից յուրաքանչյուրն ինչ-որ ձևով լսել է ճշմարիտ քրիստոնյա դառնալու վերաբերյալ փաստարկների մասին: Մենք բոլորս առիթ ենք ունեցել որոշում ընդունել. *«Ի՞նչ եմ ես հիմա անելու փրկության՝ Աստծո ծրագրի հետ»:* Մեր միտքն ու կամքը հստակորեն ներառված են ճշմարիտ քրիստոնյա դառնալու գործընթացում:

18. Անձնական կիրառություն (5-10 րոպե):

Թող ուսանողները արտագրեն ութ փաստարկները Ուսանողի ձեռնարկի 6-րդ էջում և դրանցից յուրաքանչյուրին պատասխանեն՝ դիմացը գրելով հետևյալ երեք տարբերակներից մեկը.

- Ես հավատում եմ սրան:
- Ես չեմ հավատում սրան:
- Ես վստահ չեմ:

Այս գործողությունն ուսանողներին կօգնի հասկանալ, թե այս քրիստոնեական հավատալիքների հանդեպ իրենք մտքի որոշում կայացրե՞լ են, թե՞ ոչ:

19. Հանձնարարություններ:

Ա. Գնահատակա՛ն դիր Ուսանողի ձեռնարկ, Նախագիծ 1-ինի՝ «Դառնալ ճշմարիտ քրիստոնյա» բաժնի համար:

Բ. Ասա՛ նրանց, որ անգիր սովորեն ութ փաստարկները հաջորդ դասաժամի հարցաշարի համար:

20. Դասի գնահատում:

Խնդրում եմ՝ գրի՛ր մտքեր այս դասի բարելավման համար:
Ո՞ր հատվածներն էին լավագույնս աշխատում:
Ո՞ր մասերն էին ուսանողների համար դժվարհասկանալի:
Ի՞նչն ամենաօգտակարը թվաց քո ուսանողներին:

Դաս 2.
Զգացմունքների որոշում

2

1. **Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն**

Ես կարիք ունեմ հստակ գիտակցելու, թե ինչքանով են իմ զգացմունքները ներառված ճշմարիտ քրիստոնյա դառնալու գործընթացում:

2. **Բանալի համար. Հակոբոս 1:9.**

«Խոնարհ եղբայրը թող ուրախանա իր բարձրությամբ»:

3. **Հղում ուսանողական նյութերին:**

Ուսանողի ձեռնարկի 10-18-րդ էջերը համընթաց են այս դասի հետ: Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 2-րդը՝ «Իմ զգացմունքները», նույնպես կօգտագործվեն այս դասի հետ:

4. **Ուսուցչի նախապատրաստություն:**

ա. **Երկու դասաժամի տարբերակ:**

Այս դասը կարող է բազմաթիվ հարցերի քննարկման առիթ դառնալ, թե ինչ դեր ունեն զգացմունքները ճշմարիտ քրիստոնյայի կյանքում: Դու կարող ես երկու դասաժամ հատկացնել՝ այս դասը քննարկելու համար, եթե քո դասացուցակը թույլ է տալիս: Սույն դասին անմիջապես հաջորդում է լրացուցիչ տեղեկություն Ուսուցչի նշումների մեջ, որը կարելի է անցկացնել այս պահին: Տե՛ս Ուսուցչի ձեռնարկի 39-40-րդ էջերը:

բ. **Սլայդներ կամ նկարներ Դասի ծրագրի 10-րդ կետի գործողության համար:**

Այս դասի ծրագրի 10-րդ կետի գործողությունը խորհուրդ է տալիս ձեռք բերել առանձնատան մի քանի նկարներ, որոնք ցույց են տալիս տան կառուցման տարբեր փուլեր: Հատկապես կարևոր կլինեն հիմքի, նկուղի, պատերի ու տանիքի նկարները, նաև՝ ավարտուն տան և, եթե հնարավոր է, ներսի բուխարու: Եթե դու չկարողանաս ձեռք բերել վերջերս կառուցված տան նկարներ, ապա հանրային գրադարանում հավանական է, որ լինեն տան կառուցման վերաբերյալ գրքեր:

5. Դասի ջերմացում (5-10 րոպե):

ա. Հարցաշար զգացմունքների վերաբերյալ:

Տո՛ւր հետևյալ հարցաշարը դասաժամի սկզբում: Տե՛ս Ուսուցչի ձեռնարկի 26-րդ էջը այս հարցաշարի համար: Քո ուսանողներին ասա՛, որ սրանք բոլորն անձնական պատասխանով հարցեր են: Նրանք այս հարցաշարի համար գնահատական չեն ստանալու: Հարցաշարի նպատակը նրանց հնարավորություն տալն է, որ մտածեն իրենց զգացմունքների մասին, և այն, թե ինչ տեղ ունեն դրանք իրենց առօրյա կյանքում:

Դու կարող ես այս հարցաշարից մեկական օրինակ բաժանել ուսանողներին: Կամ էլ կարող ես այն ցույց տալ պրոյեկտորի միջոցով:

Երբ ուսանողները վերջացրած լինեն այս հարցաշարը, համառոտ քննարկի՛ր նրանց պատասխանները: Եթե ուսանողները տարբեր պատասխաններ են տվել, ասա՛, որ դա նորմալ է: Խնդրի՛ր նրանց՝ համառոտ կիսվել մտքերով, թե ինչու են այդ պատասխանն ընտրել: Այս գործողության նպատակներից մեկն այն է, որ խորհենք մեր զգացմունքների մասին և տեսնենք, թե ինչ տեղ ունեն դրանք նորադարձ քրիստոնյայի կյանքում: Միևնույն ժամանակ մենք ուզում ենք ցույց տալ, որ յուրաքանչյուր մարդ-արարած յուրովի է ստեղծված, և որ մենք բոլորս նույն ձևով չենք արձագանքի կյանքի համանման իրավիճակներին:

բ. Նորածին երեխայի օրինակը:

Շատ մեծահասակներ և երեխաներ զգացմունքային առումով առավել արտահայտվող են դառնում, երբ նորածին երեխայի մոտ են լինում: Ուսանողներին խնդրի՛ր, որ մտածեն հենց նոր ծնված երեխայի մասին: Թող նրանք պատկերացնեն, որ իրենք այդ նորածնի հայրը կամ մայրը, բժիշկը կամ բուժքույրը, տատիկը կամ պապիկը, եղբայրը կամ քույրն են: Ի՞նչ զգացմունքներ կարտահայտեին, երբ առաջին անգամ տեսնեին այդ նորածնին: Թող ուսանողներն իրենց պատասխաններով կիսվեն դասարանի հետ:

Նշի՛ր, որ տարբեր մարդիկ կարող են տարբեր զգացողություններ ունենալ, թեև խոսքը վերաբերում է նույն դեպքին:

Երեխայի ֆիզիկական ծնունդը որոշ իմաստներով նման է նորադարձ քրիստոնյայի հոգևորապես ծնվելուն: Երեխաների մեծ մասը ծնվելուց անմիջապես հետո սկսում են լաց լինել: Առաջին շաբաթներն ու ամիսները լի են տարբեր տեսակի նոր փորձություններով, որոնցից ոչ բոլորն են հաճելի, հատկապես՝ կեղտոտ տակաշորերը: Նորածնի կյանքը հաճախ լի է լացով, ցավով, հուսահատությամբ, իրենց տեղը չգտնելով, չափազանց ցուրտ կամ չափացանց տաք զգալով, մի խոսքով՝ տանջալի իրավիճակներով: Նորածինը մեծ դժվարությամբ է հարմարվում նոր կյանքի բոլոր փոփոխություններին: Մենք այս ընթացքն անվանում ենք «աճ»:

2

Շատ անգամ նորադարձ քրիստոնյան է անցնում նմանատիպ ցավոտ և հուսահատեցնող փորձություններով՝ ձգտելով հարմարվել ճշմարիտ քրիստոնյայի նոր կյանքին: Դա, հաստատ, մշտական ուրախությամբ լցված մի կյանք չէ: Այսօրվա դասաժամին մենք ուզում ենք ավելի մանրամասն դիտարկել, թե ինչ կապ ունեն մեր զգացմունքները ճշմարիտ քրիստոնյա դառնալու հետ և ինչ տեղ պետք է ունենան մեր կյանքում:

Հարցաշար զգացմունքների վերաբերյալ:

Ճիշտ, սխալ 1. Այն ճշմարիտ քրիստոնյան, ով իրոք մոտ է Աստծուն, մշտապես ուրախություն կզգա:

Ճիշտ, սխալ 2. Բարկությունը ներսում պահելն ավելի լավ է, քան դա նյարդային ձևով արտահայտելը (կամ դրա ազդեցության տակ քայլ անելը):

Ճիշտ, սխալ 3. Երբ ճշմարիտ քրիստոնյան ընկճվում է, ուրեմն ինչ-որ սխալ բան կա նրա հոգևոր կյանքում (Աստծո հետ նրա փոխհարաբերության մեջ):

Ճիշտ, սխալ 4. Նորադարձ քրիստոնյաները կարող են մշտապես գտնվել «վայելքի գագաթնակետին», եթե զգուշությամբ հնազանդվեն Աստծո օրենքներին:

Մեր հաջորդ չորս հարցերի համար վերցրո՛ւ օղակի մեջ այն պատասխանը, որը լավագույնս է բնութագրում քեզ և քո զգացմունքները: Այս հարցերից շատերը մեկից ավելի ճիշտ պատասխաններ ունեն:

5. Երբ ինչ-որ մեկը ինձ վիրավորում կամ բարկացնում է, ինձ համար դժվար է նրան ասել, թե ինչ եմ ես զգում:

Ես այդպիսին եմ: Ես մի փոքր այդպիսին եմ: Ես այդպիսին չեմ:

6. Ես, սովորաբար, շատ արագ եմ իմ զգացմունքներն արտահայտում (գործում դրանց ազդեցության տակ):

Ես այդպիսին եմ: Ես մի փոքր այդպիսին եմ: Ես այդպիսին չեմ:

7. Ես, սովորաբար, պահում եմ զգացմունքներս իմ ներսում և չեմ արտահայտում դրանք:

Ես այդպիսին եմ: Ես մի փոքր այդպիսին եմ: Ես այդպիսին չեմ:

8. Ինձ համար դժվար է Աստծուն ասել, թե ինչ եմ զգում, երբ նեղված եմ կամ ընկճված:

Ես այդպիսին եմ: Ես մի փոքր այդպիսին եմ: Ես այդպիսին չեմ:

6. **Մտքի և կամքի որոշման վերանայում**
(3-5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 4-9-րդ էջեր:

Ուսանողներից շատերի համար դժվար կլինի հիշել այն հիմնական բաները, որոնք դու ներկայացնում ես որոշման այս երեք ասպարեզների վերաբերյալ: Հաջորդ երկու կամ երեք դասաժամերին մի քանի րոպե հատկացրո՛ւ վերանայելու համար առաջին դասաժամին ներկայացված որոշման երկու ասպարեզները. մտքի որոշում և կամքի որոշում: Թո՛ւյլ տուր ուսանողներին՝ բացատրել, թե ինչ է դրանցից յուրաքանչյուրը ներառում: Օգտագործի՛ր սա որպես անցում դեպի երրորդ ասպարեզը, որի մասին մենք կքննարկենք այսօր. զգացմունքների որոշում:

7. **Ներկայացրո՛ւ զգացմունքների որոշումը** (2-3 րոպե):

Դասի ջերմացման գործողությունը նրանց ուշադրությունը պետք է ուղղի զգացմունքներին: Ահա մի քանի հարցեր, որոնց, մենք հույս ունենք, որ կպատասխանեն այսօրվա դասաժամին: (Մի՛ փորձիր դրանց պատասխանել այս հատվածում: Կիսվի՛ր դրանցով դասարանի հետ, որպեսզի նրանց տաս այն միտքը, թե ինչ հարցերի համար մենք հույս ունենք անդրադառնալ այսօր):

1. Ի՞նչ տեղ ունեն մեր զգացմունքները ճշմարիտ քրիստոնյա դառնալու մեր փորձաշրջանի ընթացքում:
2. Որքա՞ն կարևոր են մեր զգացմունքները:
3. Ճշմարիտ քրիստոնյա դառնալուց հետո ես պետք է ինձ ա՞յլ կերպ զգամ:
4. Ճշմարիտ քրիստոնյա դառնալուց հետո ես պե՞տք է զգամ Աստծուն իմ կյանքում:

8. **Ինչպե՞ս են քո զգացմունքները ներառված ճշմարիտ քրիստոնյա դառնալու գործընթացում** (5-10 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 10-13-րդ էջեր:

Հղո՛ւմ արա այն օրինակին, որն օգտագործել ես դասի ջերմացման գործողության ժամանակ առ այն, թե որքան տարբեր են մարդիկ արձագանքում նույն իրավիճակին: Սա ճիշտ է նաև այն առումով, թե ինչպես են մարդիկ դառնում ճշմարիտ քրիստոնյա:

Օգտագործի՛ր Սյույի օրինակը, որը գտնվում է Ուսանողի ձեռնարկի 10-11-րդ էջերում: Քննարկի՛ր մի քանի քրիստոնյաների տված սխալ խորհուրդները, այն է՝ դու սեր կզգաս, ուրախություն և խաղաղություն, որն Աստծուց կգա, հենց որ ճշմարիտ քրիստոնյա դառնաս: Սրանք աստվածաշնչյան հիմք չունեն: Իրոք, շատ քրիստոնյաներ բավականին դրական զգացողություններ են ունեցել, երբ իրենց կյանքը հանձնել են

Քրիստոսին: Եվ սա հրաշալի է: Սակայն Սուրբ Գրքում երաշխիք տրված չէ, որ մենք մեզ փրկված «կզգանք», հենց որ ավարտենք մեր կյանքը Քրիստոսին հանձնելու աղոթքը:

2

Շեշտի՛ր, որ ինչպես նորածին երեխան է հարմարվելու բազում դժվարություններով անցնում ծնվելուց հետո մի քանի օրերի, շաբաթների ու ամիսների ընթացքում, այնպես էլ նորադարձ քրիստոնյաներն են անցնում հարմարվելու դժվար ժամանակներով: Նրանք պետք է իմանան, որ Սուրբ Հոգին իրենց կհանդիմանի մեղքի համար, որը հաճախ ուղեկցվում է մեղավորության զգացողությամբ:

9. **Քո զգացմունքները կփոխվեն** (3-5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 11-րդ:

Այս կետը քննարկված է Ուսանողի ձեռնարկի 11-րդ էջի Բ ենթակետում. «**Քո զգացմունքները փոխվում են**»: Բացատրի՛ր, որ շատ նորմալ է, երբ մենք զգացմունքային վերելքներ ու վայրէջքներ ենք ունենում: Սա ճիշտ է նաև այն դեպքում, երբ մարդը դառնում է ճշմարիտ քրիստոնյա: Եթե նրանք զգացմունքային հզոր վերելք են ապրել, երբ դարձել են ճշմարիտ քրիստոնյա, պետք է դրա համար շնորհակալ լինեն, սակայն չպետք է հուսահատվեն, երբ այդ զգացողությունները դադարեն:

Եթե մարդը ճշմարիտ քրիստոնյա դառնալուց հետո զգացմունքային ոչ մի փոփոխություն չունենա, պետք է պարզապես Աստծո ներկայությունը փնտրի իր կյանքում, որը տանում է դրական փոփոխությունների:

Անկախ այն հանգամանքից, թե զգացմունքային ինչ արձագանք ունեցան նրանք, երբ աղոթեցին ճշմարիտ քրիստոնյա դառնալու համար, պետք է իմանան, որ Աստված ուզում է սեր, խաղաղություն և ուրախություն բերել նրանց կյանքում: Այս զգացմունքային արձագանքները չպետք է լինեն այն հիմնական բաները, որոնք մարդը պետք է փնտրի Աստծո հետ իր փոխհարաբերության մեջ: Դրանք Հիսուսի հետ անձնական անկեղծ փոխհարաբերություն զարգացնելու կողմնակի օգուտներն են: Մենք սրա մասին կքննարկենք Ուսանողի ձեռնարկի 3-րդ գլխում. «**Ի՞նչ է նշանակում անձնական փոխհարաբերություն ունենալ Հիսուսի հետ**»:

10. **Քո զգացմունքները պետք է երրորդ տեղը գրավեն, երբ դու դառնում ես ճշմարիտ քրիստոնյա** (5-15 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 11-13-րդ էջեր:

Ցույց տալու համար, թե ինչ տեղ ունեն մեր զգացմունքները ճշմարիտ քրիստոնյա դառնալու գործում, անդրադարձի՛ր այն երկու թեմաներին, որոնք անցանք նախորդ դասերին: Առաջին և ամենակարևոր բանը հստակ պատկերացում ունենալն է, թե ինչ է ասում Աստվածաշունչը ճշմարիտ քրիստոնյա դառնալու վերաբերյալ: Երկրորդը. դու պետք է հստակ որոշում կայացնես՝ քո կամքի որոշումը: Այստեղ է, որ Աստված քեզ կտա հավատ՝ զորություն՝ քո որոշմանը մինչև վերջ հետևելու համար: Մենք կարիք ունենք

մեր զգացմունքներն էլ հանձնել Քրիստոսին՝ դավանելով, որ Նա է հիմա մեր կյանքի իրական Առաջնորդը:

Ուսանողի ձեռնարկի 11-13-րդ էջերում կա տան նկարազարդում, որը ցույց է տալիս այս երեք ասպարեզների միջև եղած հարաբերությունը: Ահա այս նկարազարդման ավելի մանրամասն բացատրություն:

Քո զգացողությունները ճշմարիտ քրիստոնյա դառնալու համար այնքան կարևոր չեն, որքան Աստվածաշնչի փաստարկները հասկանալն ու դրանց հնազանդվելը, դրանք քեզ ասում են, թե ինչպես դառնալ ճշմարիտ քրիստոնյա:

Ա. Կառուցել սեփական տունը:

(Եթե հնարավոր է, այս նկարազարդումը ներկայացրո՛ւ տան նկարներով: Ցո՛ւյց տուր կառուցման տարբեր փուլեր, որոնք համապատասխան կլինեն այս նկարազարդմանը):



Ծրագիր. Եթե դու ուզում ես նոր տուն կառուցել, պետք է նախագիծ ունենաս՝ նախքան կառուցելը սկսելը: Շատ կարևոր է հետևել տան կառուցման նախագծին: Եթե երբևէ տուն չես կառուցել, դու այնպիսի շինարարի օգնության կարիքը կունենաս, ով որ գիտի, թե ինչպես կառուցել:

Հիմք. Երբ հարցը վերաբերում է տուն կառուցելուն, առաջին աշխատանքը, որ դու պետք է անես, հողը խորը փորելն ու հիմք դնելն է: Այս հիմքը պետք է բավականաչափ ամուր լինի, որպեսզի երկար տարիներ հաստատուն պահի քո տունը:

2

Տուն. Երբ համապատասխան հիմքը դրված է, սկսում ես կառուցել տունը: Դու չես օգտագործում ձեռքիդ տակ ընկած ցանկացած հին շինանյութ՝ քո տունը կառուցելու համար: Դու գնում ես հնարավորինս լավագույն և անհրաժեշտ շինանյութերը, որոնք նախագծով են տրված: Տուն կառուցելը կարող է որոշակի ժամանակ պահանջել: Պատերը պետք է կառուցվեն, տանիքը՝ դրվի, իսկ դռներն ու պատուհանները՝ տեղադրվեն:

Տաքություն. Տունը կառուցելուց հետո բուխարին է վառվում, և տաքությունը լցվում է տունը: Հիմարություն կլինի բուխարին վառել՝ նախքան տունն ավարտելը: Երբ բուխարին ճիշտ է աշխատում, տաքությունը կլցնի տունը և այն կդարձնի ապրելու համար հաճելի մի վայր: Տաքությունը չի նպաստում տան ամրությանը: Եթե տունը ճիշտ է կառուցվել, այն հաստատուն ու անվտանգ կլինի՝ անկախ տաքության գոյությունից:

Բ. Նկարագրման կիրառումը:

Ճշմարիտ քրիստոնյա դառնալը կարող է համեմատվել տուն կառուցելու հետ: Եթե դու ուզում ես հաջողակ քրիստոնյա դառնալ, պետք է հետևես Աստծո նախագծին: Դու Սուրբ Հոգու օգնության կարիքը կունենաս ճշմարիտ քրիստոնյա դառնալու համար: Նա մեծ փորձ ունի մարդկանց օգնելու հարցում, որ նրանք «կառուցեն իրենց տունը» (իրենց քրիստոնեական կյանքը):

Հիմք. Եթե ուզում ես ճշմարիտ քրիստոնյա դառնալ, դու նախ և առաջ պետք է ամուր հիմք դնես: Տան մասին այս հատվածը կարող է համեմատվել Աստվածաշնչի փաստարկները հասկանալու և դրանց հնազանդվելու հետ, որոնք քեզ ասում են, թե ինչպես դառնալ ճշմարիտ քրիստոնյա:
Այս փաստարկներն ամուր հիմք են ապահովում, որոնց վրա դու կառուցում ես քո քրիստոնեական կյանքը: Հիսուսը խոստացավ, որ այս փաստարկները երբեք չեն փոխվի: Տե՛ս Մատթեոս 5:18:

Որոշ քրիստոնյաների թվում է, թե իրենց համար հիմք կարող են լինեն իրենց զգացմունքները: Քո զգացմունքները շատ վատ հիմք կլինեն քո քրիստոնեական կյանքի համար: Եթե դու քո քրիստոնեական կյանքը կառուցես «զգացմունքների հիմքի» վրա, քո հոգևոր կյանքի ամրությունն ու ուժն օրեցօր կփոխվեն: Այն օրերին, երբ քեզ լավ ես զգում, դու քեզ ուժեղ քրիստոնյա կզգաս: Բայց երբ այդ լավ զգացողություններն անցնեն, քո «տունը» կսկսի ցնցվել և կարող է տապալվել ու կործանվել:

Միակ ամուր հիմքն այն է, որն Աստված է տվել՝ Իր Խոսքը՝ Աստվածաշունչը:

Կառույց. Դու քո հոգևոր կյանքը կառուցում ես հավատով: Հավատն այն զորությունն է, որն Աստված տալիս է քեզ, որ կառուցես Աստծո Խոսքի ամուր հիմքի վրա: Դու չես կարող ինքդ քեզնով դառնալ հաջողակ քրիստոնյա: Դու Սուրբ Հոգու օգնության կարիքն ունես, Ով քո Ուսուցիչն է և Առաջնորդը:

Նա է ապահովում քեզ պետք եղած շինանյութերը և նաև սովորեցնում է, թե ինչպես կառուցես քո քրիստոնեական կյանքը:

Որոշ մարդիկ դառնում են ճշմարիտ քրիստոնյա և «ճիշտ հիմք են զցում»: Նրանք հետևում են Աստվածաշնչի փաստարկներին և դառնում են ճշմարիտ քրիստոնյա: Բայց և այնպես, նրանք սխալվում են՝ փորձելով կառուցել և պահպանել իրենց քրիստոնեական կյանքը զգացմունքների վրա: Քո զգացմունքներն «ամուր պատեր», կամ «ամուր տանիք», կամ «լավ դռներ ու պատուհաններ» չեն դառնա: Զգացմունքներն այն «շինանյութերը» չեն, որոնք նախատեսված են Աստվածաշնչով:

Եթե դու ուզում ես ամուր քրիստոնեական կյանք ունենալ, պետք է հետևես Աստծո ծրագրին, որը գտնվում է Աստվածաշնչում: Դու պետք է օգտագործես Նրա ասած «շինանյութերը» և քո «տունը» կառուցես Նրա ասած ձևով: Նա՛ պետք է լինի Ղեկավարը:

Եթե դու քո զգացմունքներն օգտագործես որպես «շինանյութ», որով ուզում ես կառուցել քո «տունը», ապա դա ապրելու համար վտանգավոր տեղ կլինի: Որոշ օրեր պատերն ամուր կլինեն, իսկ որոշ օրերի ընթացքում՝ կքանդվեն: Քո ամենօրյա քրիստոնեական աճը պետք է կառուցվի ոչ թե քո գործերի կամ կամքի ուժի վրա, այլ Սուրբ Հոգու օգնությամբ և զորությամբ:

Տաքություն. Մեր զգացմունքները զբաղեցնում են երրորդ տեղը: Քո զգացմունքները կարող են համեմատվել տաքության հետ, որ լցնում է տունը: Քո զգացմունքները քո հոգևոր կյանքն մի փոքր ավելի ուրախ են դարձնում: Եթե դու հասկանաս քո զգացմունքների դերը քո ամենօրյա հոգևոր կյանքում, որպես հավատացյալ կարող ես ապահով մնալ՝ անկախ այն բանից՝ զգացմունքները կգա՞ն, թե՞ կգնան:

Տունը տուն է՝ անկախ այն բանից՝ տաքություն կա՞ այնտեղ, թե՞ չկա: Սա նույնն է նաև ճշմարիտ քրիստոնյա լինելու հարցում: Դու ճշմարիտ քրիստոնյա ես, քանի որ ճիշտ հիմք ես դրել և կառուցել ես քո «տունն» Աստծո օգնությամբ և Նրա տված «շինանյութերով»: Եթե զգացմունքները հեռացել են, եթե քեզ ճշմարիտ քրիստոնյա չես զգում, եթե Աստծո ներկայությունը շարունակ չես զգում, անհանգստանալու կարիք չկա, ամեն բան կարգին է: Քո «տունը» շարունակում է հաստատուն կանգնել:

11. **Ի՞նչ զգացմունքներ են ներառված ճշմարիտ քրիստոնյա դառնալու գործընթացի մեջ** (5-10 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 13-րդ:

Այս հարցի քննարկման համար ուսանողները թող օգտագործեն իրենց պատասխանները, որոնք տվել են Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 2-րդի առաջին մասում: Հիմնական միտքը, որ մենք ուզում ենք այստեղ ընդգծել, այն է, որ կան բազմաթիվ զգացմունքներ, որոնք կարող են ճիշտ լինել ճշմարիտ քրիստոնյա դառնալու գործընթացում: Դու կարող ես կարդալ Նախագիծ 2-րդում նշված աստվածաշնչյան համարները:

2

12. **Փրկության ժամանակ զգացմունքային արձագանքների անձնական փորձառություն** (3-5 րոպե):

Թող մի քանի ուսանողներ կիսվեն իրենց փորձառությամբ, որ ունեցել են ճշմարիտ քրիստոնյա դառնալիս: Ասա՛ նրանց, որ սահմանափակվեն այն զգացմունքների նկարագրությամբ, որ իրենք ունեցել են այդ պահին: Նրանք կարող են օգտագործել իրենց պատասխանները, որոնք այս կետի վերաբերյալ տվել են Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 2-րդի մաս 2-րդում:

13. **Ներկայացրո՛ւ Գ-3. կետը. «Իմացի՛ր, թե ինչպես է Քրիստոսն ուզում, որ դու արտահայտես քո զգացմունքներն ամեն օր»** (3-5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 13-րդ:

Երբ մարդը դառնում է ճշմարիտ քրիստոնյա, բազմաթիվ հնարավորություններ է ունենում իր զգացմունքներն արտահայտելու համար: Նա կարող է որոշում կայացնել. կամ սովորել իր կյանքի այս ասպարեզը հանձնել Քրիստոսին, կամ էլ՝ շարունակել զգացմունքային իմաստով արձագանքել այնպես, ինչպես ուզում է, և անտեսել, թե այս առումով ինչ ունի Քրիստոսն ասելու: Երբ խոսում ենք զգացմունքային որոշում կայացնելու մասին՝ որպես ճշմարիտ քրիստոնյա դառնալու մի մաս, մենք նկատի չունենք, թե ինչ ես դու զգում այն պահին, երբ դառնում ես ճշմարիտ քրիստոնյա: Դա ներառում է քո կյանքի այդ ասպարեզն ամեն օր Քրիստոսին հանձնելը: Նվիրման քո որոշումը, որ ընդունել ես փրկվելու պահին, ընդամենը ելակետային է ճշմարիտ քրիստոնյա դառնալու համար:

Այս դասի տարբեր կետեր քննարկելիս մենք ուզում ենք կենտրոնանալ զգացմունքային այն փոփոխությունների վրա, որոնք կապ ունեն ճշմարիտ քրիստոնյա դառնալու և Քրիստոսի հետ ամուր փոխհարաբերություն պահպանելու հետ: Եթե ժամանակ ունես, ապա կարող ես հեշտությամբ ընդարձակել քննարկումը:

Որոշ ուսանողներ կարող են անցյալից մնացած զգացմունքային խորը վերքեր ունենալ: Սա հատկապես ճշմարիտ է նրանց համար, ովքեր ֆիզիկական կամ սեռական բռնության են ենթարկվել, կամ քանդված ընտանիքներում են մեծացել: Մենք պետք է զգույշ լինենք, որպեսզի տպավորություն չստեղծենք, որ այս 15 րոպեանոց քննարկումը կարող է տալ այն բոլոր պատասխանները, որի կարիքը նրանք ունեն իրենց խնդիրները լուծելու համար: Հորդորի՛ր նրանց՝ քեզ հետ որևէ լուրջ խնդիր առանձին քննարկելու համար, խնդիր, որ նրանք ունեն իրենց կյանքի այս ասպարեզում:

14. Անցկացրո՛ւ ա. ենթակետը. «Քո զգացմունքները ենթարկի՛ր Հիսուս Քրիստոսի առաջնորդությանը»
(3-5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 13-14-րդ էջեր:

Շատերը զգացմունքային արձագանքները համարում են իրենց կյանքի խիստ անձնական մասը. «Ո՞վ ես դու, որ ինձ ասես, թե ինչ պետք է ես զգամ»: Երբ մենք մեր զգացմունքները հանձնում ենք Տիրոջը, ասում ենք. «Տե՛ր, ես քեզ ազատություն եմ տալիս՝ ինձ ասելու, թե զգացմունքային առումով ինչպես արձագանքեմ և ինչպես չարձագանքեմ: Ես ուզում եմ պահպանել իմ ինքնությունը, բայց նաև ուզում եմ հաճեցնել Քեզ, երբ իմ զգացմունքներով արձագանքում եմ առօրյա իրավիճակներին»:

Սա չի նշանակում, որ Հիսուսը մեզ կստիպի ինչ-որ կոնկրետ զգացմունքներ ունենալ: Մենք ռոբոտ չենք դառնում: Դրանք դեռևս մեր զգացմունքներն են, և մենք ենք պատասխանատու, թե ինչպես ենք արձագանքում: Մենք չենք կարող ասել. «Ես իմ զգացմունքները հանձնել եմ Քրիստոսին, այնպես որ, եթե քեզ վրա բարկանամ, ուրեմն Աստված է ուզում, որ ես քեզ հետ այդպես վարվեմ»:

Շեշտի՛ր սեփական զգացմունքներին հասուն կերպով տիրապետելու կարևորությունը: Մեր զգացմունքները չպետք է ղեկավարեն մեր կյանքը: Քրիստոսը պետք է լինի մեր կյանքի այս ասպարեզի Տերը: Զգացմունքներն Աստծուն հանձնելը դեռ չի նշանակում դադարել մեր ինքնությունից: Դա, սովորաբար, նշանակում է փոխել զգացմունքներն արտահայտելու վերաբերմունքն ու վարքը: Մատնանշի՛ր, որ սա աճի ընթացք է և կարող է տևել շաբաթներ, ամիսներ և նույնիսկ տարիներ:

15. Անցկացրո՛ւ բ. ենթակետը. «Սովորի՛ր ճիշտ զանազանել քո զգացմունքները»
(3-5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 14-15-րդ էջեր:

Շատ մարդիկ դժվարանում են վերահսկել իրենց զգացմունքները: Եթե դու հարցնես տվյալ անձնավորությանը, թե ինչ էր նա զգում հուզմունքի պահին, հնարավոր է՝ նա նույնիսկ ի վիճակի չլինի նկարագրել, թե ինչ էր զգում: Սովորել ճիշտ զանազանել սեփական զգացմունքները՝ շատ կարևոր քայլ է այստեղ:

Խնդրի՛ր ուսանողներին՝ թվարկել տարբեր զգացողություններ: Այնուհետև թող նրանք նկարագրեն մի իրավիճակ, որում ունեցել են տվյալ զգացողությունը: John Powell-ի՝ «Why Am I Afraid to Tell You Who I Am?» գրքում՝ 3-րդ և 4-րդ գլուխներում, կան հրաշալի տեղեկություններ զգացմունքների վերաբերալ: Դու կարող ես նրա մի քանի մեկնաբանություններ ներառել այս դասի մեջ: Կարող ես նաև ասել քո ուսանողներին, որ կարդան այդ գլուխները:

2

16. **Անցկացրո՛ւ գ. ենթակետը. «Սովորի՛ր աղոթքի միջոցով զգացմունքային ազատագրում գտնել»** (5-10 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 15-16-րդ էջեր:

Սա շատ կարևոր քայլ է յուրաքանչյուր նորադարձ քրիստոնյայի համար: Եթե նրանք կարողանան սկսել խոսել Աստծո հետ այն մասին, թե ինչ են իրենք զգում, ապա ճիշտ ճանապարհի վրա կլինեն: Հորդորի՛ր նրանց՝ կարդալ սաղմոսները, որ տեսնեն, թե ինչպես էր Դավիթ թագավորն իր զգացմունքները նկարագրում Աստծուն: Քաջալերի՛ր նրանց, որ երբ հուսահատված լինեն, Աստծուն ճշգրիտ ասեն, թե ինչ են իրենք զգում:

Քաջալերի՛ր նաև, որ խնդրեն Աստծուն՝ լցնել իրենց կյանքը զգացմունքային այնպիսի արձագանքներով, ինչպիսին Նա կուզենար, որ նրանք ունենային: Օրինակ, նրանք պետք է Աստծուն խնդրեն, որ օգնի իրենց՝ սիրել տվյալ անձնավորությանը, ում նրանք դժվարանում էին սիրել: Խնդրեն Աստծուն՝ մտքի խաղաղությամբ փոխարինել անհանգստությունն ու լարվածությունը, որոնք այնքան հեշտությամբ են ներխուժում: Խնդրեն, որ տխրությամբ փոխարինվի բարկությունը, որը նրանք զգում են ինչ-որ մեկի հանդեպ, ով նրանց դեմ մեղք է գործել:

17. **Անցկացրո՛ւ դ. ենթակետը. «Սովորի՛ր մարդկանց հետ խոսել քո զգացմունքների մասին»** (5-10 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 16-րդ:

Մարդիկ մեծ մասամբ իրենց զգացմունքները փոխանցում են մյուսներին՝ նրանց հանդեպ իրենց արձագանքների միջոցով: Քո ուսանողներին բացատրի՛ր, որ մենք ուզում ենք, որ իրենք սովորեն բառերով և ձայնի բնական տոնով փոխանցել իրենց զգացածը: Դու կարող ես հնարավորություն տալ նրանց՝ փորձել փոխանցման այս ձևը: Մի քանի իրավիճակների օրինակնե՛ր բեր, որտեղ նրանք սովորաբար բարկությամբ կարձագանքեին: Խնդրի՛ր նրանց՝ դերակատարման միջոցով բացատրել մեկ այլ անձնավորության հանդեպ զգացածը՝ բարկացած բառերով և գործողություններով իրենց զգացմունքն արտահայտելու փոխարեն: John Powell-ի՝ «Why Am I Afraid to Tell You Who I Am?» գրքում՝ 3-րդ և 4-րդ գլուխներում, հրաշալի մտքեր կան այս թեմայի վերաբերյալ:

Քո ուսանողների հետ քննարկի՛ր, թե ինչու է կարևոր մարդկանց հետ քո զգացմունքների մասին խոսելը: Պատճառներից մեկը կարող է լինել վիճաբանությունը հանդարտեցնելը կամ կանխելը: Մեկ այլ պատճառ կարող է լինել ընկերոջ կամ ընտանիքի անդամի հետ ավելի խորը փոխհարաբերություն զարգացնելը: Ընդգծի՛ր, որ կարևոր է, որ սա սովորեն անել ընտանիքի անդամների, հատկապես՝ քո երեխաների հետ:

Այստեղ հավասարակշռության կարիք կա: Մենք չպետք է վարվենք՝ «ինչ լինում է, թող լինի» սկզբունքով: Լինում են պահեր, երբ հասուն պատասխանը կարող է լինել մեր զգացմունքների մասին լռելը: Եթե դու քեզ մի փոքր ընկճված և վիատված ես զգում, կարիք չկա, որ բոլորին պատմես քո

խնդիրների մասին: Բայց և այնպես, եթե դու ի վիճակի չես ինքնուրույն հաղթահարել դա, հավանաբար օգտակար կլինի այդ մասին ընկերոջ կամ ընտանիքի անդամի հետ առանձին զրուցելը:

18. Անցկացրո՛ւ ե. ենթակետը. «Սովորի՛ր ավելի զգացմունքային արտահայտվել» (3-5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 17-րդ:

Հիմնական միտքը, որը մենք այստեղ ուզում ենք փոխանցել, այն է՝ Աստված ուզում է, որ դու վայելես բոլոր զգացմունքները, որոնք Նա ստեղծել է քո մեջ: Որպես քրիստոնյա՝ դու մեծ ներուժ ունես Հիսուսի օգնությամբ ավելի բարձր մակարդակի խաղաղություն, ուրախություն և սեր դրսևորելու համար:

19. Անցկացրո՛ւ զ. ենթակետը. «Զգո՛ւյշ եղիր «զգացմունքային կախվածություն» ունեցող քրիստոնյաներից» (3-5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 17-18-րդ էջեր:

Լուրջ խնդիրներ կան՝ կապված որոշ ուսուցումների հետ, որոնք քրիստոնյաների մի մասն այսօր ընդունում է: Չափից ավելի է շեշտադրվում՝ «լավ զգացողությունները, որ Աստված քեզ կտա» միտքը: Նրանք խոստանում են, որ դու առատ սեր, ուրախություն և խաղաղություն կունենաս: Եթե դու դրանք քո կյանքում չես զգում, ուրեմն, ասում են նրանք, դու թույլ ես տալիս, որ սատանան դրանք քեզնից թալանի: Քաջալերի՛ր քո ուսանողներին, որպեսզի ուշադիր ուսումնասիրեն, թե ինչ է ասում ընդհանուր Աստվածաշունչը, այլ ոչ թե այստեղից կամ այնտեղից վերցրած մեկ կամ երկու համար:

Աստված չի խոստանում, որ քրիստոնյաներն ամեն օր «զգացմունքային վերելք» կապրեն: Նա խոստանում է, որ միշտ քեզ հետ կլինի և կօգնի դժվարին պահերին: Քաջալերի՛ր նրանց՝ ակնկալել, որ զգացմունքային վերելքներ կգան ու կգնան: Սա կյանքի բնականոն ընթացք է:

20. Անձնական կիրառություն (5 րոպե):

Այսօրվա անձնական կիրառությունը կենտրոնացրո՛ւ այն բանի վրա, որ, ընդունելով քո փոփոխական զգացմունքները, թույլ չտաս, որ դրանք որոշեն քո՝ ճշմարիտ քրիստոնյա լինելը: Ահա մի քանի նախագծեր, որոնք կարող են օգնել և աճի պայման հանդիսանալ քո կյանքի այս ասպարեզում:

Ա. Աղոթի՛ր քո զգացմունքների համար:

Աղոթքի մեջ խոստովանի՛ր Աստծուն քո զգացմունքները: Հատուկ ուշադրությո՛ւն դարձրու՝ Աստծուն հստակ ասելու համար, թե ինչ ես դու զգում քեզ հանդիպող դժվարին իրադրությունների ժամանակ: Նրան ասա՛ նաև այն մասին, թե ինչ ես դու զգում այսօր քեզ հանդիպած լավ իրադարձությունների դեպքում: Իրականում դու կարող ես Աստծո հետ խոսելու համար ժամանակ հատկացնել հենց դժվարություններով անցնելիս:

Աստծուն ճշգրիտ պատմելը, թե ինչ ես դու զգում, կարող է թուլացնել այն լարվածությունը, որը միգուցե արդեն հասունանում է քո մեջ:

2

Բ. Օրագիր՝ քո զգացմունքների համար:

Քո զգացմունքների գրառման օրագի՛ր պահիր՝ առնվազն մեկ շաբաթվա համար: Փորձի՛ր ճշգրտորեն պիտակավորել, թե ինչ զգացմունքներ ես դու ունենում օրվա ընթացքում քեզ հանդիպած դժվարին իրավիճակներում: Դու կարող ես ինքդ քեզ գնահատել՝ պատասխանելով այս հարցին. «Արդյո՞ք ես Աստծուն հաճելի զգացմունքով արձագանքեցի: Ինչպե՞ս արտահայտեցի այդ զգացմունքը: Արդյո՞ք դա Աստծուն հաճելի էր»:

Գ. Աստվածաշնչյան ուսումնասիրություն զգացմունքների վերաբերյալ:

Աստվածաշնչյան ուսումնասիրությո՛ւն կատարիր՝ հայտնաբերելու համար, թե ինչ է ասում Աստվածաշունչը լավագույն ձևով քո զգացմունքներն արտահայտելու վերաբերյալ: Փորձի՛ր գտնել գործնական ճանապարհներ՝ քո զգացմունքներն Աստծուն հաճելի ձևով գործածելու համար:

Դ. Համաձայնագիր ընկերոջ կամ բարեկամի հետ:

Համաձայնագի՛ր կնքիր քո կողակցի կամ ընկերոջ հետ, որպեսզի միմյանց մեջ բացահայտեք կամ պարզաբանեք այն զգացմուքները, որոնք դուք նկատում եք: Այս փոխադարձ հաշվետվությունը երկուսիդ էլ հնարավորություն կտա՝ սովորել ճիշտ պիտակավորել մյուսների արտահայտած զգացմունքները: Դա նաև քեզ հնարավորություն կտա քո զգացմունքների վերաբերյալ անկեղծ լինել այն անձնավորության հետ, ում դու վստահում ես: Եթե դա դեմ առ դեմ, բանավոր իրականացնելը շատ դժվար թվա, ապա կարող եք ձեր գնահատականը գրել և փոխանցել իրար:

Ե. Դեպքի ուսումնասիրություն:

Ուսումնասիրի՛ր ու գնահատի՛ր հետևյալ դեպքը և կողմնորոշվի՛ր, թե որը կլիներ լավագույն հնարավորությունը՝ օգնելու համար ստորև բերվող օրինակում նշված մարդուն, որպեսզի վերջինս ավելի լավ հասկանա, թե ինչպես է Աստված ուզում, որ նա արտահայտի իր զգացմունքները և ինչ չափով կախված լինի դրանցից:

Այդ անձնավորության անունը փոխի՛ր կնոջ անունով, եթե քո դասարանում միայն կանայք են:

Օրինակ. Էդուարդն ընդամենը վեց օր առաջ է բացահայտ դավանել Քրիստոսին և խնդրել, որ Նա դառնա իր կյանքի Առաջնորդը: Առաջին երկու օրերն Էդուարդի համար ցնցող էին: Ուրախությունն ու խաղաղությունը, որ հեղեղել էին նրա կյանքը, ակնհայտ էին նրա հետ բոլոր շփվողների համար:

Սակայն երեկ Էդուարդի կյանքում անկում տեղի ունեցավ: Նա իմացավ, որ իր կինը պատրաստվում է լքել իրեն: Նրա կինն ասաց, որ այլևս չի սիրում

իրեն: Նախորդ մի քանի օրվա ուրախությունն ու խաղաղությունը միանգամից անհետացան: Էդուարդի կյանքում հիմա իշխում են մռայլությունն ու հուսահատությունը: Էդուարդը քեզ ասում է. «Եթե Աստված իրոք սիրեր ինձ, Նա թույլ չէր տա, որ այս բանը տեղի ունենար ինձ հետ: Եթե քրիստոնյա լինելը սա է, ապա ես չեմ ուզում»:

Ի՞նչ կասեիր դու Էդուարդին: Աստվածաշնչյան ի՞նչ համարներ դու կօգտագործեիր Էդուարդին օգնելու համար, որ նա տեսնի, թե ինչ է Աստված անում նրա կյանքում: Ինչպե՞ս դու կփորձեիր համոզել Էդուարդին, որ նա դեռևս քրիստոնյա է, և Աստված իրոք սիրում է նրան: Ի՞նչ խորհուրդ կտայիր նրան այն տեղի վերաբերյալ, որում նրա զգացմունքները պետք է լինեն իր քրիստոնեական կյանքում:

21. Հանձնարարություններ:

Ա. Դասի վերջում տո՛ւր հարցաշար այն ութ փաստարկների վերաբերյալ, որոնք պետք է իմանալ և որոնց պետք է հավատալ ճշմարիտ քրիստոնյա դառնալու համար: Տե՛ս Ուսանողի ձեռնարկի 6-րդ էջը:

1. Աստված կա: Եբրայեցիներին 11:6
2. Աստվածաշունչը ճշմարիտ է: Բ Տիմոթեոս 3:16
3. Ես մեղավոր եմ և խախտել եմ Աստծո օրենքները: Հռոմեացիներին 3:23
4. Աստված սիրում է ինձ և ուղարկել է Իր Միածին Որդուն՝ ապրելու և մահանալու ինձ համար: Հովհաննես 3:16
5. Միայն Հիսուսը կարող է ներել իմ մեղքերը: Գործք, 4:12
6. Մեղքի պատիժը մահն է: Հռոմեացիներին 6:23
7. Ես կարող եմ փրկվել մեղքի պատժից իմ մեղքերը Հիսուսին խոստովանելով և Նրանից ներում խնդրելով: Ա Հովհաննես 1:9
8. Ես կարող եմ դառնալ ճշմարիտ քրիստոնյա, եթե հիմա թույլ տամ, որ Հիսուսը դառնա իմ կյանքի Առաջնորդը: Հռոմեացիներին 10:9-10

Բ. Գնահատակա՛ն դիր Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 2-րդի՝ «Իմ զգացմունքները» բաժնի համար:

Գ. Ժամանա՛կ հատկացրու համառոտ բացատրելու համար Նախագիծ 5-րդը՝ «Գրի՛ր քո պատմությունը»: Նրանք բավականին ժամանակ ունեն այս նախագծի վրա աշխատելու համար, սակայն պետք է անմիջապես գործի անցնեն: Հետևի՛ր, որ նրանք պատմություն գրեն, այլ ոչ թե հաշվետվություն, որը պարզապես տեղեկություն է փոխանցում:

2

22. Նյութի հավելյալ աղբյուր:

Հաջորդ երկու էջերում կան երկու հարցեր, որոնք կապ ունեն զգացմունքների հետ. «**Կարո՞ղ է մարդն իրականում սովորել՝ զգալ Աստծո ներկայությունը**», և «**Ինչպե՞ս վերաբերվել քո նախկին մեղսալից կյանքի շուրջ ապրվող զգացմունքներիդ հետ**»:

Եթե ժամանակ ունես, ապա կարող ես այս թեմաները քննարկել դասաժամերից մեկի ընթացքում:

23. Դասի գնահատում:

Խնդրում եմ՝ գրի՛ր մտքեր այս դասի բարելավման համար:
Ո՞ր հատվածներն էին լավագույնս աշխատում:
Ո՞ր մասերն էին ուսանողների համար դժվարհասկանալի:
Ի՞նչն ամենաօգտակարը թվաց քո ուսանողներին:

Ուսուցչի նշումներ

Կարո՞ղ է մարդն իրականում սովորել՝ զգալ Աստծո ներկայությունը:

Շատ անգամ նորադարձ քրիստոնյաներին շփոթեցնում է այն ձևը, որով հին քրիստոնյաները խոսում են Աստծո հետ ունեցած իրենց փոխհարաբերությունների մասին: Նրանք գնում են եկեղեցի և լսում են, որ հովիվն ասում է. «Դուք զգո՞ւմ եք Աստծո ներկայությունն այս առավոտ: Այն հրաշալի է, այնպես չէ՞»: Նորադարձ քրիստոնյան շուրջն է նայում՝ մտածելով, թե ինչ պետք է ինքը զգար:

Քաջալերի՛ր նրանց, որ շատ զգույշ լինեն այդ տեսակի արտահայտություններից: Սովորեցրո՛ւ նրանց՝ հաստատուն կանգնել Աստծո աստվածաշնչյան խոստումների վրա: Աստված խոստացել է մեզ հետ լինել, երբ մենք հավաքվենք Նրան պաշտելու համար: Նա ներկա է անկախ այն բանից՝ զգո՞ւմ ես դու Նրան, թե՞ ոչ: Զգացմունքներն այս հարցում բացարձակապես կարևոր չեն, կարևորն այն է, որ Աստված ներկա է:

Նշի՛ր, որ ոմանք շատ շուտ են զգացմունքային ապրումներ ունենում, երբ մարդկանց բազմության մեջ են: Տեխնիկական բառը «ամբոխային հոգեբանություն» կամ «մասսայական հիստերիա» է: Որոշ խոսնակներ բավականին արդյունավետ կերպով կարողանում են ազդել մարդկանց զգացմունքների վրա: Բացատրի՛ր, որ սա չի կարելի մեկնաբանել որպես՝ «Աստծուն զգալ»:

Մեկ այլ օրինակ կարող է հստակեցնել սույն հարցը: Երբ դու տանն ես՝ քո ընտանիքի հետ, «զգո՞ւմ» ես ընտանիքի մյուս անդամների ներկայությունը: Օրինակ, դու նստած ես հյուրասենյակում, և ընտանիքիդ անդամներից մեկը կամ մի քանիսը ներս են մտնում: Դու գիտես, որ նրանք ներկա են, քանի որ լսում և տեսնում ես նրանց: Դու զգացմունքային ապրո՞ւմ ես ունենում, երբ նրանք սենյակ են մտնում: Երբեմն՝ հնարավոր է: Երբ դու փորձում ես հանգստանալ, իսկ նրանք ներս են գալիս և աղմկում, դու կարող ես անմիջապես զգալ, թե ինչպես է բարկություն առաջանում քո ներսում: Կամ, եթե դու երիտասարդ ես, և քո սիրելին է ներս գալիս, դու, հնարավոր է, անմիջապես զգաս, թե ինչպես են սիրո զգացմունքներ առաջանում քո ներսում:

Սակայն մի պահ վերհիշի՛ր այսօր տեղի ունեցած տարբեր իրադարձություններ, որոնցից մեծ մասը սովորական դեպքեր են: Դու ամեն անգամ զգացմունքային խորը ապրո՞ւմ ես ունենում, երբ ինչ-որ մեկը ներս է գալիս կամ դուրս է գնում սենյակից: Հավանաբար՝ ոչ: Եվ սա նորմալ է:

Այնպես որ, մի՛ զարմացիր, եթե ամեն անգամ եկեղեցի գալիս չզգաս Աստծո ներկայությունը: Շատ անգամ դու կարող ես անել որոշակի գործողություններ, որոնք կհեշտացնեն Աստծո ներկայությունը զգալը: Նրան աղոթելը, Նրա մասին մտածելը, Աստվածաշունչ կարդալը գործողություններ են, որոնք կարող են քեզ օգնել՝ քո ողջ ուշադրությունը Նրա վրա կենտրոնացնելու և վստահ լինելու համար, որ Նա ներկա է:

Ինչպե՞ս վերաբերվել քո նախկին մեղսալից կյանքի շուրջ ապրվող զգացմունքներիդ հետ:

2

Սատանան հաճախ փորձում է հուսահատեցնել նորադարձ քրիստոնյաներին՝ մեղադրելով նրանց: Նա քեզ կօգնի՝ վերհիշելու քո հին կամ նոր ձախողումները և կասի. «Դու իրո՛ք մեղք գործեցիր: Դու պետք է քեզ իրո՛ք վատ զգաս քո կատարած վատ բաների համար: Իսկ դու գիտես, թե որքան սուրբ և կատարյալ է Աստված: Ապա նայի՛ր քո մեղքերին: Ի՜նչ ահավոր են քո սխալները: Դու երբեք չես կարողանա հասնել Աստծո սրբության չափանիշին»:

Սատանայի այս տեսակի մեղադրանքները հեշտությամբ կարող են հիասթափեցնել նորադարձ քրիստոնյային և տանել Աստծուց հիասթափվելուն: Քաջալերի՛ր նրանց, որ կանգնեն Աստծո խոստումների վրա՝ հատկապես Ա Հովհաննես 1:9-ի: Երբ դու խոստովանում ես քո մեղքերը, Աստված հաստատ ներում է քեզ: Կարիք չկա ամեն օր նույն մեղքը խոստովանել: Եթե դու առաջին անգամ անկեղծորեն խոստովանել ես քո մեղքը, դա հենց այն է, ինչ պետք է անեիր: Աստված կպահի քեզ ներելու Իր խոստումը:

Սատանան իր կարողության սահմաններում ամեն բան կանի, որպեսզի մոլորեցնի քեզ. «Եթե Աստված ներել է քեզ, ուրեմն ինչո՞ւ ես դեռ քեզ մեղավոր զգում այդ մեղքի համար: Դու դեռ ամաչում ես ու վատ ես զգում այդ ահավոր մեղքի պատճառով»: Ասա՛ ուսանողներին, որ համաձայնվեն այն մտքի հետ, որ իրենք իրո՛ք մեղք են գործել:

Քաջալերի՛ր նրանց՝ հակադարձելու համար սատանայի մտքերին նրանով, որ Աստված արդեն ներել է այդ մեղքերը, և հիմա նրանք խաղաղություն են վայելում՝ իմանալով, որ Աստված շարունակում է սիրել իրենց: Հիմա նրանք իրենց ուշադրությունը պետք է ուղղեն Աստծուն և շնորհակալություն հայտնեն Նրան Իր սիրո և ներողամտության համար: Օգտագործի՛ր այս առիթը՝ խնդրելու Աստծուն՝ օգնել, որ նրանք ուժեղ լինեն և կրկին չընկնեն այդ նույն մեղքի մեջ: Բայց եթե նույնիսկ նրանք կրկին ընկնեն, ապա պետք է իմանան, որ Աստված կների նրանց, եթե անկեղծ սրտով խոստովանեն իրենց անկումը:

Նրանց նախկին մեղսալից կյանքից եկող զգացմունքային որոշ վերքերի բուժման համար, հնարավոր է, քրիստոնեական խորհրդատուի կարիք զգացվի: Հորդորի՛ր նրանց՝ հնուց եկող լուրջ խնդիրներ ունեցողներին, որ օգնության համար դիմեն խորհրդատուի:

Դաս 3.
Փաստարկներ. Աստվածաշունչը և Սուրբ Հոգին

1. **Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն:**

Ես սովորելու կարիք ունեմ՝ լսել Սուրբ Հոգու ձայնը, երբ Նա խոսում է ինձ հետ:

2. **Բանալի համար. Հռոմեացիներին 8:9.**

«Բայց դուք մարմնականի մեջ չեք, այլ՝ Հոգու, եթե Աստծո Հոգին բնակված է ձեր մեջ: Իսկ եթե մեկը Քրիստոսի Հոգին չունի, նա Նրանը չէ:

3. **Հղում ուսանողական նյութերին:**

Ուսանողի ձեռնարկի 19-25-րդ էջերը համընթաց են այս դասի հետ: Ուսուցման ուղեցույցի Նախագիծ 6-րդը՝ «Փնտրել փաստարկներ», նույնպես կօգտագործվի այս դասին:

Տեղեկություն ուսուցչի նախապատրաստական աշխատանքի վերաբերյալ*:

Խնդրում եմ՝ ներքևում գտնվող 4-8-րդ կետերին անդրադարձի՛ր այս դասն անցկացնելուց մի քանի օր առաջ: Դրանցում դու կարիք կունենաս մի քանի կարևոր որոշումներ ընդունել, որը կազդի այս դասի ծրագրման վրա:

4. * **Երկու դասընթացի տարբերակ:**

Եթե քո դասացուցակը թույլ է տալիս, կարող ես դասի թեման բաժանել և ուսուցանել երկու դասաժամով: Առաջին դասաժամին դուք կանցնեք Աստվածաշնչում եղած փաստարկները, որոնք ցույց են տալիս, որ տվյալ անձնավորությունը ճշմարիտ քրիստոնյա է: Երկրորդ դասաժամին կքննարկեք այն փաստարկները, որոնք Սուրբ Հոգին է տալիս այն մասին, որ տվյալ անձնավորությունը ճշմարիտ քրիստոնյա է: Ահա առաջարկված Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն և Բանալի համար, որոնք կարող են օգտագործվել աստվածաշնչյան փաստարկների վերաբերյալ:

Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն. Ես կարիք ունեմ օգտագործելու Աստվածաշունչը՝ որպես գործիք՝ փաստեր հավաքելու համար, որ ես ճշմարիտ քրիստոնյա եմ:

Բանալի համար. Բ Տիմոթեոս 2:15:

3

5.* Մեկ դասաժամով դասի ծրագիր:

Հետագա էջերում տրված դասի ծրագիրը ներկայացնում է այդ երկու թեմաները (փաստարկներ Աստվածաշնչից և փաստարկներ Սուրբ Հոգուց) մեկ դասաժամում ուսուցանելու առաջարկ: Եթե սա ուսուցանելու ես մեկ դասաժամում, դու պետք է զգուշությամբ կազմակերպես, թե ինչ համամասնությամբ բաժանել քո ժամանակն այս երկու թեմաների միջև:

6.* Երկու մոտեցումներ աստվածաշնչյան փաստարկներն անցնելու համար:

Այս դասի առաջին կեսը կենտրոնանում է աստվածաշնչյան փաստերի վրա: Գոյություն ունի այս դասին մոտենալու երկու տարբերակ՝ կախված քո ուսանողների հոգևոր հասունությունից:

Ա. Պարզ տարբերակ:

Պարզագույն տարբերակն Աստվածաշունչը որպես մի գիրք նայելն է, որը մեզ տեղեկություն է տալիս, թե արդյո՞ք տվյալ անձնավորությունը ճշմարիտ քրիստոնյա է: Ժամանա՛կ հատկացրու՝ քննարկելու համար աստվածաշնչյան այդ համարները և բացատրելու, թե ինչպես մենք կարող ենք իմանալ, որ այդ համարները ճշմարիտ են մեր կյանքում:

Բ. Բարդ տարբերակ:

Դասի առաջին մասին մոտենալու համար առավել բարդ տարբերակը հետազոտելն է այն բանի, թե ինչպես մենք կարող ենք օգտագործել Աստվածաշունչը՝ որպես փաստարկներ հավաքելու գործիք, որոնք ցույց են տալիս, որ տվյալ անձնավորությունը ճշմարիտ քրիստոնյա է: Քննարկումը կենտրոնացրո՛ւ Աստվածաշունչը ճիշտ ուսումնասիրելու անհրաժեշտության վրա: Հետազոտի՛ր, թե ինչպես կարող ենք մենք ճիշտ մեկնաբանել և կիրառել Աստծո խոստումները մեր կյանքում և արդյունքներ տեսնել:

7.* Գնահատի՛ր ուսանողների իմացությունը Սուրբ Հոգու վերաբերյալ:

Նախքան դու կսկսես ուսուցանել դասի երկրորդ մասը, որը վերաբերում է Սուրբ Հոգուց մեզ տրված փաստարկներին, դու անհրաժեշտություն կունենաս խորապես գնահատելու, թե որքան գիտեն քո ուսանողները Սուրբ Հոգու մասին: Եթե հնարավոր է, փորձի՛ր դա անել նախքան դասն սկսելը:

Համոզվի՛ր, որ նրանք հասկանում են, որ Սուրբ Հոգին անձնավորություն է, ոչ թե ոգի: Նա Աստված է՝ Հայր Աստծո և Որդի Աստծո հետ հավասար: Այսօր քո ուսանողներին պետք է որոշակի հիմնական հասկացողություն ունենալ Սուրբ Հոգու նպատակների ու ծառայության վերաբերյալ: Եթե ուրիշ ոչինչ չկարողանաք այսօր անցնել, մենք ուզում ենք, որ ուսանողները հասկանան Սուրբ Հոգու վերաբերյալ նշված հիմնական ճշմարտությունները:

Սուրբ Հոգու ծառայությունն ու պարգևները մանրամասնորեն քննարկվում են ***Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար*** դասընթացի՝ ***Հաջողակ քրիստոնեական կենսակերպ*** բաժնում:

8.* Քո փաստարկները համոզի՞չ են ոչ ճշմարիտ քրիստոնյաների համար:

Այս դասին նախապատրաստվելիս մենք նաև պետք է խորը գիտակցենք կասկածամիտների վերաբերմունքն Աստծո և քրիստոնեության վերաբերյալ: Կարո՞ղ ենք մենք այնպիսի փաստեր ներկայացնել, որ նույնիսկ կասկածամիտը կարողանա տեսնել դրանց իրական արժեքը: Եթե մենք չենք կարողանում, ապա գուցե մենք չենք կարողացել լավ ներկայացնել մեր իրավիճակը: Ճիշտ է, որ Սուրբ Հոգին պետք է այս ճշմարտություններն իրական դարձնի բոլոր մարդկանց համար, սակայն մենք նույնպես մեր կողմից պետք է նպաստենք մեր տեսակետի վերաբերյալ ամուր փաստեր նախապատրաստելու համար:

3

9. Դասի ջերմացում (5 րոպե):

Դատավարության օրինակ:

Ուսանողներին ասա՛, որ օգտագործեն իրենց երևակայությունը, երբ բերես հետևյալ օրինակը. մտքով ինձ հետ եկե՛ք դատարան: Դատավարություն է ընթանում, և իրավաբանները փորձում են ապացուցել իրենց կողմը՝ օգտագործելով փաստարկներ: Ի՞նչ է փաստարկը:

Թո՛ւյլ տուր ուսանողներին պատասխաններ տալ: Դու կարող ես մատնանշել փաստարկի, խոսակցության՝ երկրորդ ձեռք տեղեկության, և ապացույցի միջև եղած տարբերությունը: Փաստարկն օգնում է դատավորին որոշում կայացնել: Փաստարկը վստահելի՞ է: Ինչ-որ բան ապացուցելու համար կարիք կա փաստարկի, որն այնքան հստակ է, որ այլևս հարցեր չեն մնում դրա ճշմարտացիության վերաբերյալ:

Այնուհետև ուսանողներին ասա՛. «Երբ մարդը դառնում է ճշմարիտ քրիստոնյա, նա ունենում է համոզիչ փաստարկներ: Այս փաստարկները հստակորեն ցույց են տալիս, որ տվյալ անձնավորությունը ճշմարիտ քրիստոնյա է: Եթե դու լինեիր դատավարության մեջ, կկարողանայի՞ր ապացուցել, որ ճշմարիտ քրիստոնյա ես: Ի՞նչ փաստարկներ կբերեիր՝ քո կողմը պաշտպանելու համար»:

Եթե ուսանողները պատասխանեն այս հարցին, ընդունի՛ր նրանց պատասխանները, սակայն մի՛ մտիր երկար քննարկումների մեջ այս հատվածում: Եթե ուսանողները չցանկանան բառացի պատասխանել այս հարցին, պարզապես ասա՛. «Մենք այսօր կանդրադառնանք մի քանի փաստարկների, որոնք կարող են օգտագործվել՝ ցույց տալու համար, որ տվյալ անձնավորությունը ճշմարիտ քրիստոնյա է»:

3

10. Խմբային գործողություն. փնտրել փաստարկներ
(15-25 րոպե ողջ գործողության համար):

Ա. Աստվածաշնչի ուսումնասիրության փոքր խմբերով գործողություն
(7-10 րոպե):

Դասարանը բաժանի՛ր երկու խմբի և Ա. խմբին հանձնարարի՛ր Աստվածաշնչի փաստարկների հետ կապված գործողություն: Իսկ Բ. խմբին հանձնարարի՛ր գործողություն՝ գտնել, թե ինչ փաստարկներ է տալիս Սուրբ Հոգին այն առումով, որ տվյալ անձնավորությունը ճշմարիտ քրիստոնյա է: Եթե քո դասարանը մեծ է, ապա կարող ես բաժանել մի քանի խմբերի:

Թող յուրաքանչյուր խումբ ուսումնասիրի Ուսանողի ձեռնարկի 19-25-րդ էջերում գտնվող աստվածաշնչյան համարները, որոնք համընթաց են իրենց գործողության հետ: Տո՛ւր նրանց լրացուցիչ համարներ, որոնք, ըստ քեզ, կօգնեն նրանց: Յուրաքանչյուր խմբի տո՛ւր մեծ ստվարաթղթեր և ֆլոմաստերներ: Նրանք իրենց հաշվետվությունը պետք է գրեն այդ թղթերի վրա:

Ա. խումբը պետք է պատասխանի այս հարցին. Ի՞նչ փաստարկներ է տալիս Աստվածաշունչը՝ ինձ ասելու համար, որ ես ճշմարիտ քրիստոնյա եմ: (Օգտագործե՛ք Ուսանողի ձեռնարկի 6-րդ և 19-21-րդ էջերում գտնվող համարները):

Բ. խումբը պետք է պատասխանի այս հարցին. Ի՞նչ փաստարկներ է տալիս Սուրբ Հոգին՝ հստակորեն ցույց տալու համար, որ ես ճշմարիտ քրիստոնյա եմ: (Օգտագործի՛ր Ուսանողի ձեռնարկի 22-25-րդ էջերում գտնվող համարները):

Բ. Ներկայացնել դասարանին (5-10 րոպե):

Թող Ա. խումբն իր հայտնաբերած օրինակները ներկայացնի ողջ դասարանին: Այնուհետև դասարանով քննարկե՛ք դա: Թող ուսանողները, ովքեր հարցեր ունեն, սկզբում ուղղակի դիմեն այդ նախագծի վրա աշխատած խմբի անդամներին: Դու կարող ես թույլ տալ, որ ուսանողները նաև կիսվեն Նախագիծ 6-րդի 2-րդ հարցին տված իրենց պատասխաններով: Այս հարցը նրանց խնդրում է նշել աստվածաշնչյան երկու համարներ, որոնք նրանց օգնել են հասկանալ ճշմարիտ քրիստոնյա դառնալու հիմնական քայլերը:

Բ. խումբն իր հայտնաբերած օրինակները թող ներկայացնի դասաժամի երկրորդ հատվածում, երբ դու կսկսես խոսել Սուրբ Հոգու մասին: Տե՛ս այս դասի ծրագրի 47-րդ էջի 16-րդ կետի գործողությունը:

11. Տե՛ս նվիրման որոշման երեք ասպարեզները (5 րոպե):

Ա. Խմբի կողմից հայտնաբերած օրինակները ներկայացնելուց և դրանք քննարկելուց հետո օգտագործի՛ր հնարավորությունը՝ որոշում կայացնելու երեք ասպարեզները վերանայելու առումով, ինչը քննարկեցիք նախորդ դասաժամին: Մատնանշի՛ր աստվածաշնչյան փաստարկների և ճշմարիտ քրիստոնյա դառնալու ընթացքում մտքի որոշում ընդունելու միջև եղած սերտ կապը: Դու կարող ես օգտագործել ստորև բերվող դեպքի ուսումնասիրությունը, որպեսզի օգնես ուսանողներին՝ մտածել այդ երեք որոշումների մասին:

Դեպքի ուսումնասիրություն.
Արագ որոշումներ ընդունող նորադարձ քրիստոնյա:

Մի քանի օր առաջ էր, երբ Պետրոսն առաջին անգամ լսեց փրկության ծրագրի մասին: Նախկինում նա երբևիցե այս թեմայով չէր խոսել ճշմարիտ քրիստոնյայի հետ, այնպես որ այս ամենը նրա համար ամբողջությամբ նորություն էր: Նրան դուր եկավ իր լսածը և որոշեց դառնալ ճշմարիտ քրիստոնյա: Սա հատուկ է Պետրոսին. նա հաճախ է արագ որոշումներ կայացնում:

Արդեն չորս օր է՝ ինչ Պետրոսն աղոթել է՝ ճշմարիտ քրիստոնյա դառնալու համար: Դրանից հետո նա սովորականից ավելի շատ է ունեցել խնդիրներ ու անհանգստություններ: «Ես մտածում էի, որ Աստված իմ կյանքն ավելի լավը պիտի դարձնի: Տպավորությունն այնպիսին է, որ այս ողջ քրիստոնեությունն ընդամենը մի մեծ խաբեություն է: Եթե ճշմարիտ քրիստոնյա դառնալն իրոք ճիշտ էր, ապա պետք է որ ամեն բան շատ ավելի լավ լիներ ինձ համար»:

Հարցեր քննարկման համար:

1. Օգտագործի՛ր վերջին երկու դասաժամերին մեր կողմից քննարկված՝ որոշում կայացնելու երեք ասպարեզները, որպեսզի գնահատես Պետրոսի՝ ճշմարիտ քրիստոնյա դառնալու որոշումը:
2. Ի՞նչ ազդեցություն ունեցավ Պետրոսի՝ արագ որոշումներ կայացնելու բնավորությունը ճշմարիտ քրիստոնյա դառնալու նրա որոշման վրա:
3. Ի՞նչ փաստարկ դու կտայիր Պետրոսին հիմա օգնելու համար:

12. Սովորի՛ր Աստվածաշունչ ուսումնասիրել
(5-15 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 19-20-րդ էջեր:

Մենք նշեցինք, որ Աստվածաշնչում կան փաստեր, որոնք ասում են, թե ինչպես կարելի է ճշմարիտ քրիստոնյա դառնալ: Մենք հստակ ուզում ենք փոխանցել, որ Աստվածաշնչի բազմաթիվ այլ համարներ նույնպես կարող են օգտագործվել որպես փաստարկ առ այն, որ տվյալ անձնավորությունը

ճշմարիտ քրիստոնյա է: Եթե նորադարձ քրիստոնյան ցանկանում է գտնել և արդյունավետ կերպով կիրառել աստվածաշնչյան այս ճշմարտությունները, ուրեմն պետք է Աստվածաշնչի ուսումնասիրության գործնական մեթոդներ զարգացնի:

Այս առարկան մանրամասնորեն քննարկվում է ***Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար*** շարքի՝ ***Ինչպես ուսումնասիրել Աստվածաշունչը*** դասընթացում: Եթե ժամանակ ունես, քո ուսանողների հետ քննարկի՛ր Աստվածաշունչն ուսումնասիրելու մի քանի հիմնական մեթոդներ: Համոզվի՛ր, որ նրանք գիտեն, թե ինչպես օգտագործել համաբարբառ՝ որևէ թեմայի վերաբերյալ համարներ գտնելու համար:

3

Զգուշացրո՛ւ համատեքստից առանձին համարներ դուրս քաղելու վտանգի մասին: Բացատրի՛ր, թե ինչ է դա նշանակում, և օրինակնե՛ր բեր: Տե՛ս Ուսանողի ձեռնարկի 19-20-րդ էջերը լրացուցիչ տեղեկությունների համար:

Դասի այս մասն ամփոփելու համար ընդգծի՛ր Աստվածաշունչն ուսումնասիրելու կարևորությունը, որպեսզի իմանանք, թե ինչ է Աստված ասում Իր և Իր որդիների հետ մեր փոխհարաբերությունների մասին: Աստված մեզ տվել է այդ փաստարկները, և հիմա մեզնից է կախված, որ գտնենք այդ փաստարկներն ու կիրառենք դրանք մեր կյանքում:

13. Դու պետք է հնազանդվես Աստվածաշնչի ուսուցումներին
(3-5 բոպե), Ուսանողի ձեռնարկ, 20-21-րդ էջեր:

Մենք պետք է հստակեցնենք, որ Աստվածաշունչն ավելի շուտ փաստարկներ է տալիս, քան պարզապես փաստեր՝ ցույց տալու համար, թե ինչպես կարող է մարդը դառնալ ճշմարիտ քրիստոնյա: Ուսանողի ձեռնարկի 20-րդ էջի 2-րդ ենթակետը ցույց է տալիս, որ երբ մարդը դառնում է ճշմարիտ քրիստոնյա, պետք է հնազանդվի Աստվածաշնչի ուսուցումներին: Երբ դու հնազանդվում ես այդ ուսուցումներին, դրանով ինքդ քեզ համար անձնական վկայություն ես ունենում, որ Աստվածաշունչն իրոք Աստծո Խոսքն է: Մարդկանց մեծ մասը չի կարող շարունակ հնազանդվել այս ուսուցումներին իր սեփական ուժերով: Մենք Աստծո օգնության կարիքն ունենք դա անելու համար:

Քաջալերի՛ր ուսանողներին՝ գտնել համարներ, որոնք վերաբերում են իրենց կյանքի այն ասպարեզներին, որտեղ նրանք ուզում են աճել: Ասա՛ նրանց, որ նպատակներ դնեն, որոնց կարող են հասնել Աստծո օգնությամբ: Այս հաջողությունները նրանց կօգնեն՝ ունենալ անձնական հզոր վկայություն առ այն, որ Աստծո Խոսքը ճշմարիտ է: Ասա՛ նրանց, որ կիսվեն այս օրինակներով, երբ եկեղեցում վկայություն տան, կամ մարդկանց վկայելիս, ովքեր ճշմարիտ քրիստոնյաներ չեն:

14. Աստվածաշնչի փաստարկներ, որոնք չեն փոխվել (3-10 բոպե), Ուսանողի ձեռնարկ, 21-22-րդ էջեր:

Աստվածաշունչը հզոր փաստարկներ է բերում, որոնք խորապես վստահելի են: Տե՛ս Ուսանողի ձեռնարկի 21-22-րդ էջերն այս հարցի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար: Այս թեման ավելի մանրամասնորեն քննարկվում է ***Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար*** շարքի՝ ***Թռուցիկ հայացք Աստվածաշնչին*** դասընթացում, որն այս շարքում հաջորդն է, եթե դու հետևում ես ուսուցման մեր առաջարկած հերթականությանը:

3

15. Փաստարկներ, որոնք վճռական որոշում են պահանջում (2-10 բոպե):

Ջոշ Մաք Դաուելը մի շարք գրքեր է գրել, որոնք բազում փաստարկներ են պարունակում Քրիստոսի և Աստվածաշնչի ճշմարտացիության վերաբերյալ: Դու կարող ես ներկայացնել դրանք քո ուսանողներին և ցույց տալ նրանց, թե ինչպես օգտագործեն այդ գրքերը՝ ճշմարիտ քրիստոնյա լինելու վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ հավաքելու համար: Ահա այդ գրքերից մի քանիսը:

Evidence that Demands a Verdict (Վճռական վկայություններ)

More Evidence that Demands a Verdict

More than a Carpenter (Ոչ միայն հյուսն)

Reasons Skeptics Consider Christianity

The Resurrection Factor

16. Բ խմբի հաշվետվությունը Սուրբ Հոգու վերաբերյալ (5-10 բոպե):

Համառոտ ներկայացրո՛ւ դասի երկրորդ մասը՝ մատնանշելով, որ Սուրբ Հոգին նույնպես կարող է փաստարկներ ներկայացնել տվյալ անձնավորության՝ ճշմարիտ քրիստոնյա լինելու վերաբերյալ: Թող Բ խումբն իր հայտնաբերած օրինակները ներկայացնի ողջ դասարանին: Մանրամասների համար տե՛ս այս դասի 10-րդ կետի գործողությունը 44-րդ էջում:

Երբ ուսանողներն ավարտեն իրենց հաշվետվությունները, անցի՛ր այն հիմնական կետերի քննարկմանը, որոնք գտնվում են Ուսանողի ձեռնարկի 22-25-րդ էջերում: Եթե խումբը լավ է աշխատել և քննարկել է այդ կետերից որոշ մասը, ապա անցի՛ր մյուս կետերին, որոնք ցանկանում ես ավելի մանրամասն քննարկել:

3

17. Սուրբ Հոգին կգա և կբնակվի քո մեջ
(5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 22-րդ:

Այս թեման քննարկվում է Ուսանողի ձեռնարկի 22-րդ էջում: Ողջ դասարանի օգուտի համար դու կարող ես կարդալ և քննարկել այս թեմայի վերաբերյալ նշված համարներից որոշ մասը: Հստակեցրո՛ւ, թե երբ է Սուրբ Հոգին գալիս և բնակվում մարդու ներսում. փրկության պահին: Որտե՞ղ է Նա բնակվում. մեր հոգում: Բացատրի՛ր, թե որտեղ է գտնվում հոգին (կատակո՛վ արա դա): Օգտագործի՛ր այս վերջին հարցը՝ հաջորդ կարևոր կետին անցնելու համար. «Ինչո՞ւ է Սուրբ Հոգին գալիս և բնակվում քո ներսում ճշմարիտ քրիստոնյա դառնալուց հետո»:

18. Սուրբ Հոգին կլինի քո Ուսուցիչը (5-10 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 23-րդ:

Համառոտ քննարկի՛ր Սուրբ Հոգու պատասխանատվությունները քրիստոնյայի կյանքում:

Այս դասի ծրագրի սկզբում մենք նշեցինք, որ պետք է զգայուն լինենք մեր ուսանողների հանդեպ և կողմնորոշվենք, թե ինչ պատկերացում ունեն նրանք Սուրբ Հոգու վերաբերյալ: Եթե քո ուսանողները քիչ գիտեն կամ ոչինչ չգիտեն այս թեմայի վերաբերյալ, անպայման ժամանա՛կ հատկացրու՝ համառոտ բացատրելու համար, թե ով է Սուրբ Հոգին: Համոզվի՛ր, որ քո ուսանողները հասկանում են, որ Նա Աստված է:

Դու կարող ես որոշ մանրամասնություններով քննարկել հետևյալ հարցի պատասխանը. «**Ինչպե՞ս է Սուրբ Հոգին մեզ սովորեցնում**»: Գրի՛ր նրանց պատասխանները գրատախտակի վրա, կամ ցո՛ւյց տուր պրոյեկտորի միջոցով: Նա մեզ դասախոսություն չի կարդում, ոչ էլ հատուկ նշանակության նամակներ է ուղարկում: Նա հաճախ օգտագործում է Աստվածաշունչն ու մեր կողքին եղող մարդկանց և, կանգնելով մեր կողքին, առաջնորդում է ճշմարտության մեջ Իր «մեղմ ձայնով»:

19. Ինչպե՞ս է Սուրբ Հոգին խոսում մեզ հետ
(5-10 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 23-րդ:

Թող ուսանողները քննարկեն իրենց կարծիքները, թե ինչպես կարող են լսել Սուրբ Հոգուն և ինչպես կարող են իմանալ, որ Սուրբ Հոգին է իրենց հետ խոսում: Դու կարող ես հետևյալ հարցը գրել գրատախտակի վրա, կամ ներկայացնել պրոյեկտորի միջոցով, նաև՝ գրել նրանց պատասխանները. «Ինչպե՞ս է Սուրբ Հոգին խոսում քեզ հետ»: Միևնույն ժամանակ կարող ես քննարկել նրանց պատասխանները, որոնք տվել են Ուսուցման ուղեցույց, **Նախագիծ 6-րդի** 4-րդ և 5-րդ հարցերին:

Հարց 4. Ինչպե՞ս է Սուրբ Հոգին մարդուն ասում, որ նա ճշմարիտ քրիստոնյա է:

Հարց 5. Ինչպե՞ս պետք է արձագանքես Սուրբ Հոգու ասածին:

Ընդունի՛ր ուսանողների բազմազան պատասխանները: Շեշտի՛ր, որ Սուրբ Հոգին վկայում է մեր հոգու հետ միասին, որ մենք Աստծո որդիներ ենք: Հազվադեպ է պատահում, որ քրիստոնյաները լսեն Սուրբ Հոգուն բարձր ձայնով խոսելիս այնպես, ինչպես մարդիկ են իրար հետ հաղորդակցվում: Սուրբ Հոգին մեզ հետ խոսում է մեր հոգու միջոցով, սա ներքին հաղորդակցությունն է:

Դու կարող ես այս թեմայով խոսել ծառայության անձնակազմի որոշ անդամների կամ քո հովվի հետ՝ հասկանալու համար, թե ինչպես է Սուրբ Հոգին խոսում նրանց հետ:

Շատ անգամ նորադարձ քրիստոնյաները կասկածներ են ունենում, թե արդյո՞ք իրենք ճշմարիտ քրիստոնյա են: Հիմա դու կարող ես քննարկել այդ հարցերը, եթե ժամանակ ունես: Եթե ոչ, համառոտ նշի՛ր հարցը և բացատրի՛ր, որ մենք դրա մասին ավելի մանրամասն կանցնենք այս դասընթացի չորրորդ գլխում, երբ խոսենք կասկածների մասին: Նրանք մոտավորապես այսպիսի մտքեր են ունենում:

1. Ինչպե՞ս իմանամ՝ Սուրբ Հոգի՞ն է ինձ հետ խոսում, թե՞ դրանք պարզապես իմ մտքերն են:
2. Կա՞ արդյոք անսխալ մի մեթոդ՝ իմանալու համար, թե երբ է Սուրբ Հոգին խոսում, և երբ են մտքեր գալիս ինձ, որոնք Սուրբ Հոգուց չեն:
3. Ինչպե՞ս կարող եմ իմանալ, երբ սատանան է մտքեր տալիս ինձ (հիշի՛ր, սատանան կձևացնի, որ լուսո հրեշտակ է):

Այս հարցերը քննարկելիս մենք պետք է նրանց օգնենք, որպեսզի տեսնեն, որ Աստծուն լսելը մի ասպարեզ է, որտեղ հետագա տարիների համար աճելու տեղ շատ կա: Տե՛ս Ուսանողի ձեռնարկի 25-րդ էջում՝ հինգ մտքերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար, որոնք կարող եք օգտագործել, որպեսզի կողմնորոշվեք, թե արդյո՞ք Սուրբ Հոգին է խոսում ձեզ հետ:

Ընդգծի՛ր, որ կարևոր է՝ գտնել հավասարակշռությունը մեր մտքերը լսելու և մեր քրիստոնեական կյանքի մյուս ասպարեզներին դիմելու միջև: Մենք ունենք Աստվածաշունչը, որն Աստծուց տրված հստակ պատգամ է և կախված չէ մեր մտքերը լսելու մեր իսկ ունակությունից: Մենք կարող ենք կարդալ Աստվածաշունչը և իմանալ, որ սա Աստծո Խոսքն է:

3

20. Ավելի զգայուն դառնալ Սուրբ Հոգու ձայնին
(5-10 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 24-25-րդ էջեր:

Եթե ժամանակ ունես, և ուսանողները բավականաչափ հասուն են, որպեսզի օգտվեն այս քննարկումից, խոսի՛ր այն մասին, թե ինչպես կարող ես ավելի զգայուն դառնալ Սուրբ Հոգու ձայնի հանդեպ: Համոզվի՛ր, որ նրանք հասկանում են, թե ինչու է Սուրբ Հոգին խոսում: Շատ անգամ Սուրբ Հոգին մեզ հետ խոսում է մեր խղճմտանքի միջոցով: Դու կարող ես քննարկել, թե ինչ է խղճմտանքը, և ինչպես է մեղքն ազդում դրա վրա: Նշի՛ր, որ մենք՝ որպես Աստծո որդիներ, կարիք ունենք սովորել՝ զգայուն լինել մեր խղճմտանքի հանդեպ:

21. Անձնական կիրառություն (5 րոպե):

Ներքևում թվարկված են անձնական կիրառության մի քանի նախագծեր: Ընտրի՛ր դրանցից մեկը կամ ավելին, որը կամ որոնք, ըստ քեզ, կարող են օգտակար լինել քո ուսանողների համար:

Ա. Սուրբ Հոգու վերաբերյալ մի պարբերությո՛ւն գրիր (5-10 րոպե):

Թող ուսանողները մի պարբերություն գրեն՝ նկարագրելու համար իրենց փոխհարաբերությունը Սուրբ Հոգու հետ: Գրելիս թող նրանք մտածեն և պատասխանեն հետևյալ հարցերին.

1. Սուրբ Հոգին ինձ հետ խոսե՞լ է, թե՞ ոչ:
2. Սուրբ Հոգին ինձ ինչ-որ բան սովորեցրե՞լ է: Եթե այո, մի օրինա՛կ բեր: Նաև թվարկի՛ր քո կյանքի այն ասպարեզները, որտեղ դու կցանկանայիր, որ Նա սովորեցներ քեզ:
3. Ինչպե՞ս կարող եմ ավելի մոտիկից լսել Սուրբ Հոգուն:

Բ. Օրինակի ուսումնասիրություն նորադարձ քրիստոնյայի վերաբերյալ (5-10 րոպե):

Ներկայացրո՛ւ հետևյալ օրինակը, և թող ուսանողներն իրենց պատասխանները գրեն թղթի վրա.

Քո նոր ընկերներից մեկը վերջերս մեծ հետաքրքրություն է ցուցաբերել ճշմարիտ քրիստոնյա դառնալու հարցում: Նա աղոթել է քեզ հետ միասին՝ խնդրելով Հիսուսին՝ գալ իր կյանքի մեջ ու փրկել իրեն: Քո ընկերը վերջին մի քանի օրը լուրջ խնդիրների միջով է անցնում: «Ես չեմ կարծում, որ ճշմարիտ քրիստոնյա եմ»,- ասում է նա քեզ,- որովհետև, եթե ես ճշմարիտ քրիստոնյա լինեի, Աստված թույլ չէր տա, որ անցնեի այս բոլոր խնդիրների միջով»: Ինչպե՞ս դու կքաջալերեիր քո ընկերոջը, ով այլևս վստահ չէ, որ ինքը ճշմարիտ քրիստոնյա է:

Երբ ուսանողները գրեն իրենց պատասխանները, դու կարող ես ժամանակ հատկացնել՝ նրանց որոշ պատասխաններ ողջ դասարանի հետ քննարկելու համար:

Գ. ճշմարիտ քրիստոնյա լինելու անձնական փաստարկի օրագիր (5 րոպե):

Քաջալերի՛ր ուսանողներին, որ ստուգեն Աստծո խոստումները և տեսնեն, թե արդյո՞ք դրանք գործում են իրենց կյանքում: Թող նրանք օրագիր պահեն՝ նշելու համար այն հատուկ գործողությունները, որոնք Աստված կատարել է իրենց կյանքում: Նրանք պետք է գրեն այնպիսի օրինակներ, երբ տեսել են, որ Աստված պահել է Իր խոստումներն իրենց կյանքում: Դու հիմա կարող ես նրանց ժամանակ տալ, որպեսզի առաջին նշումներն անեն իրենց օրագրում:

Դ. Ընթացիկ խնդիրների ցուցակ (5 րոպե):

Անձնական կիրառության այս նախագիծը վերաբերում է սովորելուն, այն, որ ավելի կախված լինեն Սուրբ Հոգուց, քան իրենց առօրյա գործունեությունից: Թող նրանք գրեն այս շաբաթ իրենց հանդիպած խնդիրների մասին, հատկապես այն խնդիրների, որոնք իրենք իրենց սեփական խելքով ու ուժով չեն կարողացել լուծել: Նաև թող փնտրեն համարներ, որոնք կապ ունեն այդ խնդիրների հետ, իսկ հետո աղոթեն Սուրբ Հոգուն, որպեսզի իրենց իմաստություն տա՝ հասկանալու համար, թե ինչպես սկսեն լուծել յուրաքանչյուր խնդիրը:

22. Հանձնարարություններ:

1. Դասաժամի վերջում հարցաշա՛ր տուր Հռոմեացիներին 8:16-ի վերաբերյալ:

   Հռոմեացիներին 8:16.

   «Հոգին Ինքը վկայություն է տալիս մեր հոգուն, որ մենք Աստծո որդիներ ենք»:

2. Գնահատակա՛ն դիր Նախագիծ 3-րդի համար. «Հիսուս Քրիստոսին նվիրվելու որոշում կայացնել»:

3. Գնահատակա՛ն դիր Նախագիծ 4-րդի համար. «Ներկայացնել որոշում կայացնելու երեք ասպարեզները», սա կատարել այսօր կամ էլ հաջորդ դասաժամից հետո:

23. Դասի գնահատում:

Խնդրում եմ՝ գրի՛ր մտքեր այս դասի բարելավման համար:
Ո՞ր հատվածներն էին լավագույնս աշխատում:
Ո՞ր մասերն էին ուսանողների համար դժվարհասկանալի:
Ի՞նչն ամենաօգտակարը թվաց քո ուսանողներին:

Դաս 4.
Փաստարկներ. փոփոխություններ քո կյանքում:

4

1. **Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն:**

Ես կարիք ունեմ համագործակցելու Աստծո հետ՝ իմ ամենօրյա կյանքում փոփոխություններ կատարելու համար, որն ինձ կօգնի ավելի մոտենալ Աստծուն:

2. **Բանալի համար. Փիլիպպեցիներին 1:16.**

«Այս բանում վստահ լինելով, թե Նա՝ Ով ձեր մեջ սկսեց բարի գործը, այն կհասցնի իր ավարտին մինչև Հիսուս Քրիստոսի օրը»:

3. **Հղում ուսանողական նյութերին:**

Ուսանողի ձեռնարկի 25-34-րդ էջերը համընթաց են այս դասի հետ: Ուսուցման ուղեցույցի հետևյալ նախագծերը նույնպես կօգտագործվեն այս դասի հետ.

Նախագիծ 3. «Հիսուս Քրիստոսին նվիրվելու որոշում կայացնել»:

Նախագիծ 4. «Ներկայացնել որոշում կայացնելու երեք ասպարեզները»:

Նախագիծ 6. «Փնտրել փաստարկներ»:

Նախագիծ 7. «Հետազոտի՛ր մյուս քրիստոնյաների կյանքը՝ փաստարկներ գտնելու համար»:

4. **Դասի ջերմացում** (5 րոպե):

Ա. Բանակ զորակոչված մի երիտասարդի պատմություն:

Կարդա՛ բանակ զորակոչված երիտասարդի պատմությունը, ով երկու տարվա մեջ ոչ մեկին ոչ մի անգամ չէր ասել, որ ինքը հավատացյալ է: Պատմությունը վերցված է Em Griffin-ի «The Mind Changers» գրքից (Tyndale House Publishers, 1976), էջ 207, օգտագործվում է թույլտվությամբ:

«Մի զավեշտական պատմություն կա Արևմտյան Վիրջինիայից մի տղայի մասին, ով զորակոչվեց բանակ: Այս երիտասարդը մեծացել էր մի փոքրիկ, մեկուսացված եկեղեցում և, ինչպես եկեղեցու մյուս անդամները, այնպես էլ նա մտածում էր, որ եթե աշխարհում բացահայտեն իր՝ հավատացյալ լինելու մասին, ինքը կկորցնի իր հավատը: Բանակ գնալու նախորդ օրը այդ եկեղեցու անդամները ամբողջ գիշեր արթուն մնացին և աղոթեցին տղայի համար: Նա իր ծառայության ողջ ընթացքում ոչ մի անգամ չգրեց իր ընտանիքին, այնպես

որ միանգամայն բնական էր այն հետաքրքրությունը, որով նրան շրջապատեց ողջ համայնքը, երբ նա վերադարձավ: «Ի՞նչ եղավ,- հարցնում էին նրանք,- դու կարողացա՞ր պահել քո հավատը»: Երիտասարդը ոգևորված պատասխանեց. «Գիտե՞ք, ես իրոք վախենում էի, բայց ձեր աղոթքներն օգնեցին, և ամեն բան հրաշալի ավարտվեց: Ես ամբողջ երկու տարի բանակում էի, և ոչ ոք չիմացավ, որ ես հավատացյալ եմ»:

Համառոտ բացատրի՛ր, որ մենք այսօր քննարկելու ենք, թե Քրիստոսով մեր նոր կյանքն ինչ ազդեցություն պետք է թողնի մեր մտքերի, զգացմունքների և վարքի վրա:

Բ. Վերանայե՛ք որոշում կայացնելու երեք ասպարեզները:

Վերը նշված պատմությունով կիսվելուց հետո խնդրի՛ր ուսանողներին՝ գնահատել Աստծո հետ այս երիտասարդի ունեցած փոխհարաբերության մակարդակը: Այնուհետև խնդրի՛ր մեկ կամ երկու ուսանողների՝ կիսվել իրենց պատասխաններով, որոնք տվել են Ուսուցման ուղեցույց, **Նախագիծ 4-րդում. «Ներկայացնել որոշում կայացնելու երեք ասպարեզները»**: Հուսանք, որ ուսանողները սկսում են ընկալել իրենց կյանքի այս ասպարեզներում որոշում կայացնելու կարևորությունը:

5. Ներկայացրո՛ւ կյանքի փոփոխությունների վերաբերյալ այսօրվա թեման (5 րոպե):

Դասի հաջորդ մասին անցնելու համար մատնանշի՛ր, որ ճշմարիտ քրիստոնյա դառնալու որոշումը, որը մարդն ընդունում է, պետք է ազդեցություն թողնի նրա առօրյայի և կյանքի վրա:

Դու կարող ես դասարանի հետ կիսվել հետևյալ չորս հարցերով: Մի՛ փորձիր հենց այս պահին պատասխանել դրանց: Դասաժամի ընթացքում մենք կաշխատենք քննարկել այս թեմաները:

- Ի՞նչ փոփոխություններ պետք է տեղի ունենան իմ կյանքում:
- Ինչո՞ւ պետք է այդ փոփոխությունները տեղի ունենան:
- Ինչպե՞ս են այդ փոփոխությունները փաստարկներ ապահովում առ այն, որ ես ճշմարիտ քրիստոնյա եմ:
- Ի՞նչ կարող եմ ես անել, որպեսզի այդ փոփոխություններն իմ կյանքում տեղի ունենան:

Դու կարող ես մեծ պլակատի վրա գրել այդ չորս հարցերը և փակցնել պատին՝ այսօրվա դասի ընթացքում դրանց հղում անելու համար:

6. **Աստվածաշնչյան պատմության ուսումնասիրություն Զակքեոսի վերաբերյալ** (5-10 րոպե):

Թող ուսանողները կարդան Զակքեոսի պատմությունը, որը գտնվում է Ղուկաս 19:1-10 հատվածում: Նախքան ուսանողներից մեկն այն բարձրաձայն կկարդա, ասա՛ մյուսներին, որ ուշադրություն դարձնեն, թե ինչպես է փոխվում Զակքեոսի կյանքը քրիստոնյա դառնալուց հետո:

Ահա մի քանի հարցեր, որոնք դուք կարող եք քննարկել հատվածը կարդալուց հետո.

4

1. Ի՞նչը քեզ վրա տպավորություն թողեց այս պատմությունը կարդալիս:
2. Ի՞նչ հստակ փոփոխություններ խոստացավ Զակքեոսն անել՝ քրիստոնյա դառնալուց հետո:

Նշի՛ր, որ մեզնից ոչ ոք ճիշտ նույն իրավիճակում չէ, ինչ Զակքեոսն էր: Սակայն Աստված հետաքրքրված է՝ տեսնել մեր մեջ այնպիսի փոփոխություններ, որոնք հստակ փաստարկներ կլինեն մեր և ուրիշների համար, որ մենք, իրոք, դարձել ենք ճշմարիտ քրիստոնյա:

7. **Փոփոխությունների ցուցա՛կ կազմիր** (5-10 րոպե):

Խնդրի՛ր ուսանողներին գրել այն փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել նրանց կյանքում ճշմարիտ քրիստոնյա դառնալուց հետո: Այդ ցուցակը փակցրո՛ւ գրատախտակին: Թող ուսանողները հղում անեն Նախագիծ 3-րդի 6-րդ և 7-րդ հարցերին և Նախագիծ 6-րդի 8-րդ հարցին տված իրենց պատասխաններին: Մի՛ մտիր խորը քննարկումների մեջ թվարկված յուրաքանչյուր մտքի շուրջ: Ցուցա՛կ կազմիր, որպեսզի բոլոր ուսանողները սկսեն հասկանալ այն գործնական քայլերը, որոնց հետ մենք այսօր ուզում ենք գործ ունենալ:

Նախագիծ 3-րդ, հարց 6-րդ. **Եթե դու դարձել ես ճշմարիտ քրիստոնյա, որևէ փոփոխություն տեսե՞լ ես քո կյանքում:**

Այո: Ոչ: Վստահ չեմ:

Եթե փոփոխություններ տեսել ես, ի՞նչ փոփոխություններ են եղել դրանք:

Նախագիծ 3-րդ, հարց 7-րդ. **Քո կյանքի փոփոխությունները քեզ դարձնո՞ւմ են ճշմարիտ քրիստոնյա:**

Այո: Ոչ: Վստահ չեմ: Բացատրի՛ր քո պատասխանը:

Նախագիծ 6-րդ, հարց 8-րդ. **Ի՞նչ փոփոխություններ ես դու տեսել քո կյանքում ճշմարիտ քրիստոնյա դառնալուց հետո:**

8. Որքա՞ն արագ պետք է փոխվեմ ես (5 րոպե):

Մի հարց, որ կարող է հակասական լինել, այն է, թե որքան արագ պետք է մարդը հստակ փոփոխություններ ունենա: Օրինակ, եթե ինչ-որ մեկը որպես փոփոխություն նշել է՝ «ծխելը թողնել», դու կարող ես դա օգտագործել այս կետում՝ որպես օրինակ:

1. Դու պետք է ծխելը թողնես *նախքան* ճշմարիտ քրիստոնյա դառնա՞լը:
2. Դու պետք է ծխելը թողնես ճշմարիտ քրիստոնյա դառնալուց հետո՝ մեկ-երկու օրվա մե՞ջ:
3. Կարո՞ղ ես դու ճշմարիտ քրիստոնյա դառնալուց հետո ամիսներ կամ տարիներ շարունակ ծխել:
4. Ո՞ր հատվածում է Աստված պահանջում, որ մենք որևէ փոփոխություն ունենանք մեր վարքում:

4

Քեզ հարկադրված մի՛ զգա՝ ծխելու վերաբերյալ հարցերին աստվածաշնչյան պատասխաններ տալու առումով: Մատնանշի՛ր, որ մենք ցանկանում ենք նշել հետևյալը.

1. Աստված մտածու՞մ է, որ սա կարևոր փոփոխություն է, որը ես պետք է անեմ: Կամ, միգուցե, Աստված հետաքրքրված է, որ ես սկզբում ուրիշ փոփոխությունների հարցով զբաղվեմ:
2. Ե՞րբ է Աստված ուզում, որ ես սկսեմ աշխատել իմ կյանքի այս ասպարեզի փոփոխությունների վրա:

Մենք պետք է պարզենք Աստծո առաջնահերթությունները: Ինչպե՞ս կարող ենք դա անել: Մենք կարող ենք աղոթել, Աստվածաշունչ կարդալ և խորհուրդ հարցնել ավելի հին, հասուն հավատացյալներից:

Կարող ենք նշել երեք տարբեր ժամանակահատվածներ այս փոփոխություններն իրականացնելու համար: Դրանցից յուրաքանչյուրը մանրամասնորեն քննարկված է ստորև:

1. Փոփոխություն նախքան փրկվելը կամ փրկվելու պահին:
2. Փոփոխություններ, որոնք իրականացնելու կարիք կա ճշմարիտ քրիստոնյա դառնալուց անմիջապես հետո:
3. Փոփոխություններ, որոնք գալիս են հետագա քրիստոնեական կյանքում:

9. Փոփոխություններ նախքան փրկվելը կամ փրկվելու պահին (3-5 րոպե):

Երբեմն թվում է՝ փոփոխությունները ճշմարիտ քրիստոնյա դառնալու անհրաժեշտ մասն են կազմում: Եթե փոփոխությունները տեղի չունենան փրկվելու պահին կամ նույնիսկ դրանից առաջ, մարդը կարող է լուրջ անհանգստանալ, թե արդյո՞ք ինքը փրկվել է:

Ահա փոփոխությունների մի քանի օրինակներ, որոնք տեղի են ունենում փրկվելուց առաջ կամ այդ ժամանակ.

4

1. Դևերը դուրս քշվեցին գադարացի դիվահար մարդուց. Ղուկաս 8:26-39:

2. Պողոսը դադարեցրեց հալածել քրիստոնյաներին. Գործք 9:1-22:

3. Թմրանյութի ազդեցության տակ գտնվող անձնավորությունը, հնարավոր է, միանգամից չկարողանա ազատվել կախվածությունից, սակայն դժվար թե հասկանա, թե ինչ է տվյալ պահին անում՝ լինելով թմրանյութի ազդեցության տակ: Երբ մենք խոսում ենք ճշմարիտ քրիստոնյա դառնալու համար մտքի որոշում կայացնելու մասին, կարծում եմ՝ ավելի ապահով կլինի ասել, որ տվյալ անձնավորությունն այդ պահին պետք է սթափ լինի և չգտնվի թմրանյութի ազդեցության տակ:

4. Հիմնականում, երբ մարդը սթափվում է ալկոհոլի ազդեցությունից, նույն պատճառաբանությունը կարող ենք բերել նաև այն դեպքում, ինչը բերեցինք թմրանյութի ազդեցության տակ գտնվող մարդու համար: Կան սթափության տարբեր աստիճաններ, այնպես որ չենք կարող համաչափ պայմանով ասել այդ մասին: Սակայն ուզում ենք նշել, որ այդ վիճակում արված որոշումները դժվար թե երկարատև լինեն:

Եթե ինչ-որ մեկը, լինելով թմրանյութի կամ ալկոհոլի ազդեցության տակ, աղոթում է ճշմարիտ քրիստոնյա դառնալու համար, դու պետք է ծրագրես, որ կրկին նույն բաները նրա հետ խոսես, երբ նա արդեն սթափված լինի: Անընդունելի կլինի, եթե փորձենք օգտագործել մարդու՝ նյութի ազդեցության տակ լինելը, և այդ վիճակում մղել նրան աղոթքի: Քաջալերի՛ր տվյալ մարդուն՝ կրկին լրջորեն խորհել փրկության կարիքի շուրջ, հետո նորից աղոթիր՝ վերահաստատելու այն, ինչի համար նա աղոթել էր մի քանի ժամ կամ օր առաջ:

10. Փոփոխություններ, որոնք պետք է տեղի ունենան ճշմարիտ քրիստոնյա դառնալուց անմիջապես հետո (3-5 րոպե):

Կան որոշ խնդիրներ և սովորություններ, որոնք պետք է հնարավորինս շուտ փոխվեն, երբ մարդը դառնում է ճշմարիտ քրիստոնյա: Ինչքան երկար է մարդը սպասում, որպեսզի փոխի իր կյանքի այդ ասպարեզը, այնքան ավելի մեծ է հնարավորությունը, որ այդ խնդիրը կկործանի այն նոր կյանքը, որը նա գտել է Հիսուս Քրիստոսում: Փոփոխությունները դժվար է կատարել, սակայն տվյալ անձնավորությունն ինչքան շուտ այդ փոփոխությունն անի, այնքան արագ նա հոգևորապես կաճի:

Այս խնդիրների հետ կապված՝ կարծես կա մի հատված, երբ Աստված կարող է ասել. «Եթե դու չես ցանկանում մաքրվել քո կյանքի այդ ասպարեզում, դրանով իսկ ցույց ես տալիս, որ Հիսուսն իրականում քո ամբողջ կյանքի Առաջնորդը չէ»: Եթե Քրիստոսը չի կարող լինել քո ողջ կյանքի Առաջնորդը, ապա Նա քո կյանքի Առաջնորդը չի լինի ընդհանրապես: Ահա մի քանի օրինակներ.

1. Հիսուսը հարուստ երիտասարդին ասաց, որ թողներ գումարն ու հետևեր Իրեն: Տե՛ս Մատթեոս 19:16-30: Մենք չենք կարող ասել, որ բոլորը պետք է թողնեն իրենց գումարները, որպեսզի կարողանան հետևել Հիսուսին: Սակայն որոշ մարդկանց համար, ներառյալ՝ Մատթեոս 19-րդ գլխի այդ երիտասարդի, փողը կարող է «աստված» լինել իրենց կյանքում:

2. Զակքեոսը փոխհատուցում արեց իր անցյալի գողությունների համար:

3. Մարդ, ով թմրանյութեր կամ ալկոհոլ է օգտագործում:

4. Մարդ, ով ներգրավված է հակաօրինական գործունեության մեջ (խախտում է իր երկրի օրենքները, որով էլ խախտում է Աստծո պատվերը, այն է՝ հնազանդվել քաղաքական իշխանություններին):

5. Խորը ատելություն՝ ուղղված որևէ անձի կամ մարդկային խմբի հանդեպ:

11. Փոփոխություններ, որոնք հոգևոր մարդու կյանքում ավելի ուշ են տեղի ունենում (3-5 րոպե):

Կան փոփոխություններ, որոնց հարցում Աստված մարդուն կսկսի ուղղել ճշմարիտ քրիստոնյա դառնալուց ամիսներ կամ նույնիսկ տարիներ անց: Ինչքան երկար է մարդը ծառայում Հիսուս Քրիստոսին, այնքան շատ է Սուրբ Հոգին նրան սովորեցնում: Երբեմն Աստված պատրաստ է երկար սպասել՝ նախքան փոփոխության կոչ անելը: Ահա մի քանի օրինակներ.

1. Պետրոսի վերաբերմունքն ու նախապաշարումը հեթանոսների և նրանց՝ Ավետարան քարոզելու կարիքի վերաբերյալ:
   Տե՛ս Գործք 10:1-ից մինչև Գործք. 11:18:

2. Միշտ չէ, որ խնդիրները մեղքի հետ են կապված, սակայն դրանք կարող են քեզ հոգևորապես թուլացնել և թալանել Աստծո ուրախությունը քո կյանքից: Դրանք են. անհանգստությունները, բարկությունը, ընտանիքի անդամների հետ անհաշտությունները, հպարտությունը, աններողամտությունը: Որոշ դեպքերում Աստված կարող է պահանջել, որ դրական փոփոխություններ կատարես քո վարվելակերպի մեջ, օրինակ՝ մարդկանց հանդեպ բարի լինես, համբերատար, ներող և կարեկցող:

4

Երկրորդ և երրորդ դասակարգումների միջև տարբերությունները բոլորի համար նույնը չեն: Սուրբ Հոգին ինչ-որ մեկին կարող է հանդիմանել, որպեսզի անմիջապես փոխվի, իսկ մեկ ուրիշի դեպքում կարող է ամիսներով համբերել: Իրականում Սուրբ Հոգին, հնարավոր է, ինչ-որ մեկին ինչ-որ կոնկրետ բանի համար ոչ մի անգամ էլ չհանդիմանի: Մեզ չի վերաբերում կատարել Սուրբ Հոգու աշխատանքը: Մենք պետք է զգույշ լինենք, որպեսզի մեր անձնական համոզմունքները չպարտադրենք մեր ուսանողներին:

12. Եթե ես փոխվեմ, կշարունակեմ պահպանել իմ ինքնությունը (5 րոպե):

Որոշ նորադարձ քրիստոնյաներ հնարավոր է՝ չցանկանան փոխվել, քանի որ նրանց թվում է, որ դու փորձում ես նրանց ուրիշ մարդ դարձնել: Աստված չի ուզում, որ նրանք կեղծավորություն անեն կամ ձևացնեն, որ իրենք ուրիշ մարդ են: Աստված չի ուզում, որ բոլոր նորադարձ քրիստոնյաները փոխվեն և դառնան ճիշտ Բիլլի Գրեհեմի նման: Ուրեմն, ի՞նչ տեղ է տրվում «մեր ինքնությանն» այս բոլոր փոփոխություններն իրականացնելիս:

Դր. Գարրի Քոլլինսը շատ լավ աշխատանք է կատարել սրա վերաբերյալ իր՝ «How to be a People Helper» գրքի 201-204-րդ էջերում: Նա ցույց է տալիս, թե ինչպես պետք է Քրիստոսը լինի քո ամբողջ կյանքի առաջնորդական դիրքում, ընդ որում Նա գործում է քո ինքնության միջոցով, որպեսզի արտահայտի Իր պտուղները: Երբեմն, մարդն իր ինքնությունն աներկբայորեն կապում է որևէ սովորության կամ գործողության հետ, օրինակ՝ թմրամոլության: Նա կարող է ինքն իրեն ասել. «Ես գիտեմ, որ ես լավ թմրամոլ եմ: Եթե ես սա թողնեմ, ապա կյանքում էլ ի՞նչ կմնա ինձ»: Նշի՛ր, որ Աստված ուզում է, որ դու բացահայտես քո «իրական» ինքնությունը, որը քո ներսում է: Նա ուզում է, որ դու դադարես դրսի կյանքով ապրել և սովորես, թե ինչպես կարող ես անկեղծ ու ազնիվ մարդ լինել:

13. Ո՞վ է իրականացնում փոփոխությունը. Աստվա՞ծ, թե՞ ես (5-10 րոպե):

Մեկ այլ դժվարին հարց է հասկանալը, թե ինչ դեր ունի Աստված և ինչ պատասխանատվություն ունեմ ես իմ կյանքում հարկ եղած փոփոխություններն իրականացնելու մեջ: Դու կարող ես մեկ կամ երկու օրինակ վերցնել և քննարկել, թե որն է Աստծո կողմը և որը՝ քո կողմը: Գրատախտակի մեջտեղով գի՛ծ քաշիր: Մի կողմում գրի՛ր՝ ***Աստծո կողմը***, իսկ մյուսում՝ ***Իմ կողմը***:

Մեղքի փորձությունները սովորական խնդիրներ են, և դու կարող ես վերցնել դրանցից մեկը՝ որպես օրինակ: Աստվածաշնչյան բազմաթիվ համարներ ցույց են տալիս պատասխաններ երկու կողմերի համար էլ: Հակոբոս 4:7-8-ը թվարկում է մի քանի բան, որ դու պետք է անես, և մի բան, որն Աստված պետք է անի: Ա կորնթացիներին 10:13-ը ավելի շատ համարներ է ասում երկու կողմերի համար էլ:

4

14. Վեց հիմնական փոփոխություններ նորադարձ քրիստոնյայի համար (10-20 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 25-34-րդ էջեր:

Այս հատվածում դու կարող ես անցնել այն վեց հիմնական փոփոխություններով, որոնք գրված են Ուսանողի ձեռնարկի 21-26-րդ էջերում: Փորձի՛ր յուրաքանչյուր կետը նկարագրել քո կյանքից օրինակ բերելով, կամ էլ թող ուսանողները օրինակներ բերեն: Փորձի՛ր բացատրել, թե ինչու պետք է այս փոփոխությունները տեղի ունենան ճշմարիտ քրիստոնյայի կյանքում:

Մեղքի հետ կապված մի հարց պետք է քննարկել չորրորդ հիմնական փոփոխությունն ուսումնասիրելիս. «**Դու ավելի շատ փորձություններ, խնդիրներ ու դժվարություններ կունենաս**»: Հստակեցրո՛ւ մեղք գործելու և մեղքի մեջ ապրելու միջև եղած տարբերությունը: Երկու հատվածներ՝ Ա Հովհաննես 1:9 և Ա Հովհաննես 3:5-10, խոսում են այս թեմայի վերաբերյալ: Նա, ով մտադրված մեղք է գործում և դա անում է «ինձ Աստծո կարծիքը չի հետաքրքրում» վերաբերմունքով, լուրջ խնդրի մեջ է, հատկապես, երբ շարունակում է դա անել ամիսներ շարունակ: Սա շատ է տարբերվում այն մարդու իրավիճակից, ով մեղք է գործում տկարության պահին՝ ինչպես Պետրոսը վարվեց Հիսուսի խաչելության գիշերը: Մենք խոսում ենք սխալվողի և այն անձնավորության տարբերության մասին, ով շարունակաբար, ըստ սովորության, մեղք է գործում և չի էլ փորձում փոխվել:

15. Դատավարության դերակատարումը (5-10 րոպե):

Դու կարող ես ուսանողներին հանձնարարել, որ դատավարություն ներկայացնեն: Ենթադրենք, թե մի քրիստոնյա դատարանում է: Թող նա ներկայացնի փաստարկներ, որոնք պարզորոշ ցույց կտան, որ ինքը ճշմարիտ քրիստոնյա է: Թող դատախազը փորձի հակառակն ապացուցել, այն, որ նա ճշմարիտ քրիստոնյա չէ: Դասի այս հատվածն ամփոփի՛ր՝ բոլոր ուսանողներին հարցնելով. «Եթե քեզ դատարան տանեին՝ մեղադրելով, որ դու ճշմարիտ քրիստոնյա ես, ապա բավարար փաստարկներ կլինե՞ին քեզ դատապարտելու համար»:

4

16. Քննարկի՛ր Նախագիծ 7-ում զետեղված հետազոտությունների արդյունքները (3-10 րոպե):

Եթե ժամանակ ունես, կարող ես ուսանողներին հնարավորություն տալ կիսվելու, թե ինչ սովորեցին նրանք Նախագիծ 7-ում՝ «**Հետազոտի՛ր մյուս քրիստոնյաների կյանքը՝ փաստարկներ գտնելու համար**», կատարելով:

17. Անձնական կիրառություն (5 րոպե):

Ա. Անձնական փոփոխության ծրագիր:

1. Եթե ուսանողները դեռ չեն արել, թող հիմա գրեն մի քանի ասպարեզներ, որտեղ նրանք փոխվելու կարիք ունեն:
2. Թող ուսանողները աղոթելուց հետո գրեն այն երեք գլխավոր ասպարեզները, որտեղ նրանք զգում են, որ պետք է առաջին ամենակարևոր փոփոխություններն անեն: Թվարկե՛ք դրանք 1-3 միավորներով, 1-ը՝ որպես ամենակարևորը: Դրանից հետո ուսանողները թող գրեն մեկ կամ երկու բան, որ նրանք այս շաբաթ կանեն որպես իրենց կողմ, որոնք փոփոխություններ կբերեն իրենց կյանքի այս ասպարեզում: Ընդգծի՛ր Աստծո օգնությանը դիմելու կարևորությունն այս փոփոխություններն իրականացնելիս:

Ահա լրացուցիչ մի քանի հարցեր, որոնք կարող ես նրանց տալ հետագայում ուսումնասիրելու և մտածելու համար.

1. Ինչո՞ւ ես պետք է փոխեմ իմ կյանքի այս ասպարեզը:
2. Ի՞նչ է Աստված ասում այս հարցի վերաբերյալ Աստվածաշնչում:
3. Ո՞րն է իմ կողմն այս փոփոխությունն իրականացնելու հարցում:
4. Ի՞նչ է Աստված խոստացել, որ կանի, որպեսզի օգնի ինձ այս ասպարեզում փոխվելու համար:
5. Ինչպե՞ս կազդի այս փոփոխությունն իմ հոգևոր աճի վրա:

6. Ի՞նչ պետք է անեմ ես, որպեսզի այս փոփոխությունը դառնա իմ կյանքի մնայուն մասը:

7. Ինչպե՞ս կազդի այս փոփոխությունն ընկերներիս հետ (թե՛ հավատացյալ, թե՛ ոչ հավատացյալ) իմ փոխհարաբերությունների վրա:

Բ. Դերակատարում. վկայելու հնարավորություն:

Թող ուսանողներից մեկը պատկերացնի, որ վկայում է իր ոչ հավատացյալ ընկերոջը: Ընկերը հարցնում է. «Ի՞նչ փոփոխություններ են տեղի ունեցել քո կյանքում այն բանից հետո, երբ դարձել ես ճշմարիտ քրիստոնյա»: Դրանից հետո ուսանողները կպատասխանեն նրա այդ հարցին:

Գ. Որտեղի՞ց նրանք պետք է սկսեն փոփոխություններ կատարել:

Եթե քո ուսանողները դժվարանան որոշել, թե որտեղից սկսեն փոփոխություններ կատարել, հորդորի՛ր նրանց, որ փորձեն հետևյալ ձևը:

1. Սկսի՛ր քո կյանքի այն իրավիճակներից, որոնք քեզ համար ամենաշատն են սթրեսի (անհանգստության, սրտնեղության) պատճառ հանդիսանում:

2. Ընտրի՛ր այն ասպարեզները, որտեղ դու կարիք ունես աճելու, ասպարեզներ, որոնք բացահայտվել են այս սթրեսային իրավիճակների միջոցով:

3. Գրի՛ր համարներ, որոնք քեզ ցույց են տալիս գործողություններ, որոնք դու կարող ես անել քո կյանքի տվյալ ասպարեզում աճելու համար:

4. Մեկ կամ երկու նպատա՛կ դիր, որոնք կարող ես անել հաջորդ մի քանի օրվա ընթացքում, որպեսզի աճես քո կյանքի տվյալ ասպարեզում:

5. Քո նպատակներն իրականացնելուց հետո գնահատի՛ր արդյունքները՝ տեսնելու համար, թե որքանով այն օգնեց քեզ: Այնուհետև նոր նպատա՛կ դիր՝ ավելի շատ աճելու համար:

18. Հանձնարարություններ:

1. Դասաժամի վերջում հարցաշա՛ր տուր Հովհաննես 1:12-ի համար:

   Հովհաննես 1:12.

   «Բայց ովքեր ընդունեցին Իրեն, նրանց Նա Աստծո որդիներ դառնալու զորություն տվեց, նրանց, որ կհավատան Իր անվանը»:

2. Գնահատակա՛ն դիր Նախագիծ 4-ի՝ «**Ներկայացնել որոշում կայացնելու երեք ասպարեզները**» բաժնի համար, եթե անցած դասաժամի վերջում չես դրել:

3. Գնահատակա՛ն դիր Նախագիծ 6-րդի՝ «**Փնտրել փաստարկներ**» բաժնի համար:

4. Գնահատակա՛ն դիր Նախագիծ 7-րդի՝ «Հետազոտի՛ր մյուս քրիստոնյաների կյանքը՝ փաստարկներ գտնելու համար» բաժնի համար: Դու կարող ես սա ավելի ուշ գնահատել, եթե հետազոտելու համար ուսանողները դեռ հնարավորություն չեն ունեցել հանդիպել հարկ եղած մարդկանց հետ:

4

19. Դասի գնահատում:

Խնդրում եմ՝ գրի՛ր մտքեր այս դասի բարելավման համար:
Ո՞ր հատվածներն էին լավագույնս աշխատում:
Ո՞ր մասերն էին ուսանողների համար դժվարհասկանալի:
Ի՞նչն ամենաօգտակարը թվաց քո ուսանողներին:

Դաս 5.
Իմ անձնական փոխհարաբերությունը Հիսուս Քրիստոսի հետ

1. **Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն:**

Ես կարիք ունեմ գտնել իմաստալից ձևեր՝ Հիսուսի հետ անձնական փոխհարաբերություն զարգացնելու համար:

2. Բանալի համար. Եբրայեցիներին 4:16.

«Ուրեմն, համարձակությամբ մոտենանք շնորհաց աթոռին, որպեսզի ողորմություն ընդունենք և շնորհ գտնենք՝ կարիքի ժամանակ մեզ օգնելու»:

5

3. **Հղում ուսանողական նյութերին:**

Ուսանողի ձեռնարկի 3-րդ գլուխը համընթաց է այս դասի հետ: Ուսուցման ուղեցույցի Նախագիծ 8-րդը՝ «**Հիսուսի հետ անձնական փոխհարաբերություններ զարգացնել**», նույնպես համընթաց է այս դասի հետ:

4. **Ուսուցչի նախապատրաստություն:**

Քեզ համար օգտակար կլինի կարդալ թե՛ 5-րդ, թե՛ 6-րդ դասերի ծրագրերն այս դասաժամին նախապատրաստվելու համար: Դասընթացի 3-րդ գլուխը հեշտությամբ կարելի է բաժանել երկու դասաժամերի: Մեր առաջարկած ռազմավարությունն է՝ 5-րդ դասի ժամանակ քննարկել Հիսուսի հետ անձնական փոխհարաբերություն զարգացնելու գաղափարը: Այդ դեպքում հաջորդ դասաժամին նորի՛ց անցիր նույն գաղափարները՝ օգտագործելով աստվածաշնչյան օրինակներ, հիմնականում՝ Հիսուսի կյանքից: Ազա՛տ զգա այս դասի ծրագրերը վերածրագրելիս, եթե ավելի լավ ձև գտնես դասանյութի անցկացման համար:

Եթե քո ուսանողները դժվարանան որոշ մտքեր ընկալել, դու կարող ես մտածել 3-րդ գլուխը երեք դասաժամով անցկացնելու մասին: Կարող ես երկու դասաժամ վերցնել՝ 5-րդ դասի ծրագրի հիմնական կետերը ներկայացնելու համար: Երրորդ դասաժամին կարող ես անցնել 6-րդ դասի ծրագրում ներկայացված նյութը:

5. **Դասի ջերմացում. լավ ընկերության հատկանիշները** (5-10 րոպե):

Ուսանողներին բացատրի՛ր, որ մենք այսօր պատրաստվում ենք սկսել մեր քննարկումը, թե ինչպես զարգացնել անձնական հարաբերություններ Հիսուսի հետ: Բայց և այնպես, որպես սկզբնական գործողություն՝ մենք ուզում ենք նայել մարդկանց հետ ունեցած մեր ընկերությանը:

Թող ուսանողները թվարկեն 10 հատկանիշներ կամ որակներ, որ նրանք կուզենային տեսնել իրենց մտերիմ ընկերոջ մեջ: Թող նրանք ընտրեն դրանցից չորս ամենակարևորները և թվագրեն դրանք ըստ առաջնայնության: Այս ցուցակն ավարտելուց հետո թող կարդան իրենց գրած որակները: Գրի՛ր դրանք գրատախտակի, ստվարաթղթի վրա, կամ ներկայացրո՛ւ պրոյեկտորի միջոցով:

Համառոտ քննարկե՛ք, թե որ հատկանիշներն են նրանք ընտրում՝ որպես գլխավոր առաջնայնություն: Ստեղծի՛ր մի մթնոլորտ, որտեղ նրանք ազատ կզգան իրենց՝ արտահայտելով առաջնայնություններ, որոնք կտարբերվեն մյուս ուսանողների ընտրածներից:

5

6. **Սահմանի՛ր, թե ինչ է *անձնական փոխհարաբերությունը*** (3-5 րոպե):

Խնդրի՛ր քո ուսանողներին, որ քեզ ներկայացնեն իրենց սահմանումները՝ թե ինչ է անձնական փոխհարաբերությունը, կամ թող նրանք նկարագրեն, թե ինչ է նշանակում՝ ինչ-որ մեկի հետ անձնական փոխհարաբերություն ունենալ:

Համառոտ քննարկե՛ք, թե ինչ նկատի ունենք մենք, երբ խոսում ենք Հիսուսի հետ անձնական փոխհարաբերություն ունենալու մասին: Հիմնականում մենք խոսում ենք Հիսուսի հետ անձնական փոխհարաբերություն ունենալու ուղիների մասին: Մենք կարիք ունենք Նրան անձամբ ճանաչելու: Այսօր մենք ուզում ենք քննարկել, թե ինչպես անենք սա:

Այս հարցում մեզ հանդիպող դժվարություններից մեկն այն է, թե ինչպես դու կարող ես փոխհարաբերություն զարգացնել անտեսանելի անձնավորության հետ: Այս խնդրին ավելացրո՛ւ նաև այն, որ Նա բարձրաձայն չի խոսում քեզ հետ, և դու չես կարող Նրան դիպչել: Անպայման պարզաբանի՛ր այն միտքը, որ Աստծուն կարելի է ճանաչել, և որ Նա ուզում է անձնական փոխհարաբերություն զարգացնել քո ուսանողներից յուրաքանչյուրի հետ:

7. **Ինչո՞ւ անձնական փոխհարաբերություն հաստատել Հիսուսի հետ** (5-10 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 36-37-րդ էջեր:

Նախքան պատասխանելը հետևյալ հարցին՝ «Ինչո՞ւ ես պետք է անձնական փոխհարաբերություն հաստատեմ Հիսուսի հետ», մեզ անհրաժեշտ է պատասխանել երկու հարցի.

Դու հավատո՞ւմ ես, որ Աստված կա:

Դու հավատո՞ւմ ես, որ Հիսուս Քրիստոսն Աստված է:

Եթե քո ուսանողներից ոմանք դեռ հարցեր ունեն այս երկու թեմաների վերաբերյալ, ուրեմն հստակեցրո՛ւ դրանք՝ նախքան հաջորդ կետին անցնելը:

Թող ուսանողները կարդան Եբրայեցիներին 11:6-ը, որը համընթաց է առաջին հարցի հետ: Նաև քննարկի՛ր համարներ, որոնք խոսում են Հիսուսի՝ Աստված լինելու մասին:

Հաջորդն անցե՛ք Ուսանողի ձեռնարկի 36-37-րդ էջերում քննարկված երկու հարցերին: Այս հարցերի պատասխանները պարզաբանում են, թե ինչու պետք է մենք անձնական փոխհարաբերություն զարգացնենք Հիսուսի հետ:

1. **Ինչո՞ւ է Աստված ստեղծել քեզ**:
2. **Ի՞նչն է կյանքում իրական բավարարվածություն բերում:**

Ուսանողի ձեռնարկի 37-րդ էջում J. I. Packer-ի մեջբերումը «Knowing God» գրքից շեշտում է կարևորությունը, որը մենք պետք է տանք Աստծուն անձամբ ճանաչելուն: Դուք կարող եք նաև նայել, թե ինչ է ասում Ժողովը կյանքի իրական իմաստը գտնելու վերաբերյալ: Այդ գրքի վերջին մի քանի համարները մատնանշում են, թե իրականում ինչն է կյանքում կարևոր. պատվել Աստծուն և կատարել Նրա պատվիրանները: Աստվածաշնչյան այս ճշմարտությունը հակադրի՛ր կյանքի իրական իմաստի վերաբերյալ այս աշխարհի առաջարկած ուղերձի հետ:

5

> J.I. Packer-ն իր Knowing God գրքում մատնանշում է Աստծուն արհամարհելու վտանգների մասին: «Արհամարհի՛ր Աստծուն ճանաչելը, և ինքդ քեզ կդատապարտես կյանքում սայթաքելուն և կուրորեն խարխափելուն՝ առանց ուղղության գիտակցության և առանց հասկանալու, թե ինչ է քեզ շրջապատում: Այս ձևով դու կարող ես վատնել քո կյանքը և կորցնել քո հոգին»:
>
> *Մեջբերումն արված է Ուսանողի ձեռնարկի 37-րդ էջից*

8. Հիսուսի հետ խորհրդապաշտական փորձառություն մի՛ փնտրիր (3-5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 38-րդ:

Սա առաջին հարցն է, որ բարձրացվում է Ուսանողի ձեռնարկի 38-րդ էջում գտնվող՝ հետևյալ թեմայի հետ կապված. «**Ի՞նչ տեսակի փոխհարաբերություններ կարող ես զարգացնել Հիսուսի հետ**»: Եթե քո ուսանողներից ոմանք նախկինում ներգրավված են եղել օկուլտիզմի մեջ, նրանք, հնարավոր է, ոգիներ տեսնելու փորձառություն ունենան: Հիասթափեցրո՛ւ նրանց, որ այդպիսի փորձառություն Հիսուսի հետ նրանք չեն կարող ունենալ:

Մենք Հիսուսի հետ կարող ենք ունենալ բնական փոխհարաբերություն: Քննարկի՛ր Հովհաննես 6:44-ի կարևորությունը, որտեղ Հիսուսն ասում է. «Ոչ մեկը չի կարող Ինձ գալ, եթե Հայրը, որ Ինձ ուղարկեց, նրան չձգի»:

9. Ես կկորցնե՞մ իմ ինքնությունը
(3-5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 38-39-րդ էջեր:

Որոշ նորադարձ քրիստոնյաներ շատ ցածր կարծիք ունեն իրենց մասին: Ամեն անգամ, երբ դու նրանց դիմում ես, որ փոխվեն և թողնեն ինչ-որ մի վատ սովորություն, որն Աստված պիտակավորում է որպես մեղք, նրանց թվում է, թե դու նրանց ասում ես, որ թողնեն իրենց ինքնությունը: «Ես կդադարեմ ես լինելուց, եթե թողնեմ այդ բանը»: Սա իրականության թյուրըմբռնում է: Այս իրողությունը համեմատի՛ր մեկ ուրիշ ընկերոջ հետ ունեցած քո մտերմության հետ:

Երբ երկու մարդ դառնում են մտերիմ ընկերներ, նրանք, միևնույն է, շարունակում են լինել առանձին անհատներ: Այո՛, նրանք կհարմարեցնեն իրենց վարքը, որպեսզի միմյանց չվիրավորեն: Եվ նրանք դա անում են, որովհետև սիրում են իրենց ընկերոջը, այլ ոչ թե որ ստիպված են:

5

10. Աստված ուզում է քեզ հետ առանձնահատուկ, բայց ոչ թե հավասար ընկերություն ունենալ (3-5 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 39-40-րդ էջեր:

Ի՞նչ տեսակի ընկերություն մենք կարող ենք անել Հիսուսի հետ: Մատնանշի՛ր, որ Աստված մասսայական ձևով չի ընկերություն անում մարդկանց հետ: Նա ամեն մեկին յուրահատուկ մոտեցում և վերաբերմունք է ցույց տալիս: Բայց և այնպես, Աստծո հետ այս մտերմությունն ինձ Նրան հավասար չի դարձնում: Ես չեմ կարող պահանջներ ներկայացնել Աստծուն, բայց Նա կարող է պահանջներ ներկայացնել քեզ և ինձ:

Օգտագործի՛ր աղյուսակը՝ բացատրելու համար Հիսուսի հետ ունեցած մեր փոխհարաբերության երեք փուլերը կամ մակարդակները:

1. Հիսուսը քո Փրկիչն է. Նա ներում է քո մեղքերը:
2. Հիսուսը քո Առաջնորդն է. Նա պետք է ղեկավարի քո կյանքը:
3. Հիսուսն ուզում է լինել քո Հայրը. Նա ուզում է սիրո վրա հիմնված փոխհարաբերություն ունենալ:

Հիսուսի հետ անձնական փոխհարաբերությունների երեք փուլերը

Համարներ	Հիսուսի դերը կամ մասը այս փոխհարաբերության մեջ	Հիսուսի քայլը	Շփման կետը	Իմ դերը կամ մասը այս փոխհարաբերության մեջ	Իմ քայլը
Ա Հովհաննես 1:9 Ա Հովհաննես 2:1-2 Գործք. 4:12	Փրկիչ	Նա վճարեց իմ մեղքերի համար: Նա ներում է իմ մեղքերը:	Իմ մեղքը	Մեղավոր	Խոստովանեմ իմ մեղքերը: Կյանքս հանձնեմ Հիսուսին:
Ա Հովհաննես 2:3 Ա Պետրոս 2:21 Հովհաննես 16:13 Ա Կորն. 6:19-20	Տեր Ծառա Առաջնորդ	Առաջնորդում է ինձ: Ուսուցիչ: Նրա կյանքն Աստվածաշնչում կատարյալ օրինակ է:	Աստծո օրենքներն ու ուսուցումներն իմ վարքի վերաբերյալ:	Հետևորդ Ծառա Ստրուկ	Իմանալ Նրա օրենքները: Հնազանդվել Նրա օրենքներին: Իմանալ Նրա կամքը: Անել Նրա կամքը:
Հովհաննես 15:12-14 Ա Հովհաննես 15:15	Ընկեր	Սիրում է ինձ: Ազատ շփում:	Իմ օրվա յուրաքանչյուր քայլ:	Ընկեր	Սիրեմ Նրան: Ազատ շփում:

Աղբյուրը՝ Ուսանողի ձեռնարկ, էջ 40-րդ:

Դու կարող ես այս աղյուսակի համար պլակատ պատրաստել և դասաժամի ընթացքում ցուցադրել դասասենյակում, երբ ուսուցանես Հիսուսի հետ անձնական փոխհարաբերություն զարգացնելու վերաբերյալ նյութը:

Մեջտեղի սյունակը՝ ***Շփման կետը***, քննարկման հիմնական թեման է: Հիսուսի հետ անձնական փոխհարաբերությունը կենտրոնանում է կյանքի այն հարցերի վրա, որոնք բարձրացված են այդ սյունակում: Մարդը պետք է լուծի մեղքի հարցը՝ նախքան կկարողանա արդյունավետ կերպով տեղափոխվել հաջորդ մակարդակ, որը վերաբերում է Հիսուսի՝ մեր կյանքի Առաջնորդի օգնությամբ Աստծո օրենքներին հնազանդվելուն:

Մենք չենք կարող ցատկել այս փոխհարաբերության երկրորդ փուլի վրայով: Մենք չենք կարող ընկերություն անել Հիսուսի հետ և, միաժամանակ, անտեսել Նրա օրենքները և Նրա դիրքն ու իշխանությունը մեր կյանքում: Նմանապես, եթե դու ոստիկանապետի ընկերն ես, չի նշանակում, որ երբ ցանկանաս, կարող ես խախտել օրենքները:

Հիսուսի հետ մեր ընկերությունը պետք է լինի անկեղծ ու մտերիմ: Հիսուսը երբեք չի օգտագործի Իր դիրքն ու հեղինակությունը (ինչպես որոշ մարդիկ են անում) և չի ասի. «Ես չեմ կարող այդ անձնավորության հետ չափից ավելի մտերմություն անել, որովհետև Ես դիրքով նրանից վեր եմ կանգնած»: Քննարկի՛ր այն օրինակներից մի քանիսը, որոնք Հիսուսն օգտագործեց՝ նկարագրելու համար այս փոխհարաբերությունը: Հայր և որդի փոխհարաբերությունը շատ է օգտագործվում ողջ Աստվածաշնչով մեկ: Հիսուսն այս փոխհարաբերությունը ներկայացնում է նաև հովվի և իր ոչխարների օրինակով: Նոր Կտակարանում Հիսուսի հետ մեր փոխհարաբերությունը նկարագրվում է նաև փեսայի ու հարսի օրինակով: Դու այս օրինակները կարող ես այս դասին համառոտ ներկայացնել, իսկ հաջորդ դասին ավելի մանրամասն քննարկել:

5

Այս աղյուսակը կարող է նաև օգտագործվել 6-րդ դասի ժամանակ, որտեղ մենք մանրամասնորեն ենք քննարկում անձնական հաղորդակցությունը՝ որպես Հիսուսի հետ փոխհարաբերություն զարգացնելու հիմնական կետերից մեկը:

11. Աստծո մասին սովորի՛ր Աստվածաշնչից
(5-10 բոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 41-րդ:

Աստծո մասին իմանալն այն առաջին քայլերից մեկն է, որ մարդը պետք է անի Հիսուսի հետ փոխհարաբերություն զարգացնելիս: Թող ուսանողներն անդրադարձ կատարեն իրենց Ուսուցման ուղեցույցի 8-րդ նախագծի 2-րդ հարցին, որը նրանց ուղղորդում է, որ 1-10 սանդղակով գնահատեն Հիսուսի մասին իրենց իմացությունը: Եթե ուսանողների համար հարմար է, թող բարձրաձայն կարդան իրենց գնահատականը: Հակառակ դեպքում դու կարող ես անցնել դասարանով մեկ և լուռ կարդալ նրանց միավորները: Սա քեզ որոշակի գաղափար կտա Աստծո վերաբերյալ նրանց ընդհանուր իմացության մասին:

Եթե քո դասարանում կան նաև ոչ հավատացյալներ, քաջալերի՛ր նրանց, որ ուսումնասիրեն Հիսուսի կյանքը: Մի՛ ստիպիր, որ նրանք արագ որոշում կայացնեն իրենց կյանքը Հիսուսին նվիրելու վերաբերյալ, քանի դեռ չեն իմացել, թե ով է Հիսուսը: Եթե այսօրվանից մինչև նրանց կյանքի վերջը Քրիստոսը պետք է լինի նրանց կյանքի բոլոր ասպարեզների Առաջնորդը, ուրեմն նրանց որոշումը չպետք է լինի հապճեպ ու մակերեսային: Ինչքան նրանք շատ իմանան Հիսուսի մասին, այնքան ավելի խորը կհամոզվեն, որ Նա է միակ ճիշտ որոշումը:

Օգտագործի՛ր Հովհաննես 14:9-11 հատվածը՝ մատնանշելու համար, որ Աստվածության երեք անձերը՝ Հայր Աստված, Որդի Աստված և Սուրբ Հոգի Աստված, արմատապես տարբերվող ինքնություններ չունեն: Նրանք ունեն բնավորության միևնույն հիմնական որակները: Հիսուսն ասաց. «Եթե դուք ուզում եք իմանալ, թե ինչ է Հայրը զգում կյանքի տարբեր հարցերի վերաբերյալ, ապա նայե՛ք, թե ինչպես եմ Ես զգում այդ հարցերի վերաբերյալ: Մենք միանման ենք մտածում և զգում»:

12. Մի՛ համարիր, որ Աստված քեզ պես է մտածում
(3-5 բոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 42-րդ:

Օգտագործի՛ր Եսայի 55:8-9 հատվածը, որպեսզի ներկայացնես կարևոր ճշմարտությունն Աստծո մասին: Նրա ճանապարհներն ու խորհուրդները շատ ավելի վեր են մեզնից, այնպես որ մենք չպետք է փորձենք կռահել Աստծո խորհուրդները մի հարցի վերաբերյալ, որում Նա որոշել է լուռ մնալ: Աստծուն կարելի է ճանաչել, սակայն մենք երբևէ ի վիճակի չենք լինի Նրան ամբողջությամբ ճանաչել:

5

Եսայի 55:8-9.

«Որովհետև Իմ խորհուրդները ձեր խորհուրդները չեն. և ձեր ճանապարհները Իմ ճանապարհները չեն,- ասում է Տերը: Այլ ինչպես երկինքը բարձր է երկրից, այնպես էլ բարձր են Իմ ճանապարհները ձեր ճանապարհներից, և Իմ խորհուրդները ձեր խորհուրդներից»:

Սա կարող է հարմար պահ լինել նշելու համար, որ կյանքը լի է բազմաթիվ անպատասխան հարցերով: Դու չես կարող սպասել, մինչև այս բոլոր հարցերը պատասխան ստանան, և հետո միայն Քրիստոսին նվիրվելու որոշում կայացնես և դառնաս ճշմարիտ քրիստոնյա: Շատ հարցեր դու ստիպված կլինես դնել «վերևի դարակում»՝ հետո պատասխան ունենալու ակնկալիքով, որպեսզի հիմա կարողանաս հետևել կյանքում ավելի կարևոր հարցերի, ինչպիսիք են՝ սովորել սիրել և հնազանդվել Աստծուն:

Սա կարող է նաև հարմար առիթ լինել ուսանողներին զգուշացնելու համար, որ չփորձեն Աստծուն օգտագործել որպես իրենց տեղեկությունների աղբյուր: «Տերն ինձ ասաց… . . »: Միգուցե Տերն իրոք ինչ-որ բան ասել է տվյալ անձնավորությանը, սակայն դա միշտ չի կարող լինել: Աստվածաշունչը պետք է լինի մեր չափման գործիքը, որպեսզի տեսնենք, թե արդյոք «Տիրոջից ստացած նոր խոսքը» իրականում Աստծո՞ւց է, թե՞ մարդուց:

13. Իմանալ Աստծո մասին, կամ ճանաչել Աստծուն
(5-10 բոպե), Ուսանողի ձեռնարկ, 42-43-րդ էջեր:

Դու հեշտությամբ կարող ես շատ ժամանակ ծախսել այս թեմայի վրա: Սակայն ես կարծում եմ, որ ավելի լավ կլինի համեմատաբար արագ անցկացնել սա և անցնել նյութի հաջորդ հատվածին, որը վերաբերում է Հիսուսի հետ անձնական մտերիմ փոխհարաբերություն զարգացնելու քայլերին:

Թող ուսանողները կիսվեն Ուսանողի ձեռնարկի 8-րդ նախագծի 3-րդ հարցին տված իրենց պատասխաններով: Նրանք պետք է բացատրեն, թե ըստ Կողոսացիներին 1:9-10 հատվածի՝ մարդն ինչպես կարող է ավելի լավ ճանաչել Աստծուն: Դու կարող ես օգտագործել սա՝ նկարագրելու համար այն խնդիրը, որը որոշ փարիսեցիներ ունեին Հիսուսի օրերում: Նրանք բավականաչափ գիտեին, թե ինչ է ասում Աստվածաշունչը, սակայն Հիսուսի հետ անձնական փոխհարաբերություն չունեին: Մատթեոս 7:21-23 հատվածը նույնպես համապատասխան է այստեղ:

Քո ուսանողները, հնարավոր է, ունեն համապատասխան գիտական և հոգևոր հիմք, որպեսզի հասկանան «իմանալ» բառի համար հունարենում օգտագործվող բառերի տարբերությունը: Անգլերենում կա միայն մեկ բառ, իսկ հունարենը Հիսուսի օրերում ուներ երկու բառ: Հունարեն «oida» բառը վերաբերում է փաստացի իմանալուն, այսինքն՝ իմանալ ինչ-որ բանի մասին: Հունարեն մյուս բառը՝ «ginoski», հաճախ իր մեջ կրում է անձնական փորձով իմանալու գաղափարը:

Քաջալերի՛ր ուսանողներին՝ բառի ուսումնասիրություն անել այդ համարների վերաբերյալ: Young's Analytical Concordance-ը քեզ արագ կտրամադրի այս երկու բառերն օգտագործող համարների երկու ցուցակ:

14. Ներկայացրո՛ւ Դ. կետը. «Որո՞նք են Հիսուսի հետ անձնական փոխհարաբերություն զարգացնելու հիմնական քայլերը»
(3-5 բոպե), Ուսանողի ձեռնարկ, 44-47-րդ էջեր:

Դասի այս հատվածին հասնելով՝ դու կարիք կունենաս կողմնորոշվելու, թե որքան ժամանակ ունես մնացած՝ անցկացնելու համար այս հատվածը և այսօրվա դասի անձնական կիրառության գործողությունը: Եթե քո ժամանակը քիչ է, կարող ես արագ անցնել այս կետերով և բացատրել, որ մենք այս հարցերն ավելի մանրամասն կքննարկենք հաջորդ դասաժամին:

Ուսանողի ձեռնարկի 44-րդ էջը ներկայացնելիս նկատի՛ ունեցիր մի քանի կետեր, որոնք դու կարող ես համառոտ քննարկել: Քաջալերի՛ր նրանց, որպեսզի դրան նայեն որպես իրատեսական նպատակի. նույնիսկ փոքրիկ երեխաները կարող են Հիսուսի հետ մտերիմ ընկերներ լինել: Մենք, հնարավոր է, երբևէ ֆիզիկապես չտեսնենք Հիսուսին, սակայն կարող ենք հասնել մի կետի, երբ կասենք. «Հիսուսն իմ լավագույն ընկերն է»:

Հիսուսի հետ անձնական փոխհարաբերություն զարգացնելու չորս կետերից յուրաքանչյուրը քննարկելիս դու կարող ես դրանցից ամեն մեկը ներկայացնել երկու անձնավորությունների ունեցած ընկերության շրջանակում: Այս սկզբունքներից շատերը գրեթե նույնն են, ինչ ցանկացած ընկերություն, որը դու ուզում ես սկսել:

15. Անցկացրո՛ւ 1-ին կետը. «Երկու կողմերն էլ պետք է ցանկանան ընկերանալ» (3-5 բոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 44-րդ:

Հստակեցրո՛ւ, որ Աստված չի վարանում ընկերություն անել քո դասարանի յուրաքանչյուր ուսանողի հետ: Աստված ցանկանում է մտերիմ ընկերություն անել նույնիսկ նրանց հետ, ովքեր դեռ ապրում են մեղքի մեջ: Աստված արդեն բազմաթիվ ձևերով ցույց է տվել Իր սերը: Իրականում հարցը հետևյալն է. «**Ինչքան եմ ե՞ս ուզում մտերիմ ընկերություն անել Աստծո հետ**»:

Մատթեոս 7:7-11-ը այս պահին քննարկման համար լավ խոսք է: Մատնանշի՛ր, թե ինչպես է այս քայլը կապված առաջինների հետ, որոնց մասին մենք խոսեցինք սույն դասընթացին. մեր կյանքը Հիսուս Քրիստոսին նվիրելու որոշում կայացնելը:

16. Անցկացրո՛ւ 2-րդ կետը. «Սովորի՛ր հաղորդակցվել Հիսուսի հետ» (5-10 բոպե), Ուսանողի ձեռնարկ, էջ 45-րդ:

Հաղորդակցվել սովորելը Հիսուսի հետ անձնական փոխհարաբերություն զարգացնելու սիրտն է: Շեշտի՛ր ամեն օր աղոթքին իմաստալից ժամանակ տալու կարևորությունը: Եթե քո ուսանողները դեռևս նոր են հավատի մեջ, դու կարող ես որոշ ժամանակ հատկացնել՝ խոսելու աղոթքի հիմունքների մասին: Այս թեման ավելի մանրամասն քննարկվում է ***Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար*** շարքի՝ ***Քրիստոնեական պրակտիկա*** դասընթացում:

Թող ուսանողները կիսվեն իրենց պատասխաններով, որ տվել են Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 8-րդի 4-րդ և 5-րդ հարցերին: 4-րդ հարցը նրանց ասում է՝ գնահատել այն դեպքերը, երբ զգացել են Աստծո մոտիկությունը: 5-րդ հարցը նրանց ասում է՝ գնահատել, թե ինչ են զգում իրենց աղոթքի կյանքի վերաբերյալ: Եթե ժամանակդ չի բավականացնում, դու կարող ես այս պահին քննարկել միայն 5-րդ հարցը, իսկ 4-րդ հարցի ձեր քննարկումները պահել մինչև հաջորդ դասաժամ:

Ընդգծի՛ր, որ Աստծո հետ հաղորդակցությունը պետք է լինի շատ անկեղծ ու ազատ: Քաջալերի՛ր նրանց, որպեսզի Աստծո հետ խոսեն այն բոլոր դեպքերի մասին, որոնք օրվա ընթացքում տեղի են ունենում նրանց հետ: Կարիքը չկա, որ նրանք «երկնքից եկող ձայն» լսեն, նախքան կսկսեն ինչ-որ բան անել օրվա ընթացքում: Սակայն նրանք պետք է Աստծո հետ օրվա ընթացքում պարբերաբար խորհրդակցելու սովորություն ձեռք բերեն: Աղոթող

5

Փարիսեցու և մաքսավորի առակը ներկայացնում է եսասիրական աղոթքի ու Աստծո հետ անկեղծ հաղորդակցվելու միջև եղած տարբերությունը: Տե՛ս Ղուկ. 18:9-14:

17. Անցկացրո՛ւ 3-րդ կետը. «Սովորի՛ր վստահություն և անկեղծություն զարգացնել» (5-10 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 45-46-րդ էջեր:

Այս երկուսը թեև իրար հետ կապված են, սակայն առանձին են: Նշի՛ր, որ հստակ ընտրություն կատարելու կարիք կա, թե ինչպես ես դու արձագանքելու այս երկու ասպարեզներում: Դու ես որոշում վստահել ինչ-որ մեկին: Դու ես որոշում նրանց հետ անկեղծ լինել:

Աստված այս երկու ասպարեզներում կատարյալ է: Նա միշտ կատարելապես անկեղծ է մեզ հետ և ոչ մի առիթ չի տալիս մեզ, որպեսզի չվստահենք Նրան: Մենք (ոչ թե Աստված) կարիք ունենք աճելու այս ասպարեզում: Մատնանշի՛ր մեր հնազանդության դերը՝ ցույց տալու համար Աստծուն, որ Նա կարող է մեզ վստահել:

5

18. Անցկացրո՛ւ 4-րդ կետը. «Սովորի՛ր հարգել և սիրել Նրան» (5-10 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 46-47-րդ էջեր:

Աստվածաշունչը հստակ նշում է, որ Աստված խորապես սիրում և հարգում է մարդուն: Թող դասարանը անդրադառնա այն հատկանիշներին, որոնք գրված են Ա Կորնթացիներին 13:4-8 հատվածում, և տեսնի, թե դրանցից քանիսն են նկարագրում Աստծո վերաբերմունքը մեր հանդեպ: Եթե ժամանակդ չի բավականացնում, սպասի՛ր մինչև հաջորդ դասաժամը, որպեսզի կարդաս Ա Կորնթացիներին 13-րդ գլուխը:

Ընդգծի՛ր, որ մենք սիրով և հարգանքով արձագանքելու կարիք ունենք: Աստծո սիրուն մեր արձագանքելու աստիճանն է որոշում, թե որքան խորն է մեր փոխհարաբերությունը Նրա հետ: Ընդգծի՛ր կարևորությունը Աստծո ամենամեծ օրենքի՝ սիրել Նրան: Դու կարող ես քննարկել, թե ինչու է մեզ տրված Նրան սիրելու այս պատվերը: Նաև քննարկի՛ր այն համարները, որոնք ասում են, որ եթե մենք սիրենք Աստծուն, ապա կհնազանդվենք Նրան: Հղո՛ւմ արա Ուսանողի ձեռնարկի 40-րդ էջի աղյուսակին, որը ցույց է տալիս Հիսուսի հետ մեր փոխհարաբերության երեք մակարդակները: Մատնանշի՛ր, որ սերն ու հարգանքը կապ ունեն Հիսուսի՝ մեր կյանքի Առաջնորդը լինելու փաստի հետ:

19. Անձնական կիրառություն (5 րոպե):

Քաջալերի՛ր նրանց անկեղծորեն ասելու Աստծուն, թե ինչ են ուզում անել Հիսուսի հետ իրենց անձնական փոխհարաբերության վերաբերյալ: Քաջալերի՛ր նրանց գործնական քայլեր անելու համար, որպեսզի ամեն օր ավելի մոտենան Հիսուսին:

Ա. Գնահատի՛ր Հիսուսի հետ ունեցած քո անձնական փոխհարաբերությունը:

Քաջալերի՛ր ուսանողներին, որպեսզի 1-10 միավորների սանդղակի վրա իրենք իրենց գնահատեն, թե ինչ անձնական փոխհարաբերություն ունեն Հիսուսի հետ: 1-ին աստիճանը ցույց կտա, որ ես գրեթե չեմ ճանաչում Հիսուսին, իսկ 10-րդը՝ որ ես անձնական շատ մտերիմ փոխհարաբերություն ունեմ Հիսուսի հետ:

Թող ուսանողները զույգեր կազմեն և պատասխաններով կիսվեն իրենց ընկերոջ հետ: Այնուհետև թող աղոթեն մեկը մյուսի համար, որպեսզի կարողանան ավելի սերտ անձնական փոխհարաբերություն զարգացնել Հիսուսի հետ: Եթե դու հարմար չես գտնի ուսանողներին զույգերի բաժանելու կամ միմյանց համար աղոթելու հարցը, թող նրանք պարզապես Աստծուն ուղղված աղոթք գրեն այն բանից հետո, երբ կավարտեն իրենք իրենց գնահատել: Թող նրանք Աստծուն ասեն, թե ինչ կցանկանային, որ իրենց կյանքում տեղի ունենար Հիսուսի հետ անձնական փոխհարաբերության մեջ մտնելուց հետո՝ հաջորդ օրերի կամ շաբաթների ընթացքում:

Բ. Մեկնարկային կետ Հիսուսի հետ ավելի խորը անձնական փոխհարաբերության համար: Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 10-րդ:

Որտեղի՞ց է մարդը սկսում Հիսուսի հետ ավելի խորը, անձնական փոխհարաբերություն զարգացնել: Ուսուցման ուղեցույցի 10-րդ նախագիծը ներկայացնում է ուղեցույցներ, որոնք կարող են քո ուսանողներին տալ մի քանի մտքեր, թե ինչպես կարելի է դա տեղափոխել գործնական մակարդակ:

Թող ուսանողները բացեն այդ նախագիծը, և նրանց հետ միասին համառոտ անցի՛ր ցուցումներով: Եթե դա տևի մեկ կամ ավելի օրեր նախքան ձեր առաջին դասաժամը, դու կարող ես նրանց հանձնարարել, որ հաջորդ դասաժամի համար լրացնեն առնվազն մեկ օրվա գնահատական: Նրանց փորձառությունն այնուհետև կարող է օգտագործվել այն թեմայի քննարկման ժամանակ, թե ինչպես կարող է մարդը ուժեղացնել Հիսուսի հետ իր փոխհարաբերությունը:

20. Հանձնարարություններ:

1. Գնահատակա՛ն դիր Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 8-րդի՝ «**Հիսուսի հետ անձնական փոխհարաբերություն զարգացնել**» բաժնի համար:

2. Թող ուսանողները կարդան Ուսանողի ձեռնարկի 3-րդ գլուխը, որպեսզի վերանայեն այսօրվա դասի քննարկումը և նախապատրաստվեն հաջորդ դասաժամի համար:

3. Գնահատակա՛ն դիր Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 7-րդի՝ «**Հետազոտի՛ր մյուս քրիստոնյաների կյանքը՝ փաստարկներ գտնելու համար**» բաժնի համար:

4. Ստուգի՛ր համոզվելու համար, որ քո ուսանողները գիտեն, թե ինչպես լրացնեն Ուսանողի ձեռնարկ, Նախագիծ 9-րդը. «**Խորացնել իմ անձնական փոխհարաբերությունը Հիսուսի հետ**»: Նրանք պետք է այս աշխատանքն ավարտեն դասաժամից առնվազն մեկ օր առաջ:

5

21. Դասի գնահատում:

Խնդրում եմ՝ գրի՛ր մտքեր այս դասի բարելավման համար:
Ո՞ր հատվածներն էին լավագույնս աշխատում:
Ո՞ր մասերն էին ուսանողների համար դժվարհասկանալի:
Ի՞նչն ամենաօգտակարը թվաց քո ուսանողներին:

Դաս 6.
Ընկերություն անել Հիսուսի հետ

1. **Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն:**

Ես Աստծո հետ համագործակցելու կարիք ունեմ՝ իմ ամենօրյա կյանքում փոփոխություններ իրականացնելու համար, որն ինձ կօգնի ավելի մոտենալ Աստծուն:

2. **Բանալի համար. Փիլիպպեցիներին 1:6.**

«Այս բանում վստահ լինելով, թե Նա՝ Ով ձեր մեջ սկսեց բարի գործը, այն կհասցնի իր ավարտին մինչև Հիսուս Քրիստոսի օրը»:

3. **Հղում ուսանողական նյութերին:**

Ուսանողի ձեռնարկի 3-րդ գլուխը համընթաց է այս դասի հետ: Ուսուցման ուղեցույցի հետևյալ նախագծերը կարող են օգտագործվել այս դասին հետ.

Նախագիծ 8. «Հիսուսի հետ անձնական փոխհարաբերություն զարգացնել»:

Նածագիծ 9. «Խորացնել իմ անձնական փոխհարաբերությունը Հիսուսի հետ»:

Նածագիծ 10. «Հիսուսին ճանաչելու իմ անձնական փորձառությունը»:

4. **Դասի ջերմացում. Ինչպե՛ս հաստատել մնայուն ընկերություն** (5-10 րոպե),

Ա. **Խնդիր** (կարդա՛ քո ուսանողների համար):

Դու ուզում ես մի անձնավորության հետ ընկերություն անել, որն ապրում է մեկ այլ երկրում: Դու գիտես, որ երբևէ չես կարողանա տեսնել այդ անձնավորությանը, քանի որ չես կարող գնալ այդ երկիր: Ինչպե՞ս կկարողանայիր ընկերություն անել այդ անձնավորության հետ:

Բ. **Փոքր խմբերով գործողություն:**

Թող ուսանողները բաժանվեն 3-5 հոգանոց փոքր խմբերի: Նրանց չորս րոպե՛ տուր, որպեսզի քեզ ներկայացնեն իրենց մտքերը: Նրանք պետք է գործողությունների հատուկ ծրագիր կազմեն: Նաև պետք է գրեն, թե ինչ խնդիրներ կարող են ունենալ, եթե ցանկանան ճանաչել այդ անձնավորությանը: Նրանք պետք է գրեն իրենց մտքերը:

6

Գ. Ներկայացնելու ժամանակ:

Թող խմբերից յուրաքանչյուրը ներկայացնի իր մտքերը դասարանին: Համառոտ քննարկի՛ր այն խնդիրները, որոնց նրանք կհանդիպեն, եթե փորձեն նման ընկերություն զարգացնել:

Դու կարող ես այդ խնդիրները համեմատել այն խնդիրների հետ, որոնց մենք ենք հանդիպում, երբ փորձում ենք ընկերություն զարգացնել Հիսուսի հետ: Մեզնից մեծ մասը Հիսուսին ֆիզիկապես չի տեսնի՝ նախքան երկինք գնալը, սակայն մենք կարող ենք Նրա հետ հաղորդակցվել հիմա: Ահա մի քանի հարցեր, որոնց մենք ուզում ենք պատասխանել այս դասաժամին.

1. Ի՞նչ տեսակի փոխհարաբերություն ես դու ուզում ունենալ Հիսուսի հետ:
2. Ինչպե՞ս կարող ես, իրո՛ք, անձնապես ճանաչել Հիսուսին:
3. Ինչքա՞ն ժամանակ կպահանջվի Հիսուսի հետ անձնական մտերիմ փոխհարաբերություն զարգացնելու համար:
4. Ի՞նչ կարող եմ ես այս շաբաթ անել, որպեսզի ավելի խորացնեմ Հիսուսի հետ իմ անձնական փոխհարաբերությունը:

6

5. Վերանայի՛ր 5-րդ դասի հիմնական կետերը (5-10 րոպե):

Վերանայե՛ք Ուսանողի ձեռնարկի 36-37-րդ էջերում «**Ի՞նչն է կյանքում իրական բավարարվածություն բերում**» կետը: Հարցրո՛ւ, թե արդյոք նրանք հարցեր ունե՞ն այն թեմաների վերաբերյալ, որոնք դուք անցաք անցյալ դասին: Ընդգծի՛ր, որ եթե ցանկանում ես Հիսուսի հետ անձնական փոխհարաբերություն զարգացնել, ապա պետք է մտքի, կամքի և զգացմունքների հստակ որոշում կայացնես:

6. **«Մեկանալ» Հիսուսի հետ** (5-15 րոպե):

Վերանայի՛ր այն աղյուսակը, որտեղ քննարկվում են Հիսուսի հետ մեր փոխհարաբերության երեք մակարդակները: Աղյուսակը Ուսանողի ձեռնարկի
40-րդ էջում է:

Հիսուսի հետ անձնական փոխհարաբերությունների երեք փուլերը

Համարներ	Հիսուսի դերը կամ մասը այս փոխհարաբերության մեջ	Հիսուսի քայլը	Շփման կետը	Իմ դերը կամ մասը այս փոխհարաբերության մեջ	Իմ քայլը
Ա Հովհաննես 1:9 Ա Հովհաննես 2:1-2 Գործք. 4:12	Փրկիչ	Նա վճարեց իմ մեղքերի համար: Նա ներում է իմ մեղքերը:	Իմ մեղքը	Մեղավոր	Խոստովանեմ իմ մեղքերը: Կյանքս հանձնեմ Հիսուսին:
Ա Հովհաննես 2:3 Ա Պետրոս 2:21 Հովհաննես 16:13 Ա Կորն. 6:19-20	Տեր Ծառա Առաջնորդ	Առաջնորդում է ինձ: Ուսուցիչ: Նրա կյանքն Աստվածաշնչում կատարյալ օրինակ է:	Աստծո օրենքներն ու ուսուցումներն իմ վարքի վերաբերյալ:	Հետևորդ Ծառա Ստրուկ	Իմանալ Նրա օրենքները: Հնազանդվել Նրա օրենքներին: Իմանալ Նրա կամքը: Անել Նրա կամքը:
Հովհաննես 15:12-14 Ա Հովհաննես 15:15	Ընկեր	Սիրում է ինձ: Ազատ շփում:	Իմ օրվա յուրաքանչյուր քայլ:	Ընկեր	Սիրեմ Նրան: Ազատ շփում:

Աղբյուրը՝ Ուսանողի ձեռնարկ, 40-րդ էջ:

Մեջտեղի սյունակը նկարագրում է շփման կետերը, որ մենք ունենում ենք Հիսուսի հետ յուրաքանչյուր փուլում: Դու կարող ես այդ գաղափարն ընդարձակել՝ ներկայացնելով հետևյալ տեղեկությունը:

Հիսուսն աղոթեց Հովհաննես 17:20-21-ում. «Սակայն ոչ միայն սրանց համար եմ աղոթում, այլ նաև նրանց համար, ովքեր պիտի հավատան Ինձ սրանց խոսքի միջոցով, (21) որպեսզի ամենքը մեկ լինեն՝ ինչպես Դու, Հա՛յր, Իմ մեջ ես և Ես՝ Քո մեջ, որ նրանք նույնպես մեկ լինեն Մեր մեջ, որ աշխարհը հավատա, թե Դու Ինձ ուղարկեցիր»: Հովհաննես 17-րդ գլխի աղոթքի շարունակությունն այս թեմայի շարունակությունն է: Հիսուսն ուզում է, որ մենք ունենանք նույն մեկությունը, որ Նա և Հայրն ունեն իրենց փոխհարաբերության մեջ: Սա մեր բարձրագույն նպատակն է:

6

Նվազագույն բանը, որ երկու անձնավորությունների փոխհարաբերությունների զարգացման մեջ կարող է լինել, *շփումն* է: (Գծի՛ր երկու շրջան, որոնք հազիվ հպվում են իրար):

Ինչքան երկու անձնավորությունները շատ շփվեն, այնքան կմեծանա անձնական մտերիմ փոխհարաբերություն ունենալու հավանականությունը: (Գծի՛ր երկու շրջաններ, որոնք մասամբ իրար վրա են եկած): Ինչքան նրանք շատ շփվեն, այնքան իրար ավելի լավ կճանաչեն:

Ինչքան շատ են շրջաններն իրար վրա եկած, այնքան ավելի մոտ են մեկանալուն: (Սա ներկայացրո՛ւ՝ նկարելով շրջանների համադրվող հատվածները, որտեղ դրանք ամեն անգամ ավելի շատ են իրար ծածկում, քան նախորդ համադրված պատկերում: Վերջին գծապատկերում դրանք պետք է գրեթե համընկնեն միմյանց հետ):

Ինչքան դու մոտ ես որևէ անձնավորության հետ «մեկանալուն», այնքան խորն է քո անձնական փոխհարաբերությունը այդ անձնավորության հետ: Մեկանալու ընթացքը չի նշանակում, որ նրանցից մեկը կորցնում է իր ինքնությունը: Երկու անձնավորություններն էլ շարունակում են մնալ առանձին և ունենալ իրենց ինքնությունը: Սակայն նրանք կյանքի ճանապարհին անցնում են միասին՝ ունենալով նմանատիպ նպատակներ, նմանատիպ արժեքներ, նմանատիպ առաջնայնություններ և նմանատիպ հետաքրքրություններ: Նրանք, իրո՛ք, ավելի են ճանաչում մեկը մյուսին, քանի որ բաց են միմյանց հետ իրենց փոխհարաբերության մեջ: Ներկայացրո՛ւ այստեղ Կողոսացիներին 3:14-ը և նշի՛ր, որ սերն է ապահովում այդ հարկ եղած օգնությունը, որպեսզի մեկանանք Հիսուսի հետ:

Վերադարձի՛ր աղյուսակին (Ուսանողի ձեռնարկ, 40-րդ էջ)՝ նկարագրելու համար Հիսուսի հետ մեր փոխհարաբերության երեք փուլերը: Մի բո՛ւրգ գծիր աղյուսակի վերևից մինչև ներքև: Երբ մենք նոր ենք սկսում ճանաչել Հիսուսին, դա նման է բուրգի գագաթին: Ինչքան մեր սերն ավելի է խորանում, մեր փոխհարաբերությունն ավելի շատ տեղ է զբաղեցնում մեր կյանքում: Ամենուրեք տարածված մեր սերը մեզ կարողություն է տալիս ավելի խոր անձնական փոխհարաբերություն ունենալ Հիսուսի հետ:

7. Հիսուսի հետ անձնական փոխհարաբերություն զարգացնելու հիմնական քայլերը (5-15 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 44-47-րդ էջեր:

Եթե դու սա խորապես քննարկել ես անցած դասաժամին, ուրեմն համառոտ վերանայի՛ր այս չորս կետերը Ուսանողի ձեռնարկի 44-47-րդ էջերից: Իսկ եթե դու այս մասին նախկին դասաժամին համառոտ ես նշել, ուրեմն հիմա՛ մտիր մանրամասնությունների մեջ: Տե՛ս 70-72-րդ էջերում գտնվող՝ ուսուցչի դասի ծրագրի 14-18-րդ կետերը, որոնք վերաբերում են 5-րդ դասին:

8. **Օրինակներ Քրիստոսի կյանքից**
(10-20 բոպե), Ուսանողի ձեռնարկ, 44-47-րդ էջեր:

Այս բոլոր գաղափարները գործնական մակարդակի բերելու համար դու կարող ես անդրադառնալ այն տարբեր անձնական փոխհարաբերություններին, որոնք Հիսուսն ունեցավ տարբեր մարդկանց հետ Նոր Կտակարանում: Հատկապես կենտրոնացի՛ր Ուսանողի ձեռնարկի 44-47-րդ էջերում քննարկվող այն չորս հիմնական քայլերի վրա, որոնք պահանջվում են Հիսուսի հետ անձնական փոխհարաբերություն զարգացնելու համար:

9. **Ինչպե՞ս է Աստվածաշունչը նկարագրում մեր փոխհարաբերությունն Աստծո հետ** (5-15 բոպե):

Քննարկի՛ր Աստվածաշնչում օգտագործված պատկերներից մի քանիսը՝ նկարագրելու համար մեր անձնական փոխհարաբերությունն Աստծո հետ: Ազա՛տ զգա Աստվածաշնչից այլ համարներ և պատկերներ օգտագործելու առումով:

1. Հայր և որդի. Հովհաննես 1:12, Եբրայեցիներին 12-րդ գլ.:

2. Հովիվ և ոչխար. Հովհաննես 10-րդ գլ.:

3. Փեսա և հարս. Մատթեոս 25-րդ գլ.:

4. Հավ և ձագեր. Մատթեոս 23:37-39:

Տե՛ս Ուսանողի ձեռնարկի 39-րդ էջն այս թեմայի վերաբերյալ ավելի շատ տեղեկություններ ստանալու համար. կետ 3-րդ. «**Աստված ուզում է քեզ հետ առանձնահատուկ, բայց ոչ թե հավասար ընկերություն ունենալ**»: Եթե դու 5-րդ դասի ժամանակ մանրամասն քննարկել ես այս կետը (տե՛ս 10-րդ կետը 55-րդ էջում), ապա կարող ես շրջանցել այն կամ էլ համառոտ վերանայել:

10. **Քննարկի՛ր Եփեսացիներին 3:14-21-ը** (5-10 բոպե):

Եփեսացիներին 3:14-21-ը մի քանի հիասքանչ ճշմարտություններ է պարունակում Աստծո հետ մեր փոխհարաբերության մասին: Ուսուցման ուղեցույց, Նախագիծ ութերորդը՝ «**Հիսուսի հետ անձնական փոխհարաբերություններ զարգացնել**», ուսանողներին խնդրում է գրել մտքեր, թե ինչպես կարող են ավելի խորը փոխհարաբերություն զարգացնել Հիսուսի հետ: Թող նրանք իրենց պատասխաններով կիսվեն դասարանի հետ: Դու կարող ես նրանց մտքերը գրել գրատախտակի վրա կամ ցուցադրել պրոյեկտորի միջոցով:

6

11. Ժամանակակից և պատմական մարդկանց օրինակներ, ովքեր Հիսուսի հետ մտերիմ անձնական փոխհարաբերություններ են զարգացրել (5-15 րոպե):

Եթե ժամանակ ունես, ապա կարող ես դասարանի հետ քննարկել մի քանի պատմական դեմքերի և ժամանակակից մարդկանց օրինակներ, ովքեր Հիսուսի հետ մտերիմ անձնական փոխհարաբերություններ են զարգացրել: Դու կարող ես հարցազրույց անցկացնել ձեր տարածքի ավելի հին հավատացյալների հետ և հարցնել, թե ինչպես են իրենք Հիսուսի հետ անձնական փոխհարաբերություններ զարգացրել: Որոշ օրինակներով կիսվի՛ր դասարանի հետ: Դու կարող ես նաև ձայնագրել այդ հարցազրույցները, որպեսզի կարողանաս դրանցից որոշ հատվածներ ներկայացնել դասարանում:

12. Հաշվետվություններ 9-րդ և 10-րդ նախագծերի վերաբերյալ (5-15 րոպե):

Եթե քո ուսանողները բավականաչափ ժամանակ են ունեցել, որպեսզի աշխատեն Ուսուցման ուղեցույցի 9-րդ և 10-րդ նախագծերի վրա, ապա թող նրանցից մի քանի հոգի կիսվեն իրենց աշխատանքով: Իսկ եթե նրանք դրա համար ժամանակ չեն ունեցել, ապա դու կարող ես կիսվել այս նախագծերի մի քանի օրինակներով՝ նախկին դասերից, երբ ուսուցանել ես այդ դասընթացը: Եթե դու առաջին անգամ ես ուսուցանում սույն դասընթացը, ապա կարող ես այս նախագծերի վերաբերյալ նրանց աշխատանքի պատճենները պահպանել, որպեսզի օգտագործես այդ օրինակները՝ հաջորդ անգամ դասընթացն ուսուցանելիս:

13. Սիրո գործնական արտահայտություն Ա Կորնթացիներին 13:1-8 հատվածից (5-15 րոպե):

Մեր սերն Աստծո հանդեպ արտահայտելու համար գործնական ձևեր գտնելը հաճախ շատ դժվար է: Սիրո հատկանիշների փունջը, որը տրված է Ա Կորնթացիներին 13:1-8 հատվածում, հրաշալի մեկնարկային կետ է նրանց համար, ովքեր ուզում են գտնել գործնական ձևեր իրենց սերն Աստծուն ցույց տալու համար: Ժամանակին նայելով՝ անցի՛ր սիրո բոլոր հատկանիշներով և քննարկի՛ր, թե ինչպես կարող ենք դրանք արտահայտել Աստծո հանդեպ:

Չորրորդ համարն ասում է՝ «սերը համբերող է»: Ի՞նչ ձևով մենք կարող ենք համբերություն ցույց տալ Աստծո հետ մեր փոխհարաբերության մեջ: Միգուցե ոմանք Աստծուց հրաշք են խնդրում իրենց կյանքում: Աստծո հանդեպ համբերություն ցույց տալը սիրո դրսևորում է: Ամեն անգամ, երբ դու համբերություն ես ցուցաբերում քո առօրյա կյանքում, դա կարող է դիտվել նաև որպես սիրո արտահայտություն Աստծո հանդեպ:

Եթե մենք համբերատար ենք, և մեր դրդապատճառն է՝ ցույց տալ Աստծուն, թե որքան ենք Նրան սիրում, Նա կտեսնի մեր սիրո քայլը: Հիսուսը Մատթեոսի 10:40-42-ում ասում է, որ եթե մենք մի բաժակ սառը ջուր տանք Իր անունով, Նա կտեսնի դա:

Ա Հովհաննես գրքում կան երկու օրինակներ, որոնք շատ հարմար են այստեղ: Ա Հովհաննես 2:3-11-ը խոսում է Աստծո հետ սիրո փոխհարաբերություն ունենալու և եղբորն ատելու մասին:
Ա Հովհաննես 2:15-ը խոսում է կամ Աստծուն սիրելու, կամ աշխարհը սիրելու մասին, այլ ոչ թե երկուսը միասին: Դու կարող ես նաև քննարկել, թե ինչպես է Աստծո օրենքներին հնազանդվելն արտահայտում Նրա հանդեպ մեր սերը:

14. Անցկացրո՛ւ Ե. կետը. «Որո՞նք են Աստծուն անձամբ ճանաչելու արդյունքները» (5-10 բոպե), Ուսանողի ձեռնարկ, 47-48-րդ էջեր:

Քննարկի՛ր Աստծուն անձամբ ճանաչելու արդյունքները: Ի՞նչ ազդեցություն կունանա այդ ընկերությունը քո ամենօրյա կյանքի վրա:

15. Անձնական կիրառություն (5 բոպե):

Բոլոր տեսակի փոխհարաբերությունները կարող են օգտվել պարբերական դադարներից՝ խորհելու և գնահատելու համար: Ամուսինը կարող է կանգ առնել և ինքն իրեն հարցնել, թե արդյո՞ք ամեն բան կարգին է իր ընտանիքում: Կինը՝ նույնպես: Մենք կարիք ունենք նույնն անելու Հիսուսի հետ մեր փոխհարաբերության հարցում: Մենք ժամանակ առ ժամանակ պետք է կանգ առնենք ու ինքներս մեզ հարցնենք, թե արդյո՞ք ամեն բան այնպես է, ինչպես պետք է լիներ:

Թող ուսանողները հիմա ժամանակ հատկացնեն՝ խորհելու համար Հիսուսի հետ իրենց փոխհարաբերության մասին: Ընտրի՛ր հետևյալ գործողություններից մեկը՝ դասը եզրափակելու համար:

Ա. Ինքնաքննություն խճանկարի կամ բանաստեղծության միջոցով:
Օգտագործի՛ր այս հարցերը՝ Հիսուսի հետ քո անձնական փոխհարաբերությունը գնահատելու համար: Հարցերը ցուցադրի՛ր պրոյեկտորի միջոցով, կամ նախօրոք թերթիկների վրա գրիր՝ ուսանողներին բաժանելու համար:

1. Հիսուսի հետ իմ փոխհարաբերությունն աճո՞ւմ է:
2. Հիսուսն ինձ շատ հեռո՞ւ է թվում, կարծես իմ աշխարհից չլինի՞:
3. Ես իրո՞ք սիրում եմ Հիսուսին: Որքա՞ն:
4. Փորձո՞ւմ եմ ես ավելի շատ սիրել Նրան:
5. Ի՞նչ կարող եմ ես անել՝ Հիսուսի հետ իմ փոխհարաբերությունը խորացնելու համար:

6

Մի քանի րոպե անց (ինչքան որ դու հարմար կգտնես դրանց վրա մտածելու համար) թող ուսանողներն ընտրեն հետևյալ գործողություններից մեկը.

1. Կազմի՛ր խճանկար այն նկարներով, այն առարկաներով կամ բառերով, որոնք արտահայտում են, թե ինչ ես դու զգում Հիսուսի հետ քո փոխհարաբերության վերաբերյալ:

2. Գրի՛ր բանաստեղծություն, որը կարտահայտի, թե ինչ ես զգում Հիսուսի հետ քո փոխհարաբերության վերաբերյալ:

Բ. Գնահատել սեփական լարված կետերը:

Թող քո ուսանողները գտնեն այն ասպարեզները, որտեղ նրանք լարվածություն, բարկություն կամ սրտնեղություն են զգում: Կարիք չկա, որ նրանք այդ մասին ասեն դասարանին: Թող խորհեն, թե ինչպես կարող են այդ իրավիճակները իրենց համար հնարավորություններ լինել՝ ավելի մոտենալու Աստծուն:

6

Թող նրանք գրեն մի ձև, որով կկարողանան իրենց սերն արտահայտել Աստծո հանդեպ այդ դժվարին իրավիճակում: Միգուցե սկզբում դու ցանկանաս դա ներկայացնել քո կյանքից:

Դասն ավարտի՛ր նվիրման և որոշման աղոթքով՝ Հիսուսի հետ ավելի մտերիմ փոխհարաբերություն զարգացնելու նպատակով:

16. Հանձնարարություններ:

1. Գնահատակա՛ն դիր Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 8-րդի համար այսօր, եթե անցած դասից հետո դեռ չես գնահատել:

2. Ստուգի՛ր, թե ինչ ընթացքի մեջ է Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 5-րդը. «**Գրի՛ր քո պատմությունը**»: Համոզվի՛ր, որ նրանք դա չեն թողել, որ անեն հանձնելուց մեկ օր առաջ:

17. Դասի գնահատում:

Խնդրում եմ՝ գրի՛ր մտքեր այս դասի բարելավման համար:
Ո՞ր հատվածներն էին լավագույնս աշխատում:
Ո՞ր մասերն էին ուսանողների համար դժվարհասկանալի:
Ի՞նչն ամենաօգտակարը թվաց քո ուսանողներին:

Դաս 7.
Կասկածների պատճառները

1. **Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն:**

Ես կարիք ունեմ բացահայտելու, թե ինչ է տեղի ունենում իմ կյանքում, որը պատճառ է հանդիսանում, որ ես կասկածեմ իմ՝ ճշմարիտ քրիստոնյա լինելու մեջ:

2. **Բանալի համար. Հակոբոս 1:5-6.**

«Եթե ձեզնից մեկն իմաստության պակասություն ունենա, թող խնդրի Աստծուց, որը բոլորին տալիս է առատորեն և չի հանդիմանում, ու նրան կտրվի: (6) Միայն թե թող հավատով խնդրի, առանց երկմտելու, քանի որ երկմտողը նման է հողմակոծ, տարուբերվող ալիքներին»:

3. **Հղում ուսանողական նյութերին:**

Ուսանողի ձեռնարկի 4-րդ գլուխը համընթաց է այս դասի հետ: Ուսուցման ուղեցույցի Նախագիծ 11-րդը՝ «Կասկածներ», նույնպես կօգտագործվի այս դասին:

7

4. **Ուսուցչի նախապատրաստություն:**

Այս դասընթացի չորրորդ գլուխը վերաբերում է կասկածներին: Կախված այն բանից, թե ինչքան ժամանակ դու ունես, և նաև ուսանողների հետաքրքրվածությունից, դու պետք է որոշես՝ արդյոք երկո՞ւ, թե՞ երեք դասաժամ անցկացնես կասկածների համար: Ստորև ներկայացված են երեք դասի ծրագրեր:

Դաս 7-րդը վերաբերում է կասկածների պատճառներին:

Դաս 8-րդն առաջարկում է, թե ինչպես լուծել խնդիրները, որոնք պատճառ են հանդիսանում կասկածների համար: Հիսուսի աշակերտ Թովմասի փորձառությունը կազմում է այս դասի կորիզը:

Դաս 9-րդը լրացուցիչ ուսուցում է տալիս, թե ինչպես ազատվենք կասկածներից և քրիստոնյայի կյանքի վրա դրանց ազդեցությունից:

5. Դասի ջերմացում. Գնահատել սեփական կասկածներն ու հարցերը (5-10 րոպե):

Օգտագործի՛ր ***Գնահատել սեփական կասկածներն ու հարցերը*** հարցաշարը այսօրվա դասաժամը սկսելու համար: Դու այս հարցաշարի օրինակը կգտնես ներքևում: Պատճենահանի՛ր գնահատման այս գործողությունը և բաժանի՛ր յուրաքանչյուր ուսանողի: Նրանց 3-5 րոպե տուր՝ իրենք իրենց գնահատելու համար: Մատնանշի՛ր, որ ցուցումների մեջ չի պահանջվում միավոր դնել, թե ինչ են զգում այս ասպարեզների վերաբերյալ այսօր: Նրանք պետք է միավոր դնեն, եթե այս ասպարեզներում ունեցել են (անցյալում, կամ ներկայում) կասկածներ կամ հարցեր:

Իրենք իրենց միավոր դնելուց հետո դու կարող ես կարծիքներ լսել մի քանի տարբեր ձևերով: Ձևերից մեկն է՝ ցուցակով անցնել և խնդրել, որ ձեռք բարձրացնեն հնարավոր պատասխաններից յուրաքանչյուրի համար: Մեկ այլ մոտեցում է՝ խնդրել յուրաքանչյուր ուսանողի, որ նշի մի քանի ասպարեզներ, որտեղ նա «շատ» կասկածներ կամ հարցեր է ունեցել: Երբ քո բոլոր ուսանողները կատարեն այս գործողությունը, հնարավորությո՛ւն տուր, որ ամեն մեկը նշի մեկ կամ երկու ասպարեզ (եթե ավելին ունեն), որտեղ նրանք «գրեթե չեն ունեցել» որևէ կասկած կամ հարց:

Այս կետում ներկայացրո՛ւ դասընթացի 4-րդ գլուխը: Բացատրի՛ր, թե ինչ թեմաներ ես դու այս դասին անցնելու և թե ինչ ես անցնելու հաջորդ մեկ կամ երկու դասաժամերին: Սա պետք է նրանց օգնի, որ հասկանան, թե ինչպես ես դու անցկացնելու այս թեմաները:

Գնահատել սեփական կասկածներն ու հարցերը:

Սա ինքնագնահատման թերթիկ է: Հարցերին պետք է անձնական պատասխաններ տրվեն: Չկան «ճիշտ» կամ «սխալ» պատասխաններ: Քեզնից չի պահանջվում սա հետ վերադարձնել քո ուսուցչին:

Կարդա՛ յուրաքանչյուր նախադասությունը, իսկ հետո գնահատի՛ր ինքդ քեզ այս նախադասությամբ. «Իմ կյանքում ես ունեցել եմ կասկածներ, հարցեր կամ անվստահություններ այս ասպարեզներում»:

Նշի՛ր այն վանդակը, որն ամենաճիշտն է բնութագրում քո փորձառությունը:

	շատ	որոշ	գրեթե ոչ
1. Որ Աստված գոյություն ունի:			
2. Որ Հիսուսն Աստված է:			
3. Որ դժոխք իրականում գոյություն ունի:			
4. Որ ես կգնամ երկինք, երբ մահանամ:			
5. Որ մեր եկեղեցին ունի բոլոր պատասխաններն իմ հոգևոր հարցերի և խնդիրների համար:			
6. Քրիստոնեությունն այսօր իրո՛ք պատասխանում է և՛ պատանիների, և՛ մեծահասակների կարիքներին:			
7. Որ Աստված գիտի, թե ով է իմ ամուսնության համար լավագույն անձնավորությունը, և ինձ ցույց կտա այդ անձնավորությանը:			
8. Որ ես ճշմարիտ քրիստոնյա եմ:			
9. Որ ես կարող եմ հնազանդվել Աստծո օրենքներին և, միևնույն ժամանակ, կյանքում լինել հաջողակ:			
10. Որ Աստված իրո՛ք հոգ է տանում իմ և իմ կարիքների համար:			
11. Որ Աստված կպատասխանի իմ աղոթքներին:			
12. Որ մեր եկեղեցու մարդիկ ճշմարիտ քրիստոնյաներ են:			
13. Որ Աստված գոհ է իմ՝ ներկայումս ապրած հոգևոր կյանքից:			
14. Այն բաները, որոնք պատճառ են դառնում, որ ես կասկածներ ունենամ:			
Ա.			
Բ.			
Գ.			

7

6. **Սահմանել «կասկած» բառը** (3-5 րոպե):

Դասի սկզբում ժամանա՛կ հատկացրու՝ քննարկելու համար, թե ինչ է նշանակում «կասկած» բառը: Թող ուսանողները կարդան իրենց պատասխանները, որոնք տվել են Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 11-րդի 2-րդ հարցին, որը նրանցից խնդրում է գրել սահմանում «կասկած» բառի համար:

Որոշ ուսանողներ, հնարավոր է, կարիք ունենան մի քանի օրինակների, որպեսզի իրականում ըմբռնեն, թե ինչի մասին ենք մենք խոսում: Այս կետում «կասկած» բառն օգտագործում ենք շատ ընդհանրական ձևով: Հիմնականում մենք նկատի ունենք ցանկացած հարց կամ անվստահություն, որ մարդը կարող է ունենալ:

7. **Գրի՛ր մի քանի կասկածների օրինակներ, որոնք նորադարձ քրիստոնյաները կարող են ունենալ** (5 րոպե):

Թող ուսանողները նշեն իրենց մի քանի կասկածների մասին, որ ունեցել են Աստծո և ճշմարիտ քրիստոնյա լինելու վերաբերյալ: Դա կարող է օգնել, որ հողում անեն դասի ջերմացման ժամանակ բարձրացված հարցերին: Նրանք կարող են կիսվել իրենց պատասխաններով, որ տվել են Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 11-րդի 5-րդ հարցին, որն է՝ ի՞նչ կասկածներ և հարցեր նրանք ունեն Աստծո, Աստվածաշնչի կամ ճշմարիտ քրիստոնյա լինելու վերաբերյալ:

7

Մենք ուզում ենք փորձել մեր ուշադրությունը կենտրոնացնել Աստծո և Նրա հետ մեր փոխհարաբերության վերաբերյալ կասկածների վրա: Բայց և այնպես, որոշ խնդիրներ, որոնք առաջին հայացքից թվում է՝ ոչ մի կապ չունեն Աստծո հետ մարդու փոխհարաբերության հետ, կարող են Աստծո և սեփական փրկության վերաբերյալ կասկածներ ունենալու ուղղակի պատճառ հանդիսանալ:

Ուշադի՛ր եղիր, որպեսզի չանտեսես ուսանողների բարձրացրած հարցերը: Սակայն նաև պատրա՛ստ եղիր քննարկելու այն թեմաները, որոնք դու ուզում ես անցնել: Հարցեր ունեցող ուսանողներին քաջալերի՛ր, որպեսզի դասից հետո հանդիպեն քեզ հետ:

Մենք նաև ուզում ենք, որ սա չվերածվի աստվածաբանական լուրջ քննարկման այն դժվարին հարցերի շուրջ, որոնք հարանվանական բաժանությունների պատճառ են դառնում: Քննարկումը պահի՛ր գործնական մակարդակի վրա, և այն շատ օգտակար կլինի բոլորի համար:

Կա իրական հնարավորություն, որ երբ անցնելու լինենք այս դասընթացի 4-րդ գլուխը, հոգևոր կեղծավորությունը կարող է ներս սողոսկել, օրինակ, հետևյալ ձևով. «Կասկածնե՞ր: Ես նման բան չունեմ: Միայն թույլ քրիստոնյաներն են նման բաներ ունենում: Ես հոգևոր եմ: Ես երբեք կասկածներ չեմ ունենում»: Թույլ մի՛ տուր քեզ, կամ որևէ ուսանողի,

որ այսպիսի վերաբերմունքով մոտենա դասին: Բոլորը չէ, որ պայքարում են կասկածների դեմ: Սակայն շատ մարդիկ են պայքարում, և մենք պետք է լուրջ վերաբերվենք այն պատվերին, որը տրված է Հուդա 1:22-ում. **«Ոմանց հանդեպ, որ կասկածում են, ողորմա՛ծ եղեք»**:

8. Ի՞նչն էր կասկածի պատճառ հանդիսացել երիտասարդ հարուստ իշխանի համար (10-15 րոպե):

Թող ուսանողները կարդան Մարկոս 10:17-22-ի պատմությունը, որը երիտասարդ և հարուստ մի իշխանի մասին է, ով եկել էր Հիսուսի մոտ: Ահա մի քանի հարցեր, որոնք դու կարող ես օգտագործել՝ աստվածաշնչյան այս օրինակը քննարկելու համար.

1. Այս մարդն ի՞նչ հարցի էր ուզում, որ Հիսուսը պատասխաներ: («Բարի՛ Վարդապետ, ի՞նչ պիտի անեմ, որ հավիտենական կյանք ժառանգեմ»):

2. Ինչպե՞ս պատասխանեց Հիսուսը հարուստի հարցին: (Նա թվարկեց 10 պատվիրաններից մի քանիսը):

3. Ի՞նչ պատասխանեց հարուստը 10 պատվիրանների վերաբերյալ: («Այդ բոլորը մանկությունից պահել եմ»):
Ակնարկ. Սակայն թվում է, թե նա կասկածներ ուներ երկինք գնալու վերաբերյալ: Մատնանշի՛ր, որ շատ քրիստոնյաներ են ունենում այսպիսի կասկածներ, ոչ թե միայն նորադարձները:

4. Ի՞նչ խնդիր մատնանշեց Հիսուսը, որ այս մարդու կյանքում կասկած էր առաջացնում: Ի՞նչ լուծում առաջարկեց Հիսուսն այս մարդուն: (Նրա խնդիրը փողն էր): Ահա Հիսուսի առաջարկած լուծումը. «Գնա՛, ինչ որ ունես ծախի՛ր և տո՛ւր աղքատներին ու երկնքում վարձ կունենաս և ե՛կ, խաչը վերցրո՛ւ և Ի՛նձ հետևիր»:

5. Ինչպե՞ս հարուստն արձագանքեց Հիսուսի տված խորհրդին: («Նա տխրեց այդ խոսքից ու վշտացած գնաց»):

Ընդգծի՛ր, որ այս մարդն անկեղծ հավատացյալ էր: Նա իմաստուն վարվեց Հիսուսի՝ հենց Աստծո մոտ գալով՝ իր հարցին պատասխան ստանալու համար: Սակայն պատմության տխուր հատվածն այն է, որ նա մերժեց Հիսուսի առաջարկած լուծումը: Այս կետում մենք ուզում ենք քննարկումը կենտրոնացնել նրա կասկածների պատճառի վրա. նրա խնդիրը փողն էր: Նա նաև մերժեց Հիսուսի առաջարկած լուծումը, որը աղքատության նոր կյանքի կոչ էր ներառում իր մեջ:

Այս պահին մենք ուզում ենք պարզաբանել այն միտքը, որ կասկածները չեն խնդիրը. դրանք հետևանքներն են կամ ախտանիշը իրական խնդրի: Երբ մի անձնավորություն կասկածներ ունի, ուրեմն ինչ-որ բան պատճառ է

7

հանդիսացել դրանց համար: Բազմաթիվ ու բազմատեսակ խնդիրներ կարող են քրիստոնյայի կյանքում պատճառ դառնալ կասկածների համար: Երիտասարդ հարուստ իշխանի կասկածները չէին գալիս պարզապես փողի պատճառով, այլ գալիս էին փողի հանդեպ նրա վերաբերմունքի:

9. **Անցկացրո՛ւ Ա. կետը. «Ո՞վ է այդ կասկածները բերում քո մտքին»** (10-15 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 50-53-րդ էջեր:

Այդ թեման հեշտությամբ կարող է շփոթություն առաջացնել, դրա համար զգուշությամբ, հստակ բացատրի՛ր և օրինա՛կ բեր յուրաքանչյուր կետի համար: Ուսանողի ձեռնարկի 50-53-րդ էջերի նյութերը լավ մեկնարկային կետ են ապահովում կասկածների տարբեր աղբյուրների համար:

Սատանա. Որպես կասկածների աղբյուր՝ առաջինը կարող ենք նշել սատանային: Նշի՛ր, որ Սուրբ Գիրքը սատանային նկարագրում է որպես խաբեբա ու մոլորեցնող: Նա իր կարողության սահմաններում ամեն բան անում է, որպեսզի հիասթափեցնի նորադարձ քրիստոնյաներին: Անդրադարձի՛ր դասի սկզբում բերված հարցաշարի թեմաներին և օրինա՛կ բեր, թե ինչպես կարող է սատանան դրանք օգտագործել՝ քո մտքում կասկածներ բերելու համար:

7

Մարդիկ. Ուսանողի ձեռնարկի 51-52-րդ էջերում նշվում են մի քանի ձևեր, որոնցով մարդիկ կարող են կասկածներ բերել քո մտքերում: Թող ուսանողներից մի քանիսը օրինակներ բերեն, թե ինչպես են իրենց կյանքում կասկածներ եկել մարդկանց պատճառով:

Ինքդ. Նշի՛ր, որ հիմնականում կասկածները մտքեր են քո գլխում: Երբմեն այս կասկածների մտքերը գալիս են ուրիշներից: Սակայն որոշ մարդիկ իրենք են իրենց համար կասկածներ ստեղծում: Նրանք հարցականի տակ են դնում Աստծուն և Նրա ճանապարհները: Խնդրի՛ր ուսանողներին, որ այս հարցի շուրջ անձնական օրինակներով կիսվեն:

Որոշ մարդիկ կասեին, որ սրանք իրականում կասկածներ են, որ գալիս են սատանայից: Միգուցե, դա երբեմն ճիշտ է: Սակայն լինում են նաև դեպքեր, երբ մարդիկ չեն ուզում հավատալ Աստծուն և Նրա Խոսքին: Նրանք իրենք են կայացնում իրենց ընտրությունը: Սա, կարծես, նման է իսրայելցիների դեպքին, երբ նրանք դուրս եկան Եգիպտոսից և գնում էին դեպի Ավետյաց երկիրը:

Սաղմոս 95:8-10.

«Մի՛ խստացրեք ձեր սրտերը, ինչպես Մերիբայում էր՝ փորձության օրն անապատում, (9) Որտեղ ձեր հայրերն Ինձ փորձեցին, քննեցին Ինձ, թեև տեսել էին Իմ գործերը:
(10) Քառասուն տարի վշտացա այս սերնդից ու ասացի. «Նրանք սրտով մոլորված ժողովուրդ են և չեն ճանաչել Իմ ճամփաները»:

10. Աստված կասկածներ բերո՞ւմ է քո մտքին
(5-15 բոպե), Ուսանողի ձեռնարկ, 52-53-րդ էջեր:

Շատ քրիստոնյաներ դժվարանում են հավատալ, որ Աստված կարող է կասկած բերել իրենց մտքերում: Երիտասարդ հարուստ իշխանի աստվածաշնչյան օրինակը, թվում է, համապատասխանում է այս դասակարգմանը, թեև Աստվածաշունչը հստակ չի ասում, որ դա այդպես է: Ուսանողի ձեռնարկը քննում է այս պատմությունը և տալիս է բացատրություններ, թե ինչո՛ւ Աստված պետք է կասկած բերի մեր մտքում:

Մի քանի առիթով Հիսուսը շատ խիստ խոսեց Իր օրերի կրոնական առաջնորդների հետ: Կարող ենք վստահ համարել, որ այդ խիստ հանդիմանությունների օգուտներից մեկը կարող էր լինել նրանց մտքերի մեջ կասկածի սերմեր ցանելը: Նա փորձում էր նրանց սթափեցնել և դուրս հանել իրենց մոլորությունից: Հիսուսը լրիվ ուրիշ միջոց էր նշում իրական հոգևորությունը չափելու համար: Ես վստահ եմ՝ Նա հույս ուներ, որ նրանք կսկսեին կասկածել իրենց ներկա մտածելակերպի հարցում:

Որոշ մարդիկ, միգուցե, ավելի ճիշտ կհամարեին Աստծո այս քայլն անվանել «Սուրբ Հոգու հանդիմանություն»: Իհա՛րկե, Նա մեզ հանդիմանում է մեղքի համար: Անպայման պարզաբանի՛ր, թե ինչ տեսակի կասկածներ կարող է Աստված բերել մարդու մտքում: Աստված մարդկանց մտքում կասկածներ չի բերի Իր գոյության վերաբերյալ: Նա կասկածներ կբերի, թե արդյո՞ք նրանք ճշմարիտ քրիստոնյաներ են: Իհա՛րկե, մեզ չի թվում, որ Աստված նման կասկած կարող է բերել անկեղծ քրիստոնյայի մտքում: Բայց եթե մարդը համոզված է, որ ինքը ճշմարիտ քրիստոնյա չէ, ուրեմն կարող է ակնկալել, որ Աստված կասկածներ կբերի: Եթե Աստված տեսնի, որ ինչ-որ մեկը ճիշտ ճանապարհի վրա չէ և գնում է դեպի կործանում, Նա կփորձի օգնել այդ անձնավորությանը, որպեսզի վերջինս տեսնի իր սխալ ընթացքը:

Ուշադի՛ր եղիր, որ այս կետի վերաբերյալ չթաղվես խորը աստվածաբանական քննարկումների մեջ: Հիմնականը, որ պետք է հասկանալ, այն է, որ ոչ բոլոր կասկածների հետևում է սատանան կանգնած: Երբ մենք դիմենք կասկածներից ազատվելու միջոցներին, անշուշտ կցանկանանք գտնել մեր միտք թափանցող կասկածների աղբյուրը: Սա կազդի նաև կասկածներից ազատվելու լուծման վրա:

11. Երեք տեսակի խնդիրներ, որոնք կասկածներ են առաջացնում (10-15 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 53-60-րդ էջեր:

Մենք ուզում ենք առավել հանգամանալից անդրադառնալ այն խնդիրներին, որոնք կասկածների տեղիք են տալիս: Դրանք կարելի է դասակարգել երեք խմբի.

1. Գիտելիքի պակաս:
2. Հասկանալու պակաս:
3. Վարվելու պակաս:

Անցի՛ր այս դասի ընթացքում քննարկված խնդիրներով և վերլուծի՛ր, թե ինչպես կարող են այս պակասությունները կասկածների պատճառ դառնալ: Որոշ խնդիրներ ներառում են այս երեք պակասությունները միասին: Վերցրո՛ւ երիտասարդ հարուստ իշխանի աստվածաշնչյան օրինակը: Նրա կասկածները, կարծում եմ, կապ ունեն գիտության պակասի հետ: Սակայն երբ Հիսուսը նրան հստակ լուծում առաջարկեց նրա խնդրի համար, հարուստ երիտասարդը վարվելու պակաս ունեցավ: Նա գիտեր լուծումը, նա հստակ հասկացավ այն, սակայն որոշեց չանել դա:

7

Կասկածների համար սովորական պատճառ են հանդիսանում փորձությունները: Երբ մարդը զիջում է մեղքի փորձությանը, սատանան գալիս է տոննանոց մեղադրանքներով ու դատապարտություններով: Կասկածները ներս են խուժում: Պատճառը վարքի խնդիրն էր: Երբ մարդը մեղք է գործում, կասկածները հաճախ ավելի ուժգին են դառնում, քան փորձության ժամանակ եկող մտքերը:

Եթե քո ուսանողները կարողանան մտածել այս երեք դասակարգումների չափանիշներով, դա նրանց կօգնի հաջորդ դասաժամին, երբ մենք կխոսենք կասկածների պատճառ հանդիսացող խնդիրների լուծման մասին: Եթե նրանք հանդիպել են մի խնդրի, որը համընկնում է գիտության պակասին, ապա այդ խնդիրը կարելի է ուղղել ճիշտ տեղեկություն տալով: Սակայն եթե դա վարքի պակաս է, ապա առատ տեղեկություններն իրավիճակն ինքնըստինքյան չեն փոխի:

12. Ինչպե՞ս կարող ես պարզել, թե ինչն է պատճառ հանդիսանում քո կասկածների համար (5-10 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 60-61-րդ էջեր:

Ուսանողի ձեռնարկը սեփական կասկածների պատճառները հայտնաբերելու համար չորս մտքեր է առաջարկում: Տե՛ս Ուսանողի ձեռնարկի 60-61-րդ էջերը:

Եթե դեռ ժամանակ ունես, անցի՛ր այս չորս ուղեցույցներով: Սա իրոք հանդիսանում է քո կասկածներից ազատվելու գործընթացի մի մասը: Եթե դու ուզում ես հաղթահարել քո կասկածները, ապա պետք է գտնես, թե որն է քո դրանց պատճառը:

13. Դերակատարում. Հովսեփի կասկածները (5-10 րոպե):

Ուսանողներին հիշեցրո՛ւ, որ կասկածներ ունենում են ինչպես նորադարձ քրիստոնյաները, այնպես էլ հին քրիստոնյաները: Հին Կտակարանում Հովսեփի կյանքի պատմությունը ներկայացնում է մի քանի դժվարին իրավիճակներ, որտեղ նա հեշտությամբ կարող էր կասկածների մեջ ընկնել Աստծո հանդեպ:

Համառոտ ամփոփի՛ր Հովսեփի կյանքի դեպքերը և բացատրի՛ր, թե ինչու էր Պետափրեսը նրան բանտ գցել (տե՛ս Ծննդոց 37-րդ և 39-րդ գլուխները): Թող երկու ուսանողներ կատարեն հետևյալ դերերը: Սա վերցված է՝ Marlene LeFever-ի Turnabout Teaching-ից (David C. Cook publishers), 13-րդ էջ, օգտագործվում է թույլտվությամբ:

Իրավիճակ. Հովսեփին անարդարացի մեղադրել են և գցել բանտ:

Դերակատարումը վերաբերում է այն վիճաբանությանը, որը կարող էր տեղի ունենալ Հովսեփի մտքում՝ բանտում անցկացրած տարիների ընթացքում: Մի ուսանող կներկայացնի Հովսեփի կասկածները, իսկ մյուսը՝ վստահությունը:

Ներկայացումը կարող է սկսվել մոտավորապես այսպես.

ԿԱՍԿԱԾ. Բայց, Աստվա՛ծ, ախր ես հետևում էի Քեզ: Դու այսպե՞ս ես վարձատրում ինձ: Ես չեմ հասկանում:

ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ. Ի՛նչ-խոսք, ես չեմ հասկանում, բայց ես հիշում եմ իմ լսած պատմությունները, թե ինչպես ես Դու առաջնորդել Աբրահամին դժվարությունների միջով: Վստահ եմ, որ նույնն ինձ համար կանես:

14. Անձնական կիրառություն (5 րոպե):

Անձնական կիրառությունը կենտրոնացրո՛ւ այն բանի վրա, որ յուրաքանչյուր ուսանող գտնի խնդիրները, որոնք իր կյանքում, հնարավոր է, կասկածներ ունենալու պատճառ են դառնում: Նրանք կարող են գրել նաև այն խնդիրները, որոնք պատճառ են հանդիսանում, որ իրենք իրենց Աստծուց հեռու զգան:

Եթե ժամանակ ունես, խնդրի՛ր ուսանողներին՝ խորհել, թե նրանք որ դասակարգի մեջ կդնեին տվյալ խնդիրը.

1. Գիտելիքի պակաս:

2. Հասկանալու պակաս:

3. Վարվելու պակաս:

15. Հանձնարարություններ:

1. Դասաժամի վերջում տո՛ւր հարցաշար Հակոբոս 1:5-6-ի վերաբերյալ:

   Հակոբոս 1:5-6.

   «Եթե ձեզանից մեկն իմաստության պակասություն ունենա, թող խնդրի Աստծուց, որ բոլորին տալիս է առատորեն և չի հանդիմանում, ու նրան կտրվի: (6) Միայն թե թող հավատով խնդրի, առանց երկմտելու, քանի որ երկմտողը նման է հողմակոծ, տարուբերվող ալիքներին»:

2. Այսօր՝ դասաժամի վերջում, գնահատակա՛ն դիր Ուսուցման ուղեցույցի 9-րդ, 10-րդ և 11-րդ նախագծերի համար:

3. Թող ուսանողները կարդան Ուսանողի ձեռնարկի 4-րդ գլուխը՝ վերանայելու համար այն թեմաները, որոնք մենք քննարկեցինք այսօր՝ հաջորդ դասաժամին նախապատրաստվելու համար:

16. Դասի գնահատում:

7

Խնդրում եմ՝ գրի՛ր մտքեր այս դասի բարելավման համար:
Ո՞ր հատվածներն էին լավագույնս աշխատում:
Ո՞ր մասերն էին ուսանողների համար դժվարհասկանալի:
Ի՞նչն ամենաօգտակարը թվաց քո ուսանողներին:

Դաս 8.
Ազատվել կասկածներից. մաս 1.

1. **Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն:**

Ես կարող եմ ազատվել ճշմարիտ քրիստոնյա լինելու իմ կասկածներից, երբ ծրագիր կազմեմ, թե ինչպես եմ հաղթահարելու այն խնդիրները, որոնք պատճառ են դառնում այդ կասկածների համար:

2. **Բանալի համար. Փիլիպպեցիներին 1:6.**

«Այս բանում վստահ լինելով, թե Նա՝ Ով ձեր մեջ սկսեց բարի գործը, այն կհասցնի իր ավարտին մինչև Հիսուս Քրիստոսի օրը»:

3. **Հղում ուսանողական նյութերին:**

Ուսանողի ձեռնարկի 4-րդ գլուխը համընթաց է այս դասի հետ:

4. **Ուսուցչի նախապատրաստություն:**

Ծրագրի՛ր, որ այսօրվա դասաժամի մեծ մասն անցկացնես քննարկելու համար աստվածաշնչյան այն մարդկանց օրինակները, ովքեր կասկածներ են ունեցել: Պարտադիր չէ, և դու հարկադրված չես քննարկել բոլոր երեք դեպքերը: Կարող ես քո ժամանակի մեծ մասն անցկացնել Թովմասի պատմության վրա և համառոտ հիշատակել մյուս պատմությունները, կամ էլ դրանք թողնել հաջորդ դասաժամի համար: Այս դասի ծրագրի երեք դեպքերն են.

Ա. Թովմասը կասկածում է, որ Հիսուսը հարություն է առել. Հովհաննես 20:19-31:

Բ. Պետրոսը կասկածում է, երբ քայլում է ջրերի վրայով. Մատթեոս 14:22-33:

Գ. Հովսեփը կասկածում է, երբ Աննան բացատրում է իր հղիության պատճառը. Մատթեոս 1:18-21:

Այս դասն անցկացնելու մեկ այլ տարբերակ է քո ուսանողներին նախօրոք հանձնարարելը, որ հաշվետվություն պատրաստեն բոլոր երեք դեպքերի վերաբերյալ և ներկայացնեն դասարանում, որոնք կվերաբերեն այն թեմաներին, որոնք դու ցանկանում ես քննարկել այս դասաժամին:

Դու կարող ես ընտրել մեկ ուսանողի, որպեսզի ներկայացնի այդ հաշվետվությունը, կամ էլ բոլոր նրանք, ովքեր աշխատել են այդ պատմության վրա, կարող են մասնակցել դասաժամի այդ հատվածում:

5. Դասի ջերմացում: Դեպքի ուսումնասիրություն (5-10 րոպե):

Տիգրանն արդեն երկու ամիս է, ինչ դարձել է ճշմարիտ քրիստոնյա: Նա ճշմարիտ քրիստոնյա է դարձել իր նախկին դասընկերոջ՝ Բագրատի շնորհիվ: Տիգրանն ու Բագրատը հիմա միասին ներգրավված են եկեղեցու փառաբանության խմբում: Բագրատը սիրում է փառաբանել և ոգևորված է, որ կարող է աճել որպես քրիստոնյա:

Բայց Տիգրանն այնքան ոգևորված չէ քրիստոնյա լինելու համար՝ ինչպես երկու ամիս առաջ էր: Աստվածաշնչյան սերտողությունն ու աղոթքը կարծես չափից ավելի շատ ժամանակ են տանում, իսկ որոշ հին սովորություններ, որոնք նա թողել էր, երբ կյանքը հանձնել էր Քրիստոսին, դեռևս գլուխ են բարձրացնում: Սա Տիգրանին ստիպում է անհանգստանալ, թե իրո՞ք նա ճշմարիտ քրիստոնյա է: Նա ընկերներից ու ընտանիքի անդամներից ոչ մեկին դեռ չի ասել իր կյանքի փոփոխության մասին: Նա վստահ է, որ իր գաղտնիքը չի բացահայտվել, որովհետև տանը ոչ մեկը դեռ չի ասել, որ նրա կյանքում որևէ փոփոխություն են տեսել:

Այս ամենը Տիգրանի մոտ դեպրեսիա է առաջացնում: Եկեղեցու խմբի բոլոր անդամները գիտեն ճշմարիտ քրիստոնյա դառնալու նրա որոշման մասին: Սակայն նա ինքն իրեն նրանցից ցածր է զգում: Նա Աստվածաշունչը նրանց նման լավ չգիտի: Չի կարողանում նրանց նման աղոթել, չի կարողանում նրանց նման Տիրոջ մասին խոսել: Տիգրանն, իրոք, կասկածներ ունի, թե արդյոք ինքը ճշմարիտ քրիստոնյա՞ է, թե՞ ոչ:

8

Քննարկման հարցեր.

1. Ի՞նչ ես կարծում, պե՞տք է, որ Տիգրանն այս մասին խոսի Բագրատի հետ:

2. Ի՞նչ պետք է ասի Բագրատը, եթե Տիգրանը գա նրա մոտ՝ իր կասկածների մասին նրա հետ խոսելու:

3. Ո՞րն է, քո կարծիքով, Տիգրանի կասկածների հիմնական պատճառը:

4. Ի՞նչ ես կարծում, ի՞նչ կլինի, եթե Տիգրանը չկարողանա հասնել իր կասկածների արմատին և փորձի հաղթահարել դրանք:

Դու կարող ես տպագրել այս դեպքի ուսումնասիրությունը չորս հարցերի հետ միասին: Տո՛ւր դա ուսանողներին, երբ գան դասարան: Թող նրանք գրեն իրենց պատասխանները՝ նախքան դու կսկսես քննարկել դեպքի ուսումնասիրությունը:

6. **Համառոտ վերանայի՛ր վերջին դասաժամը** (5 րոպե):

Համառոտ վերանայի՛ր այն հիմնական կետերը, որոնք քննարկվեցին ձեր վերջին դասաժամին:

- Ի՞նչ է կասկածը:
- Ո՞վ է կասկածներ բերում քո մտքում:
- Խնդիրը կասկածները չեն, դրանք միայն խնդրի ախտանիշներն ու հետևանքներն են:
- Երեք տեսակի խնդիրներ, որոնք կարող են պատճառ հանդիսանալ կասկածների համար.

  ա. Գիտելիքի պակաս:

  բ. Հասկանալու պակաս:

  գ. Վարվելու պակաս:

Մենք կօգտագործենք այս կենտրոնական փաստերը՝ գնահատելու համար աստվածաշնչյան դեպքերի ուսումնասիրությունները, որոնք մենք քննում ենք այսօրվա դասաժամին:

8

7. **Ներկայացնել Թովմասի պատմությունն Աստվածաշնչից** (5-10 րոպե):

Թող ուսանողները բարձրաձայն կարդան Թովմասի կասկածների մասին Հովհաննես 20:19-31-ում: Նախքան նրանք կկարդան այս պատմությունը, ասա՛ նրանց, որ տեսնեն, թե Թովմասը ինչպես հաղթահարեց իր կասկածները:

Հատվածը կարդալուց հետո հարցրո՛ւ նրանց. «Ի՞նչ տպավորություն ստացաք այս պատմությունից»:

Թող նրանք կիսվեն իրենց տպավորություններով: Նմանություն տեսնո՞ւմ են իրենց և Թովմասի ու նրա կասկածների միջև:

8. **Ո՞րն էր Թովմասի կասկածների պատճառը** (5-10 րոպե):

Հարցրո՛ւ ուսանողներին, թե ո՞րն էր, նրանց կարծիքով, Թովմասի կասկածների պատճառը: Փորձի՛ր քննարկումը բաց պահել՝ այս կետի վերաբերյալ տարբերակներ լսելու համար: Փորձի՛ր ուսանողներին օգնել, որպեսզի մակերեսից ավելի խորը մտածեն: Թովմասն ասաց՝ քանի որ ինքը հարություն առած Հիսուսին անձամբ չէր տեսել, կասկածում էր, որ Նա կենդանի է: Բայց արդյոք դա՞ էր իրական պատճառը: Կա՞ր ավելի խորը

խնդիր Թովմասի կյանքում: Հնարավոր է՝ Թովմասն այստեղ արտահայտում է մարդկանց և նրանց ասածներին չվստահելու իր ներքին խնդիրը:

Հարցրո՛ւ քո ուսանողներին, թե նրանց կարծիքով ի՞նչ խնդիր ուներ Թովմասը.

ա. Գիտելիքի պակաս:

բ. Հասկանալու պակաս:

գ. Վարվելու պակաս:

Թող նրանք բացատրեն, թե ինչու են մտածում, որ Թովմասը տվյալ խնդիրն ուներ: Նա իր կասկածը հեռացնելու համար որոշակի գիտելիքի պակաս ուներ. ականատեսի գիտելիքի: Եթե տեսներ Հիսուսի ձեռքի նշաններն ու շոշափեր կողքի սպին, կհավատար:

Ավելի խորը զննելով՝ կարելի է ասել, որ նրա խնդիրը վստահության պակասն էր: Սա ավելի շատ վարքի խնդիր է: Դու քո վարքով ես ցույց տալիս, որ դիմացինին վստահում ես: Թովմասը սա կարող էր անել՝ հավատալով այն բանին, ինչն իրեն ասացին մյուս աշակերտները, որոնք արդեն տեսել էին Հիսուսին:

8

9. Ո՞րն էր Թովմասի կասկածների լուծումը
(10-15 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 62-63-րդ էջեր:

Խնդրի՛ր ուսանողներին բացահայտել, թե Թովմասի կարծիքով ինչը կփարատեր նրա կասկածները: Այս լուծումը քննարկելուց հետո ժամանա՛կ հատկացրու, որպեսզի ներկայացնես հինգ քայլից բաղկացած ծրագիրը, որն է՝ ինչպես ազատվել կասկածներից:

Կասկածներից ազատվելու ծրագրի բոլոր հինգ քայլերն անցնելուց հետո գնահատի՛ր Թովմասի գործողությունները՝ տեսնելու համար, թե այս քայլերից որոնք նա օգտագործեց: Հստակ է, որ նա հետևեց առաջին քայլին: Սուրբ Գիրքը չի ասում, թե արդյո՞ք նա օգտագործեց 2-րդ, 3-րդ կամ 4-րդ քայլերը: Նա, իրոք, ծրագիր ուներ իր կասկածներից ազատվելու համար (քայլ 5-րդ): Սակայն արդյո՞ք սա կասկածներից ազատվելու Աստծո ճանապարհն է: Մենք սրա պատասխանը կտեսնենք, երբ քննարկենք այն հարցերը, որոնք բարձրացված են դասի ծրագրի 10-րդ և 11-րդ կետերում:

Լավ կլինի նաև նշել, որ Թովմասը Հիսուսին էր նայում, որ Նա օգներ իրեն՝ կասկածները փարատելու հարցում: Մենք կարիք ունենք նույնն անելու: Վերադառնալով կասկածների պատճառ հանդիսացող երեք տեսակի խնդիրներին՝ ասենք. Թովմասի լուծումը լավ է այն իմաստով, որ նա կարիք ուներ այն տեղեկության, որն իրեն պակասում էր: Բայց և այնպես, այս լուծումը, ինքնըստինքյան, չէր լուծի մարդկանց չվստահելու նրա ներքին խնդիրը:

Թովմասը չի ընդունում, որ ինքը մարդկանց չվստահելու խնդիր ունի: Եթե մարդը հրաժարվում է ընդունել, որ ունի տվյալ խնդիրը, կարող ենք վստահ լինել, որ ապագայում այդ խնդիրը նորից գլուխ կբարձրացնի: Քննարկի՛ր, թե ինչ տեսակի փոփոխություններ Թովմասը պետք է կատարեր, եթե ցանկանար մյուս քրիստոնյաների հանդեպ ավելի վստահող վերաբերմունք զարգացնել:

10. Ինչպե՞ս Հիսուսն օգնեց Թովմասին՝ ազատվել իր կասկածներից (5-10 բոպե):

Խնդրի՛ր ուսանողներին՝ քննարկել այս հարցերին տված իրենց պատասխանները: Խնդրի՛ր նրանց, եթե հնարավոր է, իրենց պատասխանները հիմնավորել Սուրբ Գրքով:

1. Ինչպե՞ս Հիսուսն օգնեց Թովմասին՝ փարատել իր կասկածները:
2. Արդյո՞ք Հիսուսը վարվեց կասկածներից ազատվելու՝ Թովմասի ծրագրի համեմատ:
3. Ինչպե՞ս արձագանքեց Թովմասը Հիսուսին:
4. Ի՞նչ է մեզ հուշում Թովմասի արձագանքը կասկածներից ազատվելու նրա անկեղծության վերաբերյալ:

Թովմասը Նոր Կտակարանում առաջին անձնավորությունն է, ով Հիսուսին հստակ անվանեց «Աստված»: Թովմասը դա արեց շատ անձնական շեշտադրումով. «Իմ Տե՛ր և իմ Աստվա՛ծ»: Նա պայքար չուներ այն հարցում, թե արդյոք պե՞տք է ծառայել Աստծուն, թե՞ ոչ: Նրա կասկածները վերաբերում էին այն հարցին, թե արդյո՞ք Հիսուսը կենդանի էր:

11. Հիսուսի տեսակետից ի՞նչն էր պատճառ հանդիսանում Թովմասի կասկածների համար (5-10 բոպե):

Մենք տեսանք, որ Հիսուսը շատ էր ցանկանում օգնել Թովմասին, որպեսզի փարատի նրա կասկածները: Հիմա եկե՛ք տեսնենք, թե ըստ Հիսուսի, ինչը կարող էր լինել Թովմասի կասկածների պատճառը: Նկատե՛ք, որ Հիսուսը ոչ մի խիստ հանդիմանություն չարեց Թովմասին՝ նրա կասկածելու առումով: Սակայն Հովհաննես 20:29-ում Հիսուսը մեղմությամբ փորձում է հասնել Թովմասի կյանքի ավելի խորը մի խնդրի: Շատ դրական ձևով Հիսուսը մատնանշում է, որ ավելի լավ է հավատալ առանց ֆիզիկական ապացույցն անընդհատ աչքի առաջ ունենալու: Հիսուսը չի ասում, որ Թովմասը սխալ էր, երբ ֆիզիկական ապացույց էր ուզում: Հիսուսը պատրաստակամ է այդ ապացույցը տալու հարցում:

Սակայն հավատի կյանքը մեզնից՝ որպես հավատացյալից, պահանջում է հավատալ՝ ոչ միշտ աչքի առաջ ունենալով ֆիզիկական ապացույցը: Ի՞նչ կլիներ, եթե յուրաքանչյուր քրիստոնյա այսօր պահանջեր նույն ապացույցը,

8

ինչ Թովմասը պահանջեց: Պատրաստ կլինե՞ր Հիսուսն անձնապես հայտնվել բոլոր նորադարձ քրիստոնյաներին, որպեսզի նրանք կարողանային շոշափել Նրա ձեռքերի և կողքի սպիները:

Քրիստոնեական կյանքը պահանջում է, որ մենք սովորենք վստահել Աստծուն և վստահել մյուս քրիստոնյաներին: Թովմասի վստահության պակասը, թվում է, ավելի խորը մի խնդիր էր, որ Հիսուսն ուզում էր, որ նա լուծի: Լավ կլիներ նկատել, որ Թովմասը միակ աշակերտը չէր, ով կասկածում էր Հիսուսի հարության վերաբերյալ աշակերտների ասածին:

Կարդացե՛ք Ղուկաս 24:9-10-ը, որը ցույց է տալիս, որ սկզբում բոլոր աշակերտներն էլ կասկածեցին: Նույնիսկ երբ երկու տղամարդիկ, Էմմաուսից վերադառնալով, նրանց պատմեցին Հիսուսի հետ իրենց հանդիպման մասին, աշակերտները դեռ կասկածում էին: Միայն այն բանից հետո, երբ Հիսուսը հայտնվեց նրանց և հանդարտեցրեց նրանց վախերը, նրանք հավատացին, որ Նա ողջ է: Տե՛ս Ղուկաս 24:36-43:

12. **Դեպքի ուսումնասիրություն. Հիսուսը և Պետրոսը ջրերի վրայով քայլելիս** (5-20 բոպե):

Պետրոսի կյանքի կասկածները քննարկելու համար մենք կօգտագործենք հարցերի նույն շարանը, որն օգտագործեցինք Թովմասի կասկածների համար: Թող ուսանողները պարզեն, թե որն էր կասկածների առաջացման խնդիրը, որոնք էին կասկածների հետևանքները, և թե ինչպես Հիսուսն օգնեց Պետրոսին՝ ազատվել իր կասկածներից:

8

1. Կարդացե՛ք Մատթեոս 14:22-33:
2. Ի՞նչն է այս պատմության մեջ քեզ վրա տպավորություն թողնում:
3. Ո՞րն էր Պետրոսի կասկածների պատճառը:
4. Ո՞վ էր այդ կասկածները բերում նրա միտք (ինքը):
5. Որո՞նք էին Պետրոսի կասկածների հետևանքները:
   - անմիջական հետևանքները
   - Քո կարծիքով ի՞նչ էր զգում Պետրոսը, երբ վերադարձավ նավակի մեջ և պետք է նայեր մյուս աշակերտների աչքերին:
6. Ի՞նչ արեց Պետրոսն իր կասկածներից ազատվելու համար:

(Նրա առաջնային խնդիրն իր կասկածների հարցը լուծելն էր. նա վախենում էր, որ կխեղդվեր, եթե Հիսուսն իրեն չօգներ: Ավելի ուշ նա այդ կասկածներն առաջացնող խնդիրները, որոնք են վախը, անհավատությունը և թերահավատությունը, լուծելու հնարավորություն կունենար):

7. Ի՞նչ արեց Հիսուսը, որպեսզի օգնի Պետրոսին:

Օգնե՞ց դա Պետրոսին՝ ազատվել իր կասկածներից, թե՞ դա միայն օգնություն էր, որպեսզի լուծի կասկածների հետևանքները:

Ճիշտ՝ ինչպես Հիսուսը խոսեց Թովմասի հետ, այնպես էլ Նա Պետրոսին հստակ խորհուրդ տվեց մեղմ, բայց հաստատուն ձևով: Նա խստորեն չհանդիմանեց նրան, այլ ընդամենը մի կարճ արտահայտություն, թե ինչպես կարելի է ավելի լավ հաղթահարել դժվարին իրավիճակները:
Տե՛ս Մատթեոս 14:31-ը:

13. Հովսեփի կասկածները Աննայի հղիության վերաբերյալ (5-15 բոպե):

Մատթեոս 1:18-25 հատվածը չի պնդում, որ Հովսեփը կասկածներ ունեցավ Աննայի հետ տեղի ունեցածի վերաբերյալ: Սակայն նրա քայլերը պարզ են դարձնում, որ նա չհավատաց Աննայի պատմածին, այն, թե ինչպես էր հղիացել: Հովսեփը ծրագրել էր չեղարկել իրենց ամուսնությունը, քանի որ գիտեր, որ ինքը կապ չունի այդ հղիության հետ:

Սուրբ Գիրքը չի ասում, թե արդյոք նա պայքարներ ունեցե՞լ էր կասկածների հետ: Սակայն Աստված լուծում տվեց նրա կասկածներին և հստակ ասաց, թե ինչ պետք է անի: Հովսեփն, իհա՛րկե, կարող էր պատճառներ գտնել երազը կասկածի տակ դնելու համար: Նմանատիպ իրավիճակում, երբ հրեշտակը հայտնվեց Զաքարիային՝ հայտարարելով, որ նրա կինը զավակ պետք է ունենա, որի անունը պետք է Հովհաննես դնեին, Զաքարիան կասկածեց հրեշտակի ասածին, և հրեշտակը նրան մի «նշան» տվեց այն առումով, որ պատգամն իրոք Աստծուց էր. մինչև Հովհաննես Մկրտչի ծնվելը նա չէր կարողանում խոսել:

Հովսեփը գիտության պակաս ուներ: Եթե Աննան փորձեր բացատրել նրան, թե ինչպես է ինքը հղիացել, այդ դեպքում շատ հեշտ է հասկանալ, թե ինչու Հովսեփը կդժվարանար հավատալ նրան: Աստված հարկ եղած տեղեկությունը Հովսեփին տվեց երազում: Հովսեփը պատրաստակամորեն ընդունեց Աստծուց տրված այդ անհրաժեշտ տեղեկությունը, և նրա քայլերն ապացուցում են դա: Հարցի լուծումը շատ հասարակ էր. Աստված նրան տվեց հարկ եղած տեղեկությունը: Հովսեփի վարքը ցույց է տալիս, որ նա արագ արձագանքեց այս նոր տեղեկությանը:

Ահա մի քանի հարցեր, որոնք դու կարող ես օգտագործել՝ Հովսեփի և Աննայի կյանքում տեղի ունեցած այս դեպքը քննարկելու նպատակով:

1. Ի՞նչն է քեզ վրա տպավորություն թողնում այս պատմության մեջ:
2. Ի՞նչը պատճառ հանդիսացավ, որ Հովսեփը կասկածեր Աննայի բացատրությանը: Պատկերացրո՛ւ քեզ Հովսեփի փոխարեն: Կհավատայի՞ր դու քո նշանածին, եթե նա ասեր, որ հղիությունն Աստծուց է:

8

3. Ի՞նչ քայլեր որոշեց անել Հովսեփը, որոնք ցույց էին տալիս, որ նա չհավատաց հղիության վերաբերյալ Աննայի բացատրություններին:

4. Ինչպե՞ս օգնեց Աստված Հովսեփին՝ փարատելու համար նրա կասկածները:

5. Ինչպե՞ս արձագանքեց Հովսեփն այդ երազին: Նրա արձագանքը ցույց տալի՞ս է, որ նա դեռևս կասկածներ ունի:

14. Ինչպե՞ս է Աստված վերաբերվում նրանց հանդեպ, ովքեր կասկածներ ունեն (5-10 բոպե):

Աստվածաշնչյան այս երեք օրինակներն էլ հստակ ցույց են տալիս, թե ինչպես է Աստված վերաբերվում նրանց հետ, ովքեր կասկածներ ունեն: Աստված չի անտեսում կասկածները: Նա ուղղակիորեն գործ է ունենում նրանցից յուրաքանչյուրի հետ: Նա խստորեն չի քննադատում նրանց, կամ հանդիմանում հավատի պակասության համար: Կասկածները չեն հանդիսանում «ամենավատ մեղքը», որը դու կարող ես գործել: Կյանքի իրականությունն այն է, որ շատ մարդիկ կասկածներ են ունենում: Այս բոլոր երեք դեպքերում էլ այդ մարդիկ որոշեցին մի կողմ դնել իրենց կասկածներն ու ընդունել Աստծո օգնությունը: Նրանք համառորեն չկառչեցին իրենց հարցերից այն բանից հետո, երբ Աստված պատասխան տվեց նրանց:

8

Սակայն մենք պետք է զգույշ լինենք, որպեսզի հանկարծ չմերժենք Աստծո օգնությունը: Նրա բարկությունն ուղղված է նրանց հանդեպ, ովքեր չեն ուզում վստահել Իրեն և շարունակում են հարցականի տակ դնել Իր մաքրությունը: Իսրայելցիները, ովքեր Եգիպտոսից գնում էին դեպի Ավետյաց երկիր, մեղավոր էին անհավատության մեջ: Տե՛ս Սաղմոս 95:8-10-ը:

15. Անձնական կիրառություն:

Թող ուսանողները գրեն իրենց ունեցած մեկ կամ երկու կասկածի մասին: Մինչև հաջորդ դասաժամը թող նրանք անցնեն հինգ քայլից բաղկացած ծրագրով, որը տրված է Ուսանողի ձեռնարկի 62-63-րդ էջերում: Նրանք պետք է պատասխաններ գրեն դրանց՝ հատկապես 3-րդ և 5-րդ կետերի համար: Թող նրանք այդ հանձնարարությունը բերեն հաջորդ դասաժամին՝ քննարկելու համար, թե ինչպես կարելի է ազատվել կասկածներից:

16. Հանձնարարություններ:

Ա. Գնահատակա՛ն դիր Ուսուցման ուղեցույցի 8-րդ և 9-րդ նախագծերի համար, եթե անցյալ դասաժամին չես գնահատել:

Բ. Գնահատակա՛ն դիր Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 5-րդի համար. **«Գրի՛ր քո պատմությունը»**:

17. Դասի գնահատում:

Խնդրում եմ՝ գրի՛ր մտքեր այս դասի բարելավման համար:
Ո՞ր հատվածներն էին լավագույնս աշխատում:
Ո՞ր մասերն էին ուսանողների համար դժվարհասկանալի:
Ի՞նչն ամենաօգտակարը թվաց քո ուսանողներին:

Դաս 9.
Ազատվել կասկածներից. մաս 2

1. Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն:

Ես կարող եմ ազատվել ճշմարիտ քրիստոնյա լինելու վերաբերյալ իմ կասկածներից, եթե զարգացնեմ մի ծրագիր՝ հաղթահարելու համար այն խնդիրները, որոնք առաջացնում են այդ կասկածները:

2. Բանալի համար. Սաղմոս 94:19.

«Իմ ներսում մտահոգություններիս (անգլ.՝ կասկածներիս) շատանալու պահին Քո մխիթարություններն ուրախացնում էին իմ անձը»:

3. Հղում ուսանողական նյութերին:

Ուսանողի ձեռնարկի 4-րդ գլուխը համընթաց է այս դասի հետ: Ուսանողի ձեռնարկի Նախագիծ 12-րդը՝ «**Փարատել կասկածները**», կօգտագործվի այս դասի հետ: Եթե ժամանակը թույլ տա, մենք կարող ենք օգտագործել նաև Նախագիծ 5-րդը. «**Գրի՛ր քո պատմությունը**»:

4. Դասի ջերմացում. Եթե ես այս գիշեր մահանամ:

Դասը սկսի՛ր՝ յուրաքանչյուր ուսանողի խնդրելով պատասխանել ստորև բերված հարցին: Մի՛ պահանջիր, որ նրանք բարձրաձայն պատասխանեն դասարանի առաջ: Դու կարող ես պատճենահանել հարցը և տալ նրանց՝ առանձին լրացնելու համար: Նախապես տեղյա՛կ պահիր՝ հավաքելո՞ւ ես այս աշխատանքը, թե՞ ոչ:

Եթե դու այս գիշեր մահանայիր, վստա՞հ ես, որ կգնայիր երկինք:
Համառոտ բացատրի՛ր, թե ինչու ես դու ընտրել այդ պատասխանը:

_____1. Այո՛, ես շատ վստահ եմ Աստծո հետ իմ փոխհարաբերության հարցում, և միանշանակ համոզված եմ, որ ես երկինք կգնայի:

_____2. Երբեմն ես կասկածում եմ, կգնայի՞ երկինք, թե՞ ոչ:

_____3. Ես այնքան էլ վստահ չեմ, որ եթե այս գիշեր մահանայի, երկինք կգնայի:

_____4. Ես չեմ ուզում այդ մասին մտածել:

9

Մենք, սովորաբար, ցանկանում ենք դասի ջերմացման գործողությանբ օգնել ուսանողներին, որ նրանք բացվեն և ներգրավվեն դասի քննարկման մեջ: Սա կարող է շատ մտահոգիչ կամ տագնապալի լինել որոշ մարդկանց համար, ովքեր վստահ չեն Հիսուսի հետ իրենց փոխհարաբերության հարցում: Լարվածությունը թուլացնելու ձևը նկարագրելն է, թե ինչպես դու կպատասխանեիր այս հարցին քո կյանքի տարբեր ժամանակահատվածներում: Բացատրի՛ր, թե երբ դու կընտրեիր այդ կետերից յուրաքանչյուրը, և ասա՛, թե ինչպե՛ս և ինչո՛ւ դու տեղափոխվեցիր մի փուլից մյուսը:

Եթե կարծում ես, որ ուսանողների համար օգտակար կլինի, ապա կարող ես նրանց հարցնել, թե արդյո՞ք ինչ-որ մեկը կցանկանար դասարանի հետ կիսվել իր պատասխանով: Թող նրանք բացատրեն, թե ինչու են ընտրել տվյալ պատասխանները:

5. **Ուսումնասիրե՛ք կասկածների հաղթահարման՝ հինգ քայլից բաղկացած ծրագիրը** (5-10 րոպե), Ուսանողի ձեռնարկ, 62-63-րդ էջեր:

Անցի՛ր կասկածներից ազատվելու՝ հինգ քայլից բաղկացած ծրագրով, որը տրված է Ուսանողի ձեռնարկի 62-63-րդ էջերում: Մեկ կամ երկու օրինա՛կ բեր քո կյանքից, թե ինչպես ես դու հետևել այդ ծրագրին: Կիսվի՛ր նաև արդյունքներով. իրո՞ք քո լուծումները գործեցին: Որքա՞ն ժամանակ: Մի՛ վախեցիր կիսվել թե՛ ձախողումներով, թե՛ հաջողություններով:

6. **Քննարկի՛ր կասկածների <u>պատճառները</u> Նախագիծ 12-րդ, Դեպք 1-ինում*** (10-15 րոպե)

Հատուկ նշում. դու կարող ես նշել այն տարբեր պատասխանները, որոնք քո ուսանողները տալիս են դասի այս հատվածում: Այս երկու դեպքերի ուսումնասիրման վերաբերյալ նրանց արտահայտած մտքերը կարող են քեզ համար պիտանի լինել, երբ հաջորդ անգամ այս դասն ուսուցանելու լինես:

Թող տարբեր ուսանողներ կիսվեն իրենց պատասխաններով, որոնք տվել են Նախագիծ 12-րդ, Դեպք 1-ինի ուսումնասիրության վերաբերյալ: Փորձի՛ր քննարկումն ազատ թողնել, որպեսզի տարբեր հնարավոր պատասխաններ ինչեն: Նրանց պատասխանները քննարկելուց հետո մի քանի րոպե հատկացրո՛ւ՝ ուսումնասիրելու համար կասկածների պատճառները հայտնաբերելու վերաբերյալ չորս քայլերից բաղկացած ծրագիրը: Ծրագիրը գտնվում է Ուսանողի ձեռնարկի 60-61-րդ էջերում: Թող քո ուսանողները քննարկեն, թե ինչպես կարող էր Աննան գտնել իր կասկածների պատճառները՝ օգտագործելով այս ծրագիրը:

Երբ դու կողմնորոշվես, թե որն էր, քո կարծիքով, Աննայի կասկածների պատճառը, որոշի՛ր, թե որ դասակարգին է այն լավագույնս համընկնում.

- Գիտելիքի պակաս:
- Հասկանալու պակաս:
- Վարվելու պակաս:

Թող ուսանողները հիմնավորեն իրենց պատասխանները, թե ինչո՛ւ են այդ ընտրությունը կատարել: Եթե ճիշտ են հասկացել Աննայի կասկածների պատճառները, նրանց համար պետք է որ հեշտ լինի արդյունավետ տարբերակներ առաջարկել Աննային, թե ինչպես կարող է ազատվել իր կասկածներից:

7. **Քննարկի՛ր կասկածների <u>լուծումները</u> Նախագիծ 12-րդ, Դեպք 1-ինի վերաբերյալ** (10-15 րոպե):

Թող ուսանողները կիսվեն իրենց գաղափարներով՝ կապված Աննայի կասկածների լուծումների հետ Ուսուցման ուղեցույցի Նախագծի 12-րդ, Դեպք 1-ինում: Նրանց պատասխանները, հավանաբար, կհամապատասխանեն այն խնդիրներին, որոնք թվարկել էին այդ դեպքի ուսումնասիրության առաջին հարցին անդրադառնալիս: Նրանց լուծումներից շատերը, հնարավոր է, լինեն երկարաժամկետ նպատակներ: Եթե այդպես է, խնդրի՛ր նրանց՝ տալ կոնկրետ նպատակներ, որոնք Աննան կարող էր իրականացնել հաջորդ մի քանի օրերում, որպեսզի ազատվեր այդ խնդիրներից:

9

Փորձի՛ր նրանց օգնել, որ մտածեն իրենց առաջարկած նպատակների իրագործման հետևանքների մասին: Դրանք իրատեսակա՞ն նպատակներ են: Գուցե նրանք չափից ավելի են հոգնորացրել տվյալ խնդիրը:

8. **Քննարկի՛ր կասկածների <u>պատճառները</u> Նախագիծ 12-րդ, Դեպք 2-րդում*** (10-15 րոպե)**:**

Թող տարբեր ուսանողներ կիսվեն իրենց պատասխաններով, որոնք տվել են Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 12-րդ, Դեպք 2-րդի 1-ին հարցին: Փորձի՛ր քննարկումն ազատ պահել, որպեսզի տարբեր հնարավոր պատասխաններ հնչեն: Քննարկի՛ր, թե Դավիթն ինչպես կարող էր գտնել իր կասկածների պատճառները՝ օգտագործելով չորս քայլերից բաղկացած ծրագիրը, որը տրված է Ուսանողի ձեռնարկի 60-61-րդ էջերում:

Երբ դու կողմնորոշվես, թե որն էր, քո կարծիքով, Դավթի կասկածների պատճառը, որոշի՛ր, թե որ դասակարգին է այն լավագույնս համընկնում.

- Գիտելիքի պակաս:
- Հասկանալու պակաս:
- Վարվելու պակաս:

Թող ուսանողները հիմնավորեն իրենց պատասխանները, թե ինչու են տվյալ ընտրությունը կատարել: Եթե ճիշտ են հասկացել Դավթի կասկածների պատճառները, նրանց համար պետք է որ հեշտ լինի արդյունավետ տարբերակներ առաջարկել նրան, թե ինչպես կարող է ազատվել իր կասկածներից:

9. **Քննարկի՛ր կասկածների <u>լուծումները</u> Նախագիծ 12-րդ, Դեպք 2-րդի վերաբերյալ** (10-15 րոպե):

Թող ուսանողները կիսվեն իրենց գաղափարներով՝ կապված Դավթի կասկածների լուծումների հետ՝ Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 12-րդ, Դեպք 2-րդի շրջանակներում: Նրանց պատասխանները հավանաբար կհամապատասխանեն այն խնդիրներին, որոնք նրանք թվարկել էին նշված դեպքի ուսումնասիրության առաջին հարցի առումով: Օգտագործի՛ր նույն խորհուրդները, որ նրանք տվեցին Աննայի դեպքի ուսումնասիրության ժամանակ՝ գնահատելու համար այն լուծումները, որոնք առաջադրվել են Դավթի կասկածները փարատելու նպատակով:

10. **Քննարկի՛ր քո ուսանողների կողմից բերված կասկածների դեպքերը** (10-15 րոպե):

Վերջին դասաժամի Անձնական կիրառություն բաժնում ուսանողներին առաջարկվում է գրել, թե ինչպես են գնահատում իրենց կյանքում ունեցած կասկածներից որևէ մեկը: Նրանք պետք է թվարկեն այն խնդիրները, որոնք առաջացնում են այդ կասկածները, և հնարավոր լուծումները՝ այդ կասկածներից ազատվելու համար: Խնդրի՛ր ուսանողներին՝ դասարանի համար կամավոր կերպով կարդալ իրենց խնդիրն ու առաջարկած լուծումը: Թող մյուսները գնահատեն տվյալ ուսանողի բերած օրինակը:

1. Քո կարծիքով, այդ ուսանողը ճի՞շտ էր սահմանել կասկածների պատճառ հանդիսացող խնդիրը:
2. Կա՞ն հնարավոր այլ պատճառներ:
3. Այդ ուսանողը իրատեսակա՞ն քայլեր էր մտածել իր կասկածները փարատելու համար:
4. Այդ նպատակները բավականաչափ պարզ ու հստակ են, որպեսզի նա կարողանա այս շաբաթ սկսել:
5. Նպատակները չափելի՞ են:
6. Ի՞նչ դեր ունի Աստված այդ լուծման գործընթացում:
7. Ուսանողը չափից ավելի՞ է թողնում Աստծո վրա, կամ միգուցե հակառակը՝ Աստված դո՞ւրս է թողնված լուծման ծրագրից:

9

Եթե ժամանակ ունես, թո՛ւյլ տուր մի քանի ուսանողների՝ կիսվել իրենց կասկածներով, և նորից անցե՛ք գնահատման նույն գործընթացով: Ուսանողներին հիշեցրո՛ւ, որ հետևեն Հուդա առաքյալի խորհրդին. **Հուդա 1:22. «Ոմանց հանդեպ, որ կասկածում են, ողորմա՛ծ եղեք»:** Այնպե՛ս արա, որ ուսանողների մեկնաբանությունները լինեն դրական և օգտակար:

11. **Ուսումնասիրե՛ք կասկած առաջացնող խնդիրները** (5-10 րոպե):

Կարող է օգտակար լինել տասը խնդիրների վերանայումը, որոնք տրված են Ուսանողի ձեռնարկի 53-60-րդ էջերում: Սրանք սովորական խնդիրներ են, որոնք հաճախ են քրիստոնյաների մոտ կասկածներ առաջացնում: Քննարկի՛ր, թե ինչպես են այդ խնդիրները կասկածներ առաջացնում, և թե ինչպես կարող են դրանք փարատվել:

Դու կարող ես կիսվել նախկին ուսանողների օրինակներով. ինչպես են նրանք արձագանքել կասկածներին: Սա հատկապես տեղին կլինի, եթե քո ուսանողները հարմար չհամարեն դասարանի առաջ կիսվել իրենց օրինակներով:

Դեպքերը քննարկելիս շեշտի՛ր Աստվածաշնչի անձնական ուսումնասիրության արժեքը՝ որպես կասկածներից ազատվելու կարևոր մաս: Կարևորը կասկածներից ազատվելու Աստծո ճանապարհը գտնելն է. Նրա ճանապարհները շատ ավելի լավն են, քան մենք կարող ենք առաջարկել:

Քաջալերի՛ր նրանց, որ գտնեն, թե ինչ է ասում Աստված կասկածներ առաջացնող խնդիրների վերաբերյալ: Ցո՛ւյց տուր, թե ինչպես կարող են դա անել:

9

12. **Օգնել մյուսներին, ովքեր կասկածներ ունեն** (5-10 րոպե):

Քաջալերի՛ր ուսանողներին՝ օգնել մյուսներին, ովքեր պայքարներ ունեն կասկածների հետ: Հաճախ նորադարձ քրիստոնյան ամենահեշտն է կարողանում հասկանալ մեկ այլ քրիստոնյայի պայքարները, քանի որ ինքն էլ է դրանցով անցնում: Եթե ժամանակ ունես, ապա կարող ես նայել, թե ինչպես վարվեց Հիսուսը այն մարդկանց հետ, ովքեր կասկածներով եկան Իր մոտ:

Երիտասարդ հարուստ իշխանը. Ղուկաս 18:18-30:

Պետրոսը, երբ քայլում էր ջրի վրայով. Մատթեոս 12:22-33:

Թովմասը, որ կասկածում էր Հիսուսի հարությանը: Հովհաննես 20:19-31:

Դու դասարանը բաժանի՛ր երեք խմբի և հանձնարարի՛ր, որ նորից անդրադառնան աստվածաշնչյան այս օրինակներին: Թող նրանք գրեն օգտակար մտքեր, որոնք մենք սովորել ենք Հիսուսի մոտեցումից, թե ինչպես Նա օգնեց կասկածող մարդկանց: Նրանք կարող են երկու ցուցակ կազմել.

1. Օգտակար քայլեր այն մարդկանց համար, ովքեր կասկածներ ունեն:
2. Գործողություններ, որոնք պետք չէ կատարել այն մարդկանց հանդեպ, ովքեր կասկածներ ունեն:

Այս բոլոր երեք դեպքերում էլ մենք տեսնում ենք, որ Հիսուսը նմանատիպ ձևով վարվեց: Նա չի արհամարհում նրանց կասկածները՝ որպես անմիտ կամ անկարևոր մի բան: Նա մեղմ է խոսում դիմացինի հետ: Հիսուսը ոչ մի ձևով չի ընդգծում Իր գերազանցությունը: Ոչ մի երկար քարոզ չի հնչեցնում, երբ նրանք ընդունում են իրենց կասկածները: Հիսուսը պարզ էր. տալիս է հստակ խորհուրդ, թե ինչպես ազատվել կասկածներից:

Ուսանողներին ասա՛, որ իրենք պարտավոր չեն բոլորի կասկածները լուծել: Նույնիսկ եթե նրանք տվյալ խնդրի համար լուծում չունեն, դեռևս կարող են երկու կարևոր բան անել: Առաջին. կասկածները փարատելու հոգատարությամբ լսել: Շատ անգամ կասկածների հետ պայքարող մարդուն մխիթարական է լսել, որ իր ունեցած պայքարներն աշխարհի վերջը չեն: Երկրորդ. նրանք կարող են քաջալերել: Ասա՛ նրանց, որ ընդունեն. «Տե՛ս, ես քո խնդրի լուծումը չունեմ, բայց ես ուզում եմ, որ իմանաս՝ ես անհանգստանում եմ քեզ համար: Ես կաղոթեմ քեզ համար: Ես գիտեմ, որ դու կարող ես հույսդ դնել Աստծո վրա, և Նա քեզ կօգնի: Ես նույնպես ամեն բան կանեմ քեզ օգնելու համար»:

Հորդորի՛ր նրանց՝ ուշադիր և զգույշ լինել, երբ ցանկանան փարատել մյուս քրիստոնյաների ունեցած կասկածները: Ասա՛ նրանց, որ չտան այսպիսի պատասխաններ. «Աղոթի՛ր, և քո բոլոր կասկածները կհեռանան»: Իհա՛րկե, աղոթքը շատ կարևոր մաս է կազմում Հիսուսի հետ քո փոխհարաբերության վերաբերյալ վստահություն ձեռք բերելու համար: Սակայն այս տեսակի մակերեսային պատասխանները երբմեն կարող են ավելի շատ վնաս հասցնել, քան օգուտ: Եթե նրանք ուշադիր լսեն և անկեղծորեն քաջալերեն կասկածող քրիստոնյաներին, ապա կարող են վստահ լինել, որ այսպիսի մոտեցումը, իրո՛ք, կարող է օգնել կասկածների դեմ պայքարող անձնավորությանը:

9

13. **Ամփոփում** (5-10 րոպե):

Տեղեկացի՛ր, թե արդյո՞ք նրանք հարցեր ունեն ողջ դասընթացի հետ կապված: Եթե դեռ ժամանակ ունես, ապա կարող ես ուսանողներից մեկին կամ երկուսին հնարավորություն տալ՝ դասարանի համար կարդալ իրենց աշխատանքը, որն արել են Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 5-րդի՝ **«Գրի՛ր քո պատմությունը»** բաժնի վերաբերյալ: Եթե այս նախագծերը ճիշտ են կատարվել, ապա ուսանողները պետք է ի վիճակի լինեն հստակ բացատրելու մեկ այլ անձնավորության, թե ինչպես կարելի է ճշմարիտ քրիստոնյա դառնալ:

14. **Անձնական կիրառություն** (5 րոպե):

Ա. Քաջալերի՛ր նրանց, որպեսզի աշխատեն հատուկ նպատակների վրա՝ իրենց կյանքում կասկածներ առաջացնող խնդիրները հաղթահարելու նպատակով:

Բ. Թող ուսանողները զույգեր կազմեն և միմյանց հետ կիսվեն այն տարբերակների (թեկուզ մեկ) շուրջ, որոնցով այս դասընթացը նրանց օգնեց հասկանալ, որ իրենք ճշմարիտ քրիստոնյա են: Վերջում թող մեկմեկու համար աղոթեն:

15. **Հանձնարարություններ:**

Գնահատակա՛ն դիր Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 12-րդի՝ «**Փարատել կասկածները**» բաժնի համար, և մյուս նախագծերի, որոնք դեռ չես գնահատել:

9

16. **Դասի գնահատում:**

Խնդրում եմ՝ գրի՛ր մտքեր այս դասի բարելավման համար:
Ո՞ր հատվածներն էին լավագույնս աշխատում:
Ո՞ր մասերն էին ուսանողների համար դժվարհասկանալի:
Ի՞նչն ամենաօգտակարը թվաց քո ուսանողներին:

Դաս 10.
Ստուգարք

1. **Ներկայացրո՛ւ հաջորդ դասընթացը, որն ուսուցանելու ես:**

   Ներկայացրե՛ք հաջորդ դասընթացը:

   Ա. Բաժանե՛ք Ուսուցման ուղեցույցը, կամ այլ նախագծեր, որոնք պետք է լրացվեն՝ նախքան դուք դրանք կուսուցանեք հաջորդ դասընթացի առաջին դասին:

   Բ. Թող ուսանողները բացեն իրենց նոր Ուսուցման ուղեցույցի վերջին էջը: Նրանք այնտեղ կգտնեն *Դասարանական Հանձնարարության Յուցակի* չլրացված բլանկի մի օրինակ: Ասացե՛ք նրանց յուրաքանչյուր հարցաշարի, նախագծի և ստուգարքի ժամկետները:

   Գ. Բաժանե՛ք նոր Ուսանողի ձեռնարկը և ասացե՛ք նրանց, թե որ էջն եք ուզում, որ նրանք կարդան՝ նախքան հաջորդ դասը սկսվելը:

2. **Ստուգա՛րք ընդունիր այս դասընթացի վերաբերյալ:**

3. **Վերադարձրո՛ւ քո գնահատած բոլոր հարցաշարերն ու նախագծերը, եթե դեռ չես արել:**

Ուսանողի ձեռնարկ

Ուսանողի ձեռնարկը ներառված չէ այս փաստաթղթում,
սակայն հասանելի է որպես առանձին փաստաթուղթ:

Ստուգի՛ր, թե «Ինչպե՛ս օգտագործել այս Ուսուցչի ձեռնարկը» բաժնի 5-րդ էջը՝ լրացուցիչ տեղեկությունների համար, և թե ինչպես օգտագործել Ուսանողի ձեռնարկը:

Ուսուցման ուղեցույց

Ուսուցման ուղեցույցը ներառված չէ այս փաստաթղթի մեջ,
սակայն հասանելի է որպես առանձին փաստաթուղթ:

Ստուգի՛ր, թե «Ինչպե՛ս օգտագործել այս Ուսուցչի ձեռնարկը» բաժնի 5-րդ էջը՝ լրացուցիչ տեղեկությունների համար, և թե ինչպես օգտագործել Ուսուցման ուղեցույցը:

Ստուգարք և Վկայական

Ստուգի՛ր, թե «Ինչպե՛ս օգտագործել այս Ուսուցչի ձեռնարկը» բաժնի 5-6-րդ էջը՝ լրացուցիչ տեղեկությունների համար, և թե ինչպես օգտագործել Ստուգարքն ու Վկայականը:

Անուն_____**Ինչպե՞ս կարող եմ իմանալ, որ ճշմարիտ քրիստոնյա եմ**

Ամսաթիվ_____ **Ստուգարք, 5-րդ խմբագրում**

Դասարան_____ _____**Գնահատական**

Ճիշտ-սխալ հարցեր (յուրաքանչյուրը 2 միավոր):

Ցուցումներ. Դի՛ր ____X____, եթե պատասխանը ճիշտ է:

Դի՛ր ____O____, եթե պատասխանը սխալ է:

1._____Նախքան դու կկարողանաս վստահ լինել, որ ճշմարիտ քրիստոնյա ես, պետք է հասկանաս, թե ինչ է նշանակում՝ լինել ճշմարիտ քրիստոնյա:

2._____Եթե դու ուզում ես ճշմարիտ քրիստոնյա լինել, ապա պետք է պատրաստակամ լինես՝ հնազանդվել Աստծուն:

3._____Դու ճշմարիտ քրիստոնյա ես, եթե զգում ես, որ ճշմարիտ քրիստոնյա ես:

4._____Փրկությունը հիմնված է փաստերի՝ Աստվածաշնչի փաստերի վրա:

5._____Դու կարիք չունես Աստծո հանդեպ հավատ ունենալ ճշմարիտ քրիստոնյա դառնալու համար:

6._____Եթե դու ճշմարիտ քրիստոնյա ես դարձել, ապա մոտ երկու տարի կտնի, նախքան որևէ իրական փոփոխություններ կտեսնես քո ապրելակերպի ու վերաբերմունքների մեջ:

7._____Ճշմարիտ քրիստոնյա լինելու առաջին նշաններից մեկն այն է, որ նա չի ցանկանա մյուսների հետ կիսվել, թե ինչ է անում Քրիստոսն իր կյանքում:

8._____Եթե Քրիստոսն է ղեկավարում քո կյանքը, ապա այն կլինի լիարժեք ու ամբողջական:

9._____Եթե դու ուզում ես վստահ լինել, որ ճշմարիտ քրիստոնյա ես, ապա ամեն օր, կամ ամեն եկեղեցական ժողովի ժամանակ պետք է Հիսուսին խնդրես, որ գա քո սրտի մեջ:

10._____Երկինք գնալու համար դու ընդամենը պետք է հավատաս, որ Հիսուսը բարի մարդ է եղել:

11._____Աստվածաշունչը մեզ ասում է, թե ինչպես կարող ենք ճշմարիտ քրիստոնյա դառնալ:

12._____Եթե դու ճշմարիտ քրիստոնյա ես, Սուրբ Հոգին քեզ կասի այդ մասին:

13._____Երբ դու դառնում ես ճշմարիտ քրիստոնյա, քո բոլոր խնդիրները նույն օրը վերանում են:

14._____Եթե դու դառնաս ճշմարիտ քրիստոնյա, Սուրբ Հոգին կօգնի և կսովորեցնի քեզ, որպեսզի ավելի ուժեղ քրիստոնյա դառնաս:

15._____Հիսուսն ուզում է դառնալ քո լավագույն ընկերը:

16._____Դու պետք է խնդրես Հիսուսին, որ ների քո մեղքերը, եթե ուզում ես ճշմարիտ քրիստոնյա դառնալ:

Բազմակի ընտրությամբ հարցեր:

Ընտրի՛ր ճիշտ պատասխանը և պատասխանի տառը դի՛ր գծիկի վրա (2 միավոր):

1._____Եթե կասկածներ ունես, թե արդյո՞ք ճշմարիտ քրիստոնյա ես, ապա դու պետք է.

Ա. Մոռանաս քո կասկածների մասին:

Բ. Հանձնես քո կասկածներն Աստծուն:

Գ. Ճնշես կամ անտեսես քո կասկածները:

Համառոտ պատասխանով հարցեր:

1. Թվարկի՛ր այն փաստարկները, որոնք դու պետք է իմանաս ճշմարիտ քրիստոնյա դառնալու համար (սրանք աստվածաշնչյան փաստարկներ են:) (8 միավոր, յուր. կետը 1 միավոր):

1._____

2._____

3._____

4._____

5._____

6._____

7._____

8._____

2. Ո՞ր երեք տեղերում մարդը կարող է փաստարկներ գտնել, որ ինքը ճշմարիտ քրիստոնյա է (9 միավոր, յուր. 3 միավոր):

ա._____

բ._____

գ._____

3. Գրի՛ր աստվածաշնչյան անգիր համարներ ու հղումներ (21 միավոր):

_____

_____

_____

_____

_____

_____

_____

4. Բացատրի՛ր, թե ինչ է նշանակում անձնական փոխհարաբերություն ունենալ Հիսուսի հետ (4 միավոր):

Ի՞նչ խորհուրդ կտաս դու:

Հավատացյալները մեծ մասամբ ժամանակ առ ժամանակ ունենում են կասկածներ, թե արդյո՞ք իրենք ճշմարիտ քրիստոնյա են: Ինչպե՞ս կարող ես օգնել այդ անձնավորություններին՝ լուծել իրենց խնդիրները և ազատվել կասկածներից:

1. Սամվելը Թին Չելենջի ուսանողներից է: Նրա ընկերուհին ճշմարիտ քրիստոնյա չէ և ուզում է, որ Սամվելը դադարեցնի ծրագրին իր մասնակցությունը: Ամեն անգամ, երբ Սամվելը զանգում է նրան, նա լաց է լինում և ասում, որ տուն գնա: Սամվելը չգիտի, թե ինչպես վարվի նրա հետ: Նրա ընկերուհին կարծես իր կյանքի այն մասը լինի, որը նա դեռևս չի հանձնել Հիսուս Քրիստոսին: Սա պատճառ է հանդիսանում, որ նա կասկածներ ունենա իր՝ ճշմարիտ քրիստոնյա լինելու հարցում: Ի՞նչ խորհուրդ կտայիր Սամվելին (4 միավոր):

2. Հովհաննեսը, ով վերջերս է ճշմարիտ քրիստոնյա դարձել, կասկածում է, թե արդյո՞ք նա շարունակում է ճշմարիտ քրիստոնյա լինել: Նա մեկ այլ խնդիր էլ ունի: Դեռևս շարունակում է «հին» ձևով խոսել և փողոցային բառեր օգտագործել: Նա մտածում է, որ չպետք է փողոցային բառեր օգտագործի, որովհետև հասկացել է, որ հայհոյելը մեղք է: Ի՞նչ խորհուրդ կտայիր Սամվելին (4 միավոր):

3. Անցյալ շաբաթ Սուսաննան գաղտնի ընդունել է Հիսուսին, երբ ավտոբուսով գնում էր գործի: Դա նրա համար մի մեծ ապրում էր: Սակայն հիմա նա այնքան էլ վստահ չէ այդ ամենի վերաբերյալ (4 միավոր):

ա. Ո՞րն է նրա խնդիրը: _____

_____

բ. Ի՞նչ պետք է նա անի դրա հետ կապված: _____

_____

_____

4. Ժաննան ատում է իր հորը՝ իրեն ծեծելու համար: Նա նոր է անձնապես ընդունել Հիսուս Քրիստոսին: Երբ նա իր հորը պատմեց այդ մասին, վերջինս ասաց. «Ինչպե՞ս կարող ես դու ճշմարիտ քրիստոնյա լինել, եթե ատում ես ինձ»: Ժաննան մտածեց այդ մասին ու ինքն իրեն հարցրեց. «Իրո՞ք ես ճշմարիտ քրիստոնյա եմ» (4 միավոր):

ա. Ո՞րն է Ժաննայի խնդիրը:_____

_____

բ. Ո՞րն է լուծումը: _____

_____

_____

5. Հովսեփը հորից 300 դոլար էր գողացել: Հիմա, երբ նա ճշմարիտ քրիստոնյա է դարձել, իրեն մեղավոր է զգում դրա համար: Նա չի ուզում հոր հետ այդ հարցը լուծել, դրա համար էլ մտածում է, որ ինքը, միգուցե, կեղծ հավատացյալ է: Ի՞նչ պետք է անի նա (4 միավոր):

_____

_____

_____

_____

6. Հիմա, երբ Հասմիկը ճշմարիտ քրիստոնյա է դարձել, գիտակցում է, որ չափազանց շատ է հպարտանում իր երկար, մինչև մեջքը հասնող մազերով: Եթե նա ինչ-որ բան չանի իր հպարտության խնդրի հետ, ի՞նչ կարող է պատահել նրա հոգևոր կյանքում (4 միավոր):

_____

_____

_____

_____

_____

_____

Ինչպե՞ս իմանամ, որ ճշմարիտ քրիստոնյա եմ
Ստուգարք 5
Պատասխաններ

Էջ 1.

Ճիշտ-սխալ հարցեր (յուրաքանչյուրը 2 միավոր):

1. X ճիշտ
2. X ճիշտ
3. O սխալ
4. X ճիշտ
5. O սխալ
6. O սխալ
7. O սխալ
8. X ճիշտ
9. O սխալ
10. O սխալ
11. X ճիշտ
12. X ճիշտ
13. O սխալ
14. X ճիշտ
15. X ճիշտ
16. X ճիշտ

Էջ 2.

Բազմաթիվ ընտրությամբ հարցեր (2 միավոր):

1. Բ.

Ինչպե՞ս իմանամ, որ ճշմարիտ քրիստոնյա եմ
Ստուգարք 5
Պատասխաններ

էջ 2. (շարունակելի)

Համառոտ պատասխանով հարցեր

1. 8 միավոր (յուր. 1 միավոր):
    1. Աստված կա:
    2. Աստվածաշունչը ճիշտ է:
    3. Ես մեղավոր եմ:
    4. Աստված սիրում է ինձ և ուղարկել է Հիսուսին՝ մահանալու ինձ համար:
    5. Հիսուսը միակն է, ով կարող է ներել իմ մեղքերը:
    6. Մեղքի պատիժը մահն է:
    7. Ես կարող եմ փրկվել՝ խնդրելով Հիսուսին, որ ների ինձ:
    8. Ես պետք է թույլ տամ Հիսուսին՝ լինել իմ կյանքի Առաջնորդը:

2. 9 միավոր (յուր. 3 միավոր):
    1. Աստվածաշունչը
    2. Սուրբ Հոգին
    3. Իմ կյանքի փոփոխությունները

3. 21 միավոր (յուր. համարը 7 միավոր):

    Հռոմեացիներին 8:16

    Հովհաննես 1:12

    Հակոբոս 1:5-6

Ինչպե՞ս իմանամ, որ ճշմարիտ քրիստոնյա եմ
Ստուգարք 5
Պատասխաններ

Էջ 3.

4. 4 միավոր (Մի քանի ձևեր կան, որոնցով ուսանողները կարող են մոտենալ այս հարցին: Ճկունությո՛ւն դրսևորիր նրանց պատասխանների համար գնահատական դնելիս: Ահա Ուսանողի ձեռնարկում ներկայացված այն քայլերը, որոնք օգնում են Հիսուսի հետ անձնական փոխհարաբերություններ զարգացնելուն):

    1. Երկու կողմն էլ պետք է ցանկանան ունենալ այս փոխհարաբերությունը:
    2. Սովորի՛ր հաղորդակցվել Հիսուսի հետ:
    3. Սովորի՛ր վստահություն և անկեղծություն զարգացնել:
    4. Սովորի՛ր հարգել և սիրել Նրան:

Գործողություն՝ «Ի՞նչ խորհուրդ կտաս դու»:

(Առաջարկվող պատասխաններ բոլոր վեց գործողությունների համար):

1. (4 միավոր) Նա պետք է իր կյանքի այդ ասպարեզը (իր ընկերուհուն) հանձնի Աստծուն:
2. (4 միավոր) Նա պետք է հրաժարվի այդ մեղքից:

Էջ 4.

3. 4 միավոր (2 մասով պատասխան):

    Ա. Նա թաքցնում է այն փաստը, որ դարձել է ճշմարիտ քրիստոնյա: Հիմա նա կասկածում է, թե արդյո՞ք ինքը ճշմարիտ քրիստոնյա է:

    Բ. Պատմի մարդկանց, որ դարձել է ճշմարիտ քրիստոնյա:

4. 4 միավոր (2 մասով պատասխան):

    Ա. Նա դառնություն ունի:

    Բ. Նա պետք է ների իր հորը:

5. (4 միավոր) Պատմի հորը իրականությունը և ներում խնդրի:
6. (4 միավոր) Նա կարող է պարտություն կրել հոգևոր կյանքում:

Շնորհավորում ենք

_____

-ին, առ այն, որ նա ավարտել է

Ինչպե՞ս կարող եմ իմանալ, որ ճշմարիտ քրիստոնյա եմ

դասընթացի ուսումնական պահանջները:
Մենք գնահատում ենք Ձեր մասնակցությունը այս դասընթացին և հուսով ենք, որ Դուք հաջողությամբ կշարունակեք Ձեր կյանքում կիրառել այն աստվածաշնչյան ուսուցումները, որոնք դուք սովորել եք այս դասընթացի ընթացքում:

Ուսուցիչ _____

Ամիս, ամսաթիվ _____

Շնորհավորում ենք

_____

-ին, առ այն, որ նա ավարտել է

Ինչպե՞ս կարող եմ իմանալ, որ ճշմարիտ քրիստոնյա եմ

դասընթացի ուսումնական պահանջները:
Մենք գնահատում ենք Ձեր մասնակցությունը այս դասընթացին և հուսով ենք, որ Դուք հաջողությամբ կշարունակեք Ձեր կյանքում կիրառել այն աստվածաշնչյան ուսուցումները, որոնք դուք սովորել եք այս դասընթացի ընթացքում:

Ուսուցիչ _____

Ամիս, ամսաթիվ _____